



Հիմնադիր և հրատարակիչ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅՈՒՆ

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

№ 118 2020

ՀՀ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՒԿԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Տպագրվում է 1997 թվականից, ՀՀ գլխավոր դատախազ Հենրիկ Խաչատրյանի նախաձեռնությամբ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Դավիթ Մելքոնյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ղոցենտ (խորհրդի նախագահ)

Հովհաննես Սրբեփանյան Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պետաիրավական հետազոտությունների բաժնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Աշոտ Եսայան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի օգնական, Խ.Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետի դասախոս, ղոցենտ (գլխավոր խմբագիր)

Գառնիկ Սաֆարյան Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Գևորգ Բաղդասարյան Երևան քաղաքի դատախազ, իրավ. գիտ. թեկնածու

Արման Թաթոյան Հայաստանի Հանրապետության մարդու իրա վունքների պաշտպան, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ղոցենտ (համաձայնությամբ)

Արմեն Մարուխյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ, իրավ. գիտ. թեկնածու

Ռուբեն Մելիքյան իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ղոցենտ

Գևորգ Դանիելյան ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Գլխավոր խմբագիր՝ Ա. ԵՍԱՅԱՆ

Հանդեսը ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՀ) կողմից ընդգրկված է թեկնածուական (1999 թ.) և դոկտորական (2002 թ.) ատենախոսությունների հիմնադրույթների հրապարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

Գլխավոր խմբագրի հասցեն.
0010 ք. Երևան, Վ. Սարգսյան 5
Հեռախոս՝ 511-640
Էլ. հասցե՝ ashot@yessayan.am,
orinakanutyun@prosecutor.am
www.prosecutor.am
ISSN 1829-4219

© Համակարգչային շարվածքը,
ոճը, տառաձևերը և էջադրումը՝
«ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

Հանձնված է արտադրության՝ 03.08.2020 թ.
Ֆորմատ՝ 60x84 1/8
Տպաքանակը՝ 500
Ծավալը՝ 5,5 տպ. մամուլ
Գրանցման վկայական՝ N 688

Տպագրված է
«Տիր» հրատարակչության տպարանում
Երևան, Ա. Միկոյան 2/2

© «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», 2020 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ

ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանի շնորհավորական ուղերձը դատախազության աշխատողի օրվա և ՀՀ դատախազության կազմավորման 102-ամյակի առթիվ.....3

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Նելլի Աշրաֆյան Հաշտեցման ինստիտուտը արտասահմանյան երկրների քրեական օրենսդրությունում.....5

Սևակ Պողոսյան Հանցակցության հասկացությունն ու հատկանիշները.....12

Էլյա Կարապետյան Երեխայի դաստիարակելու պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու կրիմինոլոգիական բնութագիրը ՀՀ-ում.....17

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Սերժ Ռուշանյան ՀՀ վճարելի դատարանի նախադեպային դիրքորոշումների ռեթրոակտիվությունը (կիրառությունը ժամանակի մեջ) Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արտահայտած դիրքորոշումների լույսի ներքո.....23

ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Դավիթ Զիֆիմյան Հանցավոր ենթամշակույթը որպես իրավապահական մարմինների նախկին աշխատակից դատապարտյալներին անջատ պահելու օբյեկտիվ գործոն.....35

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Милена Саргсян Практические проблемы определения правовой природы торгов как способа заключения договора или как способа выбора предпочтительного контрагента.....43

Արթուր Վարդանյան Գյուղատնտեսական կոոպերատիվների կառավարման մարմինների ընդհանուր բնութագիրը.....51

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Անի Միքայելյան Մ իմյանց հետ կապված գործերի ընդդատությունը որպես տարածքային ընդդատության ինքնուրույն տեսակ.....57

ՄԱՔՍԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Սյուզաննա Վարդանյան ՀՀ տարածք ներմուծված ապրանքների ապրանքի մաքսային արժեքի որոշման առանձնահատկությունները.....67

ՍԵՂՄԱԳՐԵՐ

Սեղմագրեր / Абстракты / Abstracts.....75

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՀ դատախազության «Օրինականություն» գիտագործնական և ուսումնական հանդեսում տպագրվող հոդվածներին ներկայացվող պահանջները.....87

ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉ ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ՕՐՎԱ ԵՎ ՀՀ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ 102-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Դատախազության սիրելի՛ աշխատակիցներ, գործընկերներ, համակարգի հարգելի վետերաններ:

Ձերմոտեն շնորհավորում եմ բոլորիս՝ Դատախազության աշխատակցի օրվա, ՀՀ դատախազության համակարգի կազմավորման 102-րդ ամյակի կապակցությամբ:

Յավոք, մոլեգնած կորոնավիրուսային համավարակի պատճառով, բոլորիս առողջության և անվտանգության հրամայականից ելնելով, այս տարի ստիպված եղանք հրաժարվել ՀՀ գլխավոր դատախազությունում հավաքվելու, ջերմ մթնոլորտում իրար անձնապես շնորհավորելու, մեր անցած ճանապարհն արժևորելու, ձեռքբերումները, բացթողումները համատեղ գնահատելու և նոր նախանշումներ կատարելու գեղեցիկ ավանդույթից՝ վստահությամբ, որ գալիք տարում համավարակը հաղթահարելու ուրախությամբ կլրացնենք այդ բացը:

Մեր ժողովրդի հետ կիսելով այս իրավիճակի հարուցած բոլոր բարդություններն ու սահմանափակումները՝ դուք անխոնջ շարունակում եք կատարել Ձեր մասնագիտական պարտքը՝ առաջնորդվելով մեր երկրի իրավական անվտանգությունն ապահովելու, հանցավորության դեմ պայքարը որևէ պարագայում չթուլացնելու հրամայականով:

Շնորհակալ եմ Ձեր ցուցաբերած տոկոսության, իրավական պետության կերտմանը ձեր հավատարմության և դատախազության իբրև միասնական օրգանիզմի գաղափարը գործի ու արդյունքի վերածելու ձեր ընդհանրական համոզմունքի համար:

Հպարտությամբ եմ արձանագրում ծառայության ընթացքում բոլոր տեսակի վայրիվերումների, տարբեր շրջանակների կողմից տարատեսակ մանիպուլյացիաներով մեզ հավասարակշռությունից հանելու փորձերի, շատ դեպքերում դատախազության իրավասություններից ու գործառույթներից ճշացող անտեղյակությամբ համեմված անհիմն մեղադրանքների հանդեպ ձեր խորին զսպվածությունն ու չեզոքությունը, բացառապես մասնագիտական դաշտում մնալու ձեր ընդհանրական վարքագիծը, որը համակարգի կայունության, կենսունակության կարևոր

րագույն գրավականներից է:

Շնորհակալություն ահռելի ծանրաբեռնվածության ու պատասխանատվության բեռի պայմաններում հանուն ձեր մասնագիտական ու պաշտոնեական պարտականությունների բարեխիղճ և ազնվիրաբար կատարման, ցուցաբերած համբերատարության համար, այն զոհողությունների համար, որոնք ձեզ հետ միասին լուռ արժանապատվությամբ կիսում են ձեր ընտանիքի անդամները, ամենահարազատ ու մտերիմ մարդիկ:

Այսօրվա խորհուրդը բացառիկ է նրանով, որ ազդարարում է դատախազության՝ 21-րդ դարի 3-րդ տասնամյակ թևակոխումը, ինչը մեզնից պահանջում է իրավական մտքի զարգացմանը, հանցավորության դեմ պայքարի արդի մարտահրավերներին, իրավական պետության կառուցման, իրավակարգի ամրապնդման մեր ժողովրդի իդեալներին և ձևակերպած նորովի պահանջներին ընդառաջ համակարգային զարգացման տեսլականի արդիականացում:

Դատախազությունը քրեական վարույթի ողջ շարժընթացը հսկող, իրավահենության արժեքներով առաջնորդվող սլաքավարն է, որն իր ամենօրյա, մեծամասամբ անտեսանելի աշխատանքով կենսագործում է օրենքի գերակայության, իրավահավասարության, պատժի անխուսափելիության, պետության գույքային իրավունքների պաշտպանության հիմնարար գաղափարները:

Նոր տասնամյակում դատախազությունը լիարժեքորեն պետք է իրացնի քրեական քաղաքականության արդիականացման յուրօրինակ «ուղեղային կենտրոնի» դերը: Մեր նախընթաց գործունեությամբ, արդեն դրել ենք դրա հիմքերը՝ անգամներով բազմապատկերով օրենսդրական, ենթաօրենսդրական ակտերում փոփոխությունների նախաձեռնություններով հանդես գալը, միջազգային փորձի հենքին մշակվող և Վճռաբեկ դատարան ներկայացվող այնպիսի միջնորդությունները, որոնցում արտահայտված իրավական դիրքորոշումների հիման վրա կարող է զարգանալ ներպետական նախադեպային իրավունքը:

Մեր հիմնական առաջնահերթություն-

ներից է մնում քրեադատավարական գործունեության միասնականության, կանխատեսելիության և որոշակիության ապահովումը, օրենքի առջև ընդհանուր հավասարության, իրավունքի գերակայության սահմանադրական սկզբունքների անշահախնդիր կենսագործման մեր հավատամքի հանդեպ հանրային վստահության և աջակցության ամրապնդումը: Քրեական դատավարությունում հանրային և մասնավոր շահերի ողջամիտ հավասարակշռման մեր առանցքային գործառույթի անշեղ իրականացումը պիտի հանգեցնի իրապես օրինականության սկզբունքներին դատախազության և յուրաքանչյուր դատախազի նվիրվածության հանրային ընդհանրական գիտակցության և հավատի ձևավորմանը: Այս ճանապարհին մեր իրավասությունների բարեխիղճ իրականացումը բավարար չէ, այլ պետք է տեսանելի դառնա այդ արժեքներին ամեն օր հավատարմորեն ծառայելով, մեր մաքրակենցաղությամբ, օրինապաշտության ու պետականապաշտության, քաղաքացիական պատասխանատվության անձնական օրինակով:

Պատմական ամենաառանցքային շրջափոխություն, երկրի համար շրջադարձային փոփոխությունների շրջաններում դատախազությունը բացառիկ կարևոր դերակատարում է ստանձնել: Եվ այսօր էլ մենք լիարժեք պատասխանատվություն ենք վերցրել ներքին իրավական կայունության ապահովման, հանրության ու պետության օրինական շահերի վերականգնման ու պաշտպանության հարցում:

Մենք հպարտությամբ ստանձնել ենք միջազգային պարտավորություններին և օրենքի տառին բացարձակ համապատասխան պետությունից տարիներով գողացված հարստությունն իր օրինական տիրոջը վերադարձնելու գործառույթը:

Չպետք է լինի որևէ տարակույս, որ սոցիալական արդարության վերականգնման այս գործընթացում դատախազությունը լինելու է աներեր ու վճռական: Մեր մտավոր ռեսուրսները, կամքը և ինստիտուցիոնալ կայացվածությունը ավելի քան բավարար են դրա համար:

Մենք կանգնած ենք ամենատարբեր

ոլորտներում կոռուպցիոն հանցավոր կայուն սխեմաները կազմաքանդելու անշրջելի գործընթացի կիզակետում: Որևէ անհատ, հասարակական կամ քաղաքական միավոր, պետական որևէ ծառայող չպետք է ունենա սքողված կամ անսքող հանցավոր որևէ հավակնություն ինչպես պետական ու հանրային ռեսուրսների, լծակների յուրացման, այնպես էլ պետության ներքին ու արտաքին անվտանգության համար սպառնալիքներ ստեղծելու հարցում: Նման փորձերի դեպքում պետությունը չի հապաղելու ողջ ծանրությամբ գործադրել իր պատժիչ բռունցքը:

Նույնպիսի հետևողականությամբ մենք չենք հանդուրժելու նաև մեր համակարգում դատախազի վարկը, կերպարը, ուսադիրի պատիվն արատավորող հանցավոր որևէ դրսևորում, որովհետև առաջին հերթին մեր օրինակով ենք փաստելու նոր, առողջ, անվտանգ միջավայրի ամրապնդման անայլընտրանք լինելու իրողությունը:

Հասարակական հարաբերությունների կարգավորման միակ լեգիտիմ միջոցը իրավական համակարգն է: Օրինապահ, քաղաքացիակենտրոն հասարակության կերտման մեր ընդհանուր ճանապարհին հանցավոր ենթամշակույթի բարքերը, կանոնները պետք է ոչնչացվեն արմատից, և այդ պայքարում մնում ենք դրոշակակիր՝ կանգնած առաջնագծում իրավապահ մյուս մարմինների հետ ուս-ուսի տված:

Այս չարիքների դեմ հայտարարված պատերազմում մենք հաղթելու են՝ որպես զենք ունենալով մեր պրոֆեսիոնալիզմը, խիղճը, արդարամտությունը, բարոյականությունը և մեր ժողովրդի վստահությունը:

Միրելի՝ գործընկերներ, թանկագին վետերաններ,

Կրկին շնորհավորելով այս նշանակալի օրվա առթիվ բոլորիդ մաղթում եմ անձնական և գործնական հաջողություններ ու ձեռքբերումներ՝ մեր բազմադարյա և պաշտելի երկրում:

Ցանկանում եմ պատվաբեր ծառայություն՝ մեր կոչմանը, մեր հզոր ժողովրդին անմնացորդ նվիրումին համատարիմ՝ ի շահ հայոց պետականության հարատևության, նրա լուսավոր ու պայծառ ապագայի:

ՆԵԼԼԻ ԱՇՐԱՖՅԱԼ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ

ՀԱՇՏԵՑՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ցանկացած պետություն ձգտում է այն բանին, որ իր քաղաքացիները կատարեն հանրօգուտ գործողություններ: Դրա համար նա ձգտում է ստեղծել պայմաններ, այդ թվում և օրենսդրական եղանակով, երբ նման գործողություններ կատարելը շահավետ է, երբ դրանից քաղաքացին ինքը օգուտ է ստանում: Օրենսդրությունը միջոց է, որի օգնությամբ ձևավորվում են դրական սոցիալական վարքագծի կարծրատիպեր: Ընդ որում, յուրաքանչյուր պետության համար կարևոր է, որ այդ կարծրատիպերը ձևավորվեն մարդու գործունեության ամենատարբեր բնագավառներում: Առանձնապես կարևոր է քրեական դատավարության ոլորտը կարգավորելը, քանի որ այն ներառում է պետության և հասարակության համար առավել նշանակալի հարաբերությունների, արժեքների պաշտպանությունը: Քրեական իրավունքում տիրապետողը կարգավորման իմպերատիվ մեթոդն է՝ քրեական օրենսդրությունում որոշակի գործողությունների արգելման մեթոդը¹: Դրանից զատ, կիրառվում է (թեկուզև ավելի փոքր ծավալով) խրախուսման մեթոդը²: Խրախուսման մեթոդի արդյունավետությունը պայմանավորված է այն բանով, որ այն չի հարկադրում մարդուն կատարել հասարակության ու պետության համար ցանկալի գործողություններ, այլ նրա մեջ համոզմունք է ձևավորում, որ հատկապես նշյալ գործողություններն են իր համար առավել օգտակար³: Կոնկրետ անձինք, որոնց հասցեագրված են

քրեական օրենքի համապատասխան նորմերը, նման համոզմունքն ընկալում են որպես որևէ մեկի կողմից չպարտադրված, սեփական որոշման արդյունք. ուստի, համապատասխան գործողությունները կատարում են ինքնակամ՝ առանց որևէ հարկադրանքի: Ընդ որում, այն հարցում, թե ինչպես պետք է կիրառել խրախուսման միջոցները, կան տարբերություններ՝ պայմանավորված տվյալ պետության պատմական-իրավական ավանդույթներով: Այսպես, նախկին ԽՍՀՄ հանրապետությունների ավանդույթը ենթադրում է գործողությունների՝ միանգամայն որոշակի շրջանակ, որոնք կատարելը պետք է խրախուսվի: Այդ գործողությունների միջուկը տուժողի հաշտվելն է համապատասխան հանցագործությունը կատարելու մեջ իրեն մեղավոր ճանաչող անձի հետ: Դա զգալի չափով պայմանավորված է այն բանով, որ քրեական դատավարության նշյալ նորմերը որևէ չափով չեն վարկաբեկվել անգամ պատմական այն ժամանակափուլերում, որոնք աչքի են ընկել ինչպես առանձին քաղաքացիների, այնպես էլ բնակչության տարբեր խավերի նկատմամբ ազդեցության բռնի միջոցների կիրառման չարաշահմամբ: Առավել ևս, որ խրախուսման միջոցները քրեական դատավարությունում ենթադրում են հավասարակշռության հաստատում հասարակությունում կոնկրետ անձի մասնավոր շահի և ամբողջ հասարակության շահի միջև, որը շահագրգռված է իրավակարգը

1. Տե՛ս **Юношев С. В., Жирова М. Ю., Убасев В.В.** К вопросу о соотношении понятий "властные полномочия" и "субъективные права" в российском уголовном судопроизводстве // Вектор науки Тольяттинского государственного университета. Серия: Юридические науки. 2019. № 2 (37), էջ 51-56:
 2. Տե՛ս **Новичков В. Е.** Понятие и система уголовно-правовых норм, стимулирующих сотрудничество граждан с правоохранительными органами Российской Федерации // Известия Юго-Западного государственного университета. Серия: История и право. 2019. Т. 9. № 2 (31), էջ 60-68.
 3. Տե՛ս **Лобанова Л. В., Мкртчян С. М.** К вопросу о совершенствовании системы уголовно-правовых средств поощрения позитивного посткриминального поведения лиц, совершивших преступления корыстной направленности, с учётом зарубежного правотворческого опыта // Право и политика. 2016. № 12, էջ 1452-1457:

վերականգնելու հարցում: Խրախուսման ժամանակ կարևոր է կանխարգելիչ արդյունքը, որի էությունն այն է, որ անձը պետք է ձևավորի իր մեջ հանրագուտ որոշակի գործողությունների անհրաժեշտության համոզմունք: Նման համոզմունքի առկայության դեպքում նա հետագայում ձեռնպահ կմնա հանցագործություններ և նույնիսկ այլ տիպի իրավախախտումներ կատարելուց:

Խրախուսման մեթոդը լիովին համապատասխանում է քրեական իրավունքի սկզբունքներին, որոնք ձևավորվել են հետխորհրդային տարածքի պետությունների քրեական օրենսդրությունում: Ուստի, այն նորմերը, որոնցում այդ մեթոդը արտացոլվում է, փաստորեն կանխորոշել են քրեական դատավարության համակարգը, որը ձևավորվել է այնպիսի սկզբունքների հիման վրա, ինչպիսիք են մարդասիրությունը, արդարությունը և այլն: Այսպես, մարդասիրության սկզբունքը (<< քր. օր.-ի 11 հոդված) արտահայտվում է այն բանով, որ պետությունն իմաստ չի տեսնում խիստ պատժամիջոցներ կիրառելու այն անձանց նկատմամբ, որոնք զղջացել են և, համապատասխանաբար, բացասաբար են գնահատել իրենց կատարած հանցագործությունը, քանի որ հանցավոր արարքների անթույլատրելիության մասին իրենց մեջ ձևավորված համոզմունքից ելնելով՝ նրանք այլևս հասարակական վտանգ չեն ներկայացնում⁴: Դա հաստատվում է իրավապահ մարմինների պրակտիկայով, որը վկայում է այն մասին, որ զղջացողները հազվադեպ են նոր հանցանքներ գործում⁵: << քր. օր.-ում խրախուսումը լիովին արտացոլված է 72 և 73 հոդվածներում: Նշյալ նորմերը կոչված են հանցագործություն կատարելու համար մեղավոր անձի մեջ ձևավորելու համոզմունք առ այն, որ իր կատարած արարքը հանցավոր է, ուստի այլևս անթույլատրելի է կատարել: Դրանով կոնկրետ մեղավոր անձն ուղղվում է քրեական օրենքի միջոցներով, ինչը դարձնում է նրան հասարակության համար ոչ վտանգա-

վոր, քանի որ նրա մեջ ձևավորվում է նոր հանցագործություններ կատարելու անթույլատրելիության համոզմունք:

ԱՊՀ երկրներից շատերի համար բնութագրական է այն, որ հանցանք գործելու մեջ մեղավոր անձի՝ հասարակության ակնկալած որոշակի վարքագիծը խրախուսող նորմերին բնորոշ է միասնական կառուցվածքը, որը ներառում է կանխավարկածը, դիսպոզիցիան, պատժամիջոցն ու խրախուսումը: Բացի այդ, նշյալ նորմերը խթան են դառնում հանցանք գործելու մեջ մեղավոր անձի հանրագուտ վարքագծի համար: Այսպես, ՌԴ քր. օր.-ի 75 հոդվածում որպես պայմաններից մեկը ուղակիորեն նշված է գործուն զղջալը, այսինքն՝ անձի կողմից սեփական հանցավոր վարքագծի բացասական գնահատականը⁶: ՌԴ քր. օր.-ի 76 հոդվածում թեև գործուն զղջալուն անմիջականորեն չի նշվում, բայց այն ենթադրվում է, քանի որ տվյալ նորմով նախատեսված վնասը հարթելը գործողություն է, որը զղջման դրսևորում է: Բացի այդ, տուժողի հետ հաշտվելը նույնպես այն բանի արտահայտությունն է, որ մեղավորը գիտակցում է իր գործողությունների բացասական բնույթը և չի ցանկանում դրանց կրկնությունը⁷: Ինչպես տեսնում ենք, նշյալ նորմերի թեև կառուցվածքը, թե բովանդակային կողմը ամբողջովին նույնական է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսդրության նորմերին: Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսդրության նշյալ նորմերը ևս մարդասիրության սկզբունքի դրսևորում են, որը բնութագրում է վերջին տասնամյակներին իրականացվող ամբողջ քրեական քաղաքականությունը:

Քրեական օրենսդրությունում խրախուսման մեթոդին համանման մոտեցում է ցուցաբերվում հետխորհրդային տարածքի այլ պետություններում ևս: Այսպես, Տաջիկստանի Հանրապետության քր.օր.-ում նախատեսված է գործուն զղջման կապակցությամբ պատասխանատվությունից ազատելու նորմ (ՏՀ քր. օր.-ի

4. Տե՛ս **Захарова А. В.** Реализация конституционного принципа гуманизма в уголовном праве // Международный журнал гуманитарных и естественных наук. 2018. № 10-2, էջ 136-138:
 5. Տե՛ս **Золов А. Т.** Реализация принципа гуманизма в уголовном праве // Юридический факт. 2019. № 55, էջ 43-45:
 6. Տե՛ս **Терехов Е. В.** Актуальные проблемы прекращения уголовного преследования в связи с деятельным раскаянием в российском уголовном судопроизводстве // Пробелы в российском законодательстве. 2017. № 1, էջ 37-38:
 7. Տե՛ս **Лопашенко Д. В.** Примирение с потерпевшим и деятельное раскаяние как институты, ошибочно относимые к проявлению частного в уголовном праве // Библиотека криминалиста. Научный журнал. 2015. № 1 (18), էջ 77-81:

72 հոդված) և նորմ, որով նախատեսվում է ազատել պատասխանատվությունից տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ (ՏՀ քր. օր.-ի 73 հոդված)⁸: Ուշագրավ է, որ նշյալ նորմերը գործնականում ամբողջությամբ նույնական են Հայաստանի Հանրապետության քր. օր.-ի համապատասխան նորմերին: Դա կարելի է գնահատել այնպես, որ նշյալ նորմերի՝ այդպիսի կառուցվածքն ու բովանդակությունն առավելագույնս համապատասխանում են այդ պետությունում իրավունքի նորմերի կիրառման պրակտիկային: Ընդ որում, կապ չունի, որ այդ պետությունն անցել է ինքնուրույն, անկախ զարգացման՝ բավականին տևական փուլ: Ավելին, տվյալ նորմերը մեծապես ուղղված են նշյալ պետության քրեական օրենսդրության ապագա զարգացմանը: Դրանում տեսնում են ներուժ, որը լիովին համապատասխանում է հասարակության ու պետության զարգացման մակարդակին: Նշյալ նորմերը նաև ընկալվում են որպես նորմեր, որոնք լիովին համապատասխանում են հասարակության ու պետության արժեքներին՝ մասնավորապես մարդասիրության վրա հիմնված արժեքներին:

Անգամ այն դեպքում, երբ հետխորհրդային տարածքի համապատասխան հանրապետության օրենսդրությունը լրջորեն բարեփոխվել է՝ հրաժարվելով նախկին խորհրդային իրավունքի մոդելից, նորմերը, որոնցում դրսևորվում է խրախուսման մեթոդը քրեական իրավունքում, որպես կանոն, մնում են նախկինը: Անշուշտ, ձևը կարող է որոշակիորեն փոփոխվել: Օրինակ՝ Ուկրաինայի քր. օր.-ում նախկինի պես առկա են նորմեր գործուն գղջալու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու մասին (Ուկրաինայի քր. օր.-ի 45 հոդված) և նորմեր քրեական պատասխանատվությունից ազատելու մասին՝ տուժողի հետ մեղավորի հաշտվելու կապակցությամբ (Ուկրաինայի քր. օր.-ի 46 հոդված): Վերոնշյալ նորմերը գործնականում բառացի կրկնում են նախկին ԽՍՀՄ կազմում եղած այլ հանրապետությունների համապատասխան նորմերը: Դա ևս մեկ լրացուցիչ փաստարկ է հոգուտ այն բանի, որ նշյալ նորմերը կրում են

համամարդկային արժեքներ, որոնք անկախ են ազգությունից և համապատասխան պետության ու հասարակության այլ յուրահատկություններից: Դրանք անկախ են անցյալի գնահատականներից. անցյալի, որը տարբեր կերպ է գնահատվում նախկին ԽՍՀՄ կազմում եղած հանրապետություններում: Ընդ որում, նշյալ նորմերը որևէ քննադատության չեն արժանանում. դրանք դիտվում են որպես տվյալ պետությունում իրականացվող բարեփոխումներին համապատասխանող:

Ուշագրավ է, որ նորմերը, որոնցում դրսևորվում է խրախուսման մեթոդը քրեական իրավունքում, առկա են նաև այն հանրապետություններում, որոնք նախկինում մտնում էին ԽՍՀՄ կազմի մեջ, բայց ներկայումս ԱՊՀ կազմում չեն, այլ Եվրամիության անդամ են: Չնայած խորհրդային անցյալի հետ կապված ամեն ինչի նկատմամբ կտրուկ բացասական վերաբերմունքին՝ քրեական օրենսդրությունում նկատվում է վերոնշյալ նորմերի մասով շարունակականություն: Այստեղ էլ դրանք առկա են, թեև շարադրանքի ձևը որոշ չափով փոփոխված է: Դա զգալիորեն պայմանավորված է այդ պետությունների ողջ քրեական օրենսդրության վերաձևմամբ, որոնց ձգտում էին թույլ չտալ օրենսդրության զարգացման շարունակականություն՝ բացառելով խորհրդային շրջանի օրինաստեղծման ու իրավունքի կիրառման փորձը: Այնուամենայնիվ, չնայած տվյալ պետությունների օրենսդրության զարգացման այդ ակնհայտ միտումին, տեսանելի է, որ նրանք չեն կարողացել հրաժարվել քննության առարկա նորմերից, որոնցում տեղ է գտել խրախուսման մեթոդի գործողությունը քրեական իրավունքում. մի մեթոդի, որն ուղղված է հանցագործություն կատարելու մեջ կոնկրետ մեղավորի՝ սուբյեկտիվ վերաբերմունքի փոփոխությանն այն բանի նկատմամբ, ինչ ինքը կատարել է՝ նրա ուղղմանը: Այսպես, Լատվիայի քր. օր.-ում հատուկ չի առանձնացվում գործուն գղջալու և տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու մասին նորմը⁹: Դա մեծապես պայմանավորված է քրեական օրենսդրության

8. Տե՛ս **Владимирова О. А.** Примирение с потерпевшим: опыт стран СНГ // Вестник Евразийской академии административных наук. 2018. № 4 (45), էջ 152-155:

9. Տե՛ս **Пителина М. А.** Институт прекращения уголовного дела в связи с примирением сторон в законодательстве некоторых европейских государств // Актуальные проблемы уголовного права и процесса, уголовно-исполнительного

կառուցվածքի առանձնահատկություններով, որոնք դրսևորվում են քրեական պատասխանատվությունից ազատելու մասին նորմերի շարադրման ձևով: Այսպես, Լատվիայի Հանրապետության քր. օր.-ում քրեական պատասխանատվությունից ազատելու մասին բոլոր նորմերը միավորված են հոդված 58-ում, որն այդպես էլ կոչվում է՝ «Քրեական պատասխանատվությունից ազատելը»: Ընդ որում, չնայած ձևի այդպիսի փոփոխությանը, Լատվիայի քր. օր.-ի վերոնշյալ հոդվածին ծանոթանալիս ակնհայտ է դառնում, որ օրենսդիրն այդպես էլ չի կարողացել զերծ մնալ քրեական իրավունքի խորհրդային դպրոցի ազդեցությունից: Դա մասնավորապես արտահայտվում է այն բանում, որ այստեղ նախկինի պես առկա են նորմեր, որոնք գրեթե բառացի կրկնում են այդ պետությունների խորհրդային շրջանի քրեական օրենսդրության նորմերը քրեական պատասխանատվությունից ազատելու մասով: Այսպես, Լատվիայի Հանրապետության քր. օր.-ի 58 հոդվածի 2-րդ մասում պարունակվում է նորմ, որի համաձայն՝ քրեական պատասխանատվությունից կարող է ազատվել այն անձը, որը հաշտության համաձայնագիր է կնքել տուժողի կամ նրա ներկայացուցչի հետ: Քրեական պատասխանատվությունից նշյալ հիմքով ազատվել չի կարող միայն այն անձը, որի գործողության արդյունքում տուժողը մահացել է: Ակներև է, որ նշյալ նորմը գործնականում չի տարբերվում նախկին խորհրդային հանրապետությունների քրեական օրենսդրության համանման նորմերից՝ տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու մասին: Այստեղ միանգամայն ակնհայտ է այն, որ օրենսդիրը ձգտել է խթանել համապատասխան անձի վարքագիծը՝ հարթելու այն վնասը, կորուստը, որը պատճառել է իր կատարած հանցագործության հետևանքով: Նշյալ նորմի առկայությունը Լատվիայի Հանրապետության քրեական օրենսդրությունում վկայում է այն մասին, որ այդ նորմում տեղ գտած արժեքները համամարդկային են և կախված չեն տվյալ պետությունների քաղաքական վարչակարգերի

քաղաքական կամ այլ նախընտրություններից: Տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու մասին նորմը տեղ է գտել նաև Լիտվայի Հանրապետության քրեական օրենսդրությունում¹⁰: Ընդ որում, իր ձևով ու բովանդակությամբ այդ նորմն ավելի հոգեհարազատ է ԱՊՀ երկրների քրեական օրենսդրության համանման նորմերին: Այսպես, Լիտվայի Հանրապետության քր. օր.-ի 38 հոդվածը այդպես էլ կոչվում է՝ «Քրեական պատասխանատվությունից ազատելը մեղավոր անձի և տուժողի հաշտության կապակցությամբ»: Այն նման է մեր և ԱՊՀ այլ երկրների քրեական օրենսդրության համապատասխան նորմերին: Ի տարբերություն Լատվիայի Հանրապետության՝ Լիտվայի Հանրապետության օրենսդիրը չի ցանկացել հրաժարվել տուժողի հետ հաշտության կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու մասին նորմի շարադրման ձևից, որն առկա էր տվյալ պետության՝ խորհրդային շրջափուլում: Միանգամայն ակնհայտ է, որ դա բնավ կապված է ոչ թե խորհրդային օրենսդրության զարգացման ավանդույթները պահպանելու, այլ այն բանի հետ, որ նշյալ նորմի և՛ ձևը, և՛ բովանդակությունն առավելագույնս համապատասխանում է քրեական օրենսդրությունից ունեցած սոցիալական ակնկալիքներին: Նման ձևն ու բովանդակությունը հարկ է ճանաչել առավելագույնս օպտիմալ արդեն հանցագործություն կատարած անձանց հանրօգուտ վարքագիծը խթանելու համար: Այդ ձևն ու բովանդակությունը առավելագույն արդյունավետությամբ են ձևավորում համոզմունք համապատասխան անձանց մեջ, ինչը խոչընդոտում է նրանց կողմից նոր հանցագործություններ կատարելը: Ակներև է, որ հենց դրանով է թելադրված Լիտվայի Հանրապետության օրենսդրի ցանկությունը՝ չառանձնացնելու տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու մասին նորմը: Այն ամենաշատն է համապատասխանում համաշխարհային քրեական օրենսդրության զարգացման ընդհանուր միտումներին:

● ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ № 118 2020

права и криминалистики. Материалы VI научно-практической конференции. – Саранск, Изд-во: Общество с ограниченной ответственностью "ЮрЭксПрактик", 2018, էջ 126-128:

10. Տե՛ս **Григонис Э. П.** Общая характеристика уголовного кодекса литовской республики // Мир юридической науки. 2012. № 5, էջ 41-48:

Այդուհանդերձ, Մերձբալթյան ոչ բոլոր հանրապետությունների քրեական օրենսդրությունում են առկա նորմեր, որոնցով տուժողի հետ հաշտվելը համարվում է քրեական պատասխանատվությունից ազատելու հիմք: Այսպես, Էստոնիայի Հանրապետությունն ամբողջովին հրաժարվել է քրեական պատասխանատվությունից ազատելու նշյալ հիմքը նշելուց: Բայց դա բնավ չի նշանակում, որ արդարադատության մարմիններն ուշադրություն չեն դարձնում հանցագործություն կատարելու մեջ մեղավոր անձի և հանցագործությունից տուժած անձի միջև հաշտության փաստին: Էստոնիայի Հանրապետության օրենսդրության առանձնահատկությունն այն է, որ տուժողի հետ հաշտությունը չի դիտվում որպես քրեական իրավունքի ինստիտուտ: Էստոնիայի Հանրապետության քրեական օրենսդրությունում չկա նորմ տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու մասին: Սակայն դա բնավ չի նշանակում, որ հանցագործություն կատարելու մեջ մեղավորի և տուժողի միջև հաշտությունը չի խրախուսվում գործող օրենսդրությամբ: Քրեադատավարական օրենսդրությունում նախատեսված է մի հանգամանք, որը բացառում է քրեական գործով վարույթը, որը ձևակերպված է որպես տուժողի հետ մեղադրյալի հաշտեցում: Դա թույլ է տալիս կարճել քրեական գործը մեղադրյալի և տուժողի միջև հաշտության կապակցությամբ (Էստոնիայի Հանրապետության քր. դատ. օր.-ի հոդված 5-ի 6-րդ մաս): Նշյալ նորմը թեև քրեադատավարական է, այլ ոչ թե քրեական, պարունակում է հանրորեն դրական վարքագծի խթան, որն ակնկալում է պետությունը մեղադրյալից, եթե վերջինս մեղավոր է համապատասխան հանցագործությունը կատարելու մեջ: Այսինքն՝ Էստոնիայի Հանրապետության օրենսդրությունը չի հրաժարվել տուժողի հետ հաշտվելը խրախուսող նորմերից: Դրանով իսկ պահպանվել են մոտեցումները խրախուսման մեթոդի կիրառմանը:

Քրեական իրավունքում տուժողի հետ հաշտեցման ինստիտուտից հրաժարվելը և քրեադատավարական իրավունքում մեղադրյալի և տուժողի միջև հաշտության ինստիտուտը պահպանելը նպատակ ունեին խնայելու օրենսդրական միջոցները: Էստոնիայի Հանրապետության օրենսդիրն ավելորդ է համարել

և մեկ անգամ կրկնել նույն նորմը: Այսինքն՝ քրեական և քրեադատավարական օրենսդրության՝ նշյալ նորմերն ընկալվել են որպես նույնական. ուստի, օրենսդիրն ավելորդ է համարել նույն բանը կրկնել մեկ անգամ քրեական օրենսդրությունում, երկրորդ անգամ՝ քրեադատավարական օրենսդրությունում: Կարծում ենք՝ սա ճիշտ մոտեցում չէ, քանի որ չի կարելի նույնական համարել քրեական իրավունքում տուժողի հետ հաշտեցման ինստիտուտը և քրեադատավարական իրավունքում մեղադրյալի և տուժողի միջև հաշտության ինստիտուտը: Քրեադատավարական ինստիտուտը հաշտությունը դիտարկում է որպես քրեական դատավարության՝ կողմերի միջև կայացվող որոշում. մինչդեռ քրեական իրավունքում տուժողի հետ հաշտեցումը դիտվում է որպես հանցագործությունը կատարած մեղավոր անձի զղջման գործողություն, որն ընդունվում է այդ հանցագործությունից տուժած անձի կողմից: Բացի այդ, քրեական իրավունքի և քրեադատավարական իրավունքի՝ նշյալ նորմերը նույնպես տարբերվում են, ինչպես որ տարբերվում են «հանցագործություն կատարելու մեջ մեղավորը» և «մեղադրյալը»: Մեղադրյալն անպայման մեղավոր չէ հանցագործություն կատարելու մեջ, քանի որ դա դեռ պետք է ապացուցել քրեական դատավարության ընթացքում օրենքով սահմանված կարգով: Միննույն ժամանակ, քրեական իրավունքում խոսքը միայն հանցագործություն կատարելու մեջ մեղավորի մասին է: Այս առումով քրեական իրավունքի և քրեական դատավարության՝ նշյալ դրույթները բավականին մոտ են իմաստով և լրացնում են իրար, սակայն դրանք չի կարելի նույնական համարել: Հետևաբար՝ ավելի տրամաբանական կլիներ չհրաժարվել տուժողի հետ հաշտեցման մասին դրույթից Էստոնիայի Հանրապետության քրեական իրավունքում:

Էստոնիայի Հանրապետության օրենսդրության վերլուծության մեջ կարևոր է այն, որ այստեղ էլ, չնայած ԽՍՀՄ օրենսդրական ժառանգությունից հրաժարվելու՝ ակնհայտ ցանկությանը, այնուամենայնիվ չեն հրաժարվել հաշտեցման ինստիտուտից: Միակ առանձնահատկությունն այն է, որ դա տեղ է գտել քրեադատավարական իրավունքում, ինչը որոշ չափով աղքատացնում է հաշտեցումը որպես միջոլորտային ինստիտուտ: Դա կարող է բա-

ցատրվել միայն այն բանով, որ նշյալ միջոցորտային ինստիտուտն անհրաժեշտություն է իրավունքի համակարգի համար, որը պետք է համապատասխանի մարդասիրության սկզբունքին՝ առավել ևս, երբ տվյալ ինստիտուտը նոր հանցագործությունները կանխարգելելու արդյունավետ միջոց է: Տուժողի հետ հաշտեցման դիմած մեղավոր անձը դադարում է լինել հանրորեն վտանգավոր, քանի որ հանգել է այն համոզմունքին, որ իր կատարած գործողություններն անընդունելի են. ուստի, անթույլատրելի է այլ գործողություններ կատարելը, որոնցով կարող է որևէ մեկին վնաս պատճառվել: Դա այն հիմնական պատճառներից է, որ Մերձբայթյան հանրապետությունների օրենսդրությունը չի հրաժարվել տուժողի հետ հաշտեցման ինստիտուտից: Դա նաև կարող է լավ փաստարկ դառնալ հոգուտ այն բանի, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրության՝ ցանկացած բարեփոխում չհրաժարվի տվյալ ինստիտուտից: Ընդ որում, չարժե հրաժարվել դրա քննադատական վերլուծությունից՝ այն կատարելագործելու և արդյունավետությունն ավելի բարձրացնելու նպատակով: Տվյալ ինստիտուտի արդյունավետությունը բարձրացնելը ենթադրում է նոր հանցագործությունների կատարումը կանխարգելելու արդյունավետության բարձրացում: Սակայն, դրանով հանդերձ, տվյալ ինստիտուտի հիմքում ընկած գաղափարն ինքնին հիմնված է մի սկզբունքի վրա, որը պետք է պայմանավորի ցանկացած ժամանակակից պետության ամբողջ քրեական օրենսդրությունը՝ մարդասիրության սկզբունքը: Այդ սկզբունքը արժեք է, որը պետք է արտացոլվի ամբողջ օրենսդրությունում:

Հետխորհրդային տարածքի պետությունների քրեական օրենսդրության վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հիմնական

միտումը տուժողի հետ հաշտեցման ինստիտուտը պահելն է¹¹: Ուշագրավ է, որ նշյալ ինստիտուտը պահպանվում է գրեթե անփոփոխ: Ընդ որում, կատարված հանցագործության հետևանքով առաջացած խնդիրները լուծելու արտադատարանական կարգը, որը հայտնի է որպես հաշտարարություն, դեռևս դիտարկվում է զուտ տեսական մակարդակում¹²: Տուժողի հետ հաշտեցումը դիտարկվում է որպես հաշտարարության տեսակներից մեկը քրեական իրավունքում և քրեական դատավարությունում: Դա նույնպես համարվում է պատճառներից մեկը, որով տուժողի հետ հաշտեցումը՝ որպես միջոցորտային ինստիտուտ, նախկինի պես արտացոլվում է քրեական և քրեադատավարական օրենսդրությունում: Ընդ որում, հաշտարարությունը քրեական դատավարությունում նույնացնում են հենց կողմերի հաշտեցման հետ, քանի որ այստեղ հաշտությունը համաձայնություն է հանցագործություն կատարելու մեջ մեղավոր անձի և կատարված հանցագործությունից տուժածի միջև¹³: Նշյալ հաշտության ձևն օրենսդրությամբ չի կարգավորվում: Այն կարող է լինել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր: Այդ համաձայնության գլխավոր նշանակությունն այն է, որ դրանից կարելի է միանշանակ հետևություն անել հաշտության առկայության մասին¹⁴: Այս առումով ծագում են մի շարք հարցեր, որոնց պետք է պատասխանեն ԱՊՀ երկրների օրենսդրությունները: Դրանով է մեծապես պայմանավորված մեղավորի և տուժողի միջև ձեռք բերված հաշտության՝ արդարացիության ընկալումը: Դրանից է կախված այն, թե որքանով է ձեռք բերվող հաշտությունն արտացոլում այն ձեռք բերող անձանց շահերը¹⁵: Ներկայումս հաշտեցման ընթացակարգն օրենսդրությամբ որևէ կերպ չի կարգավորվում, որովհետև այն

11. Տե՛ս **Агаев Г. А.** оглы, Степанов Ю.И. Новый взгляд на институт освобождения от уголовной ответственности в связи с примирением с потерпевшим // Ленинградский юридический журнал. 2018. № 1 (51), էջ 138-145:
 12. Տե՛ս **Кури Х.**, Ильченко О.Ю. Медиация и восстановительное правосудие как современные тенденции уголовного процесса: российский и зарубежный опыт // Криминологический журнал Байкальского государственного университета экономики и права. 2015. Т. 9. № 1, էջ 120-129:
 13. Տե՛ս **Дерюгина С. Р.** Примирение сторон в гражданском и уголовном процессе // Ученые записки Крымского федерального университета имени В.И. Вернадского. Юридические науки. 2018. Т. 4 (70). № 1, էջ 169-174:
 14. Տե՛ս **Лаптев В. Н.**, Грищенко М.И. Ситуационный подход, как вектральное направление деятельности субъекта медиативных процедур в уголовном судопроизводстве // Политематический сетевой электронный научный журнал Кубанского государственного аграрного университета. 2016. № 122, էջ 520-536:
 15. Տե՛ս **Калинина О. М.** Освобождение от уголовной ответственности в связи с примирением с потерпевшим: современные реалии // Государство и право. 2015. № 6, էջ 98-101:

չի կարող լինել ո՛չ քրեական, ո՛չ քրեա- | առարկա, քանի որ գտնվում է քրեական դա-
դատավարական իրավունքի կարգավորման | տավարության շրջանակներից դուրս:



ՍԵՎԱԿ ՊՈՂՈՍՅԱՆ

Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազի տեղակալ,
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ

ՀԱՆՁՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

ՀՀ Քրեական օրենսգրքի 37 հոդվածի համաձայն՝ «Հանցակցություն է համարվում երկու կամ ավելի անձանց դիտավորյալ համատեղ մասնակցությունը դիտավորյալ հանցագործությանը»: ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծում որոշակի ճշգրտում է կատարվել սուբյեկտների առնչությամբ: Նախագծի համաձայն՝ «Հանցակցություն է համարվում քրեական պատասխանատվության ենթակա երկու կամ ավելի անձանց դիտավորյալ համատեղ մասնակցությունը դիտավորյալ հանցագործությանը»: Սրանով ճշգրտվում է հանցակցության օբյեկտիվ հատկանիշներից մեկը, այն է՝ հանցագործությանը երկու կամ ավելի անձի մասնակցությունը: Այն, որ հանցակցության դեպքում հանցագործությանը պետք է մասնակցեն երկու կամ ավելի հանցագործության սուբյեկտ համարվող անձինք, իրավաբանական գրականության մեջ վեճերի տեղիք չի տալիս: Վեճերի տեղիք է տալիս մեկ այլ հարց. արդյո՞ք առկա է մի խումբ անձանց կողմից հանցանքը կատարելու հատկանիշն այն դեպքերում, երբ հանցանքը կատարող խմբի անդամներից միայն մեկն է հանցագործության սուբյեկտ և ենթակա քրեական պատասխանատվության, իսկ մյուսները հանցագործության սուբյեկտ չեն՝ քրեական պատասխանատվության տարիքի հասած չլինելու կամ անմեղսունակ լինելու հետևանքով: Սրա վերաբերյալ իրավաբանական գրականության մեջ և գործնականում տարբեր կարծիքներ են արտահայտվել: Այսպես, ՌԴ գերագույն դատարանի՝ 1992 թ. ապրիլի 22-ի «Բռնաբարությունների գործերով դատական պրակտիկայի մասին» որոշման համաձայն՝ հանցանքը համարվում է խմբի կողմից կատարված

նույնիսկ այն դեպքում, երբ խմբի անդամները քրեական պատասխանատվության տարիքի հասած չլինելու կամ անմեղսունակության պատճառով ենթակա չեն քրեական պատասխանատվության: Փաստորեն, այդ դեպքում հանցանքը կհամարվի խմբի կողմից կատարված և այդ ծանրացնող հանգամանքը կմեղսագրվի խմբի այն միակ անդամին, որը հանցագործության սուբյեկտ է: Որոշ քրեագետներ քննադատում են այս դիրքորոշումն այն հիմնավորմամբ, որ հանցակցությունն ունիվերսալ բնույթ ունի, և դրա դրույթները պետք է վերաբերեն հանցակցության բոլոր ձևերին, նույնիսկ եթե հանցագործության խմբակային բնույթը նախատեսված է Հատուկ մասում որպես հանցակազմի ծանրացնող հանգամանք¹: Քանի որ խումբը հանցակցության ձև է, իսկ հանցակցությունը ենթադրում է, որ յուրաքանչյուր հանցակից քրեական պատասխանատվության ենթակա անձ է, ապա անմեղսունակներն ու քրեական պատասխանատվության տարիքի չհասածները չեն կարող քրեաիրավական իմաստով խումբ կազմել²: Այս դիրքորոշման քննադատները տարբեր հակափաստարկներ են բերում: Այսպես՝ Ռ. Ռ. Գալիակբարովը գտնում է, որ «խումբ» հասկացությունն ունի երկակի նշանակություն՝ կարող է դրսևորվել որպես հանցակցություն և որպես հանցագործության եղանակ՝ բնութագրելով հանցագործության օբյեկտիվ կողմը³: Քրեական օրենսգրքի Հատուկ մասում առկա են մի շարք այնպիսի հանցատեսակներ, որոնց օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է խմբի կողմից այն կատարելը: Մասնավորապես, այդպիսին են զանգվածային անկարգությունները, ան-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 118 2020

1. Сѣн Курс уголовного права. Общая часть. Т. 1:Учение о преступлении / Под ред. Н.Ф. Кузнецовой, И.М. Тяжковой., М., 2002, էջ 388:
2. Сѣн Кригер Г.А. Квалификация хищений социалистического имущества. М 1971, էջ 24-25:
3. Сѣн Галиакбаров Р. Р. Квалификация групповых преступлений. М., 1980, էջ 35-38:

ծանց իրավունքների կամ անձի դեմ ոտնձգող միավորումներ կազմելը կամ ղեկավարելը: Եթե հանցագործության խմբակային բնույթը հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշն է, ապա նման դեպքերում այն առկա է, եթե նույնիսկ խմբի անդամներից միայն մեկն է հանցագործության սուբյեկտ: Խմբի կողմից հանցանքը կատարելու փաստը խմբի՝ քրեական պատասխանատվության ենթակա միակ անձին մեղսագրելու կողմնակից են նաև Ա. Ի. Ռառոզը և Գ. Ա. Եսակովը: Վերլուծելով ՌԴ Գերագույն Դատարանի պլենումի՝ 2000 թ. փետրվարի 14-ի որոշումը, որտեղ այն միտքն է արտահայտվել, թե հանցանքի կատարումն այն անձին օգտագործելու միջոցով, որը ենթակա չէ քրեական պատասխանատվության տարիքի կամ անմեղսունակության հետևանքով, պետք է համարվի միջնորդավորված կատարում և նշվածներին օգտագործած անձը պետք է պատասխանատվության ենթարկվի որպես կատարող, գտնում են, որ որոշման մեջ «...անձին օգտագործելու միջոցով» հասկացությունը «անձի հետ համատեղ» հասկացության փոխարեն օգտագործելը նշանակում է, որ Գերագույն Դատարանը նկատի է ունեցել միայն միջնորդավորված կատարման դեպքերը, ինչը չի տարածվում հանցագործությունը խմբի կողմից կատարված լինելու դեպքերի վրա: Երբ քրեական պատասխանատվության ենթակա անձը խմբի հետ մասնակցում է հանցանքի կատարմանը, ապա խմբի կողմից հանցանքի կատարումը պետք է մեղսագրվի նրան՝ անկախ նրանից, որ խմբի մյուս անդամները հանցագործության սուբյեկտ չեն⁴: Հանցանքը խմբի կողմից կատարած լինելը որպես ծանրացող հանգամանք կամ հասարակ հանցակազմի հատկանիշ անձին մեղսագրելու կողմնակիցները բերում են նաև կոնկրետ օրինակներ: Մասնավորապես՝ Ռ. Ռ. Ալիակբարովը բերում է խմբակային բռնաբարության օրինակը: Ասենք՝ բռնաբարությունը կատարվում է երկու անձի կողմից, որոնցից մեկը բռնություն է գործադրում, իսկ մյուսը սեռական հարաբերություն է ունենում: Ենթադրենք սեռական հարաբերություն ունեցողը հասել է քրեական

պատասխանատվության ենթակա լինելու տարիքի, իսկ բռնություն գործադրողը, որը սեռական հարաբերություն չի ունենում, քրեական պատասխանատվության ենթակա չէ՝ տարիքը լրացած չլինելու պատճառով: Այս դեպքում եթե բացառենք խմբի առկայությունը, ապա կստացվի, որ հանցագործությունն ընդհանրապես չի կատարվել, որովհետև սեռական հարաբերություն ունեցողը կատարել է տվյալ հանցակազմի՝ օբյեկտիվ կողմի միայն մի մասը: Քրեական պատասխանատվության տարիքի չհասած անձի՝ հանրորեն վտանգավոր արարքները հանցակցություն չեն, բայց ինքնուրույն իրավաբանական նշանակություն ունեն, քանի որ դրանք բնութագրում են հանցագործությունը կազմակերպող կամ կատարող՝ հանցագործության սուբյեկտ համարվող անձի արարքները: Ուրեմն, նման դեպքերում հանցանքը խմբի կողմից կատարած լինելու հատկանիշը պետք է մեղսագրել հանցագործության սուբյեկտ համարվող անձին⁵:

Ասենք համակարծիք են այն հեղինակներին, որոնք գտնում են, որ խումբը հանցակցության ձև է, ուստի դրան պետք է հատուկ լինեն հանցակցության բոլոր հատկանիշները: Ընդ որում, մեր կարծիքով՝ խոսքը ոչ միայն հանցագործության սուբյեկտների առկայության մասին է, այլև մեղքի ձևի ու փոխադարձ սուբյեկտիվ կապի: Դիտավորությունը, որը հանցակցության սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշն է, ենթադրում է արարքի սոցիալական էության, նշանակության գիտակցում, ինչը բացակայում է անմեղսունակի կամ քրեական պատասխանատվության տարիքի չհասած անձի կողմից արարքը կատարելու դեպքում: Նման դեպքերում բացակայում է նաև փոխադարձ սուբյեկտիվ կապը: Իսկ սա նշանակում է, որ նման դեպքերում բացակայում են ոչ միայն հանցակցության օբյեկտիվ հատկանիշներից մեկը, այն է՝ երկու կամ ավելի սուբյեկտի մասնակցությունը հանցագործությանը, այլև սուբյեկտիվ հատկանիշները, այն է դիտավորությունն ու փոխադարձ սուբյեկտիվ կապը: Ուստի, կարծում ենք, որ հանցանքը խմբի կողմից կատարած լինելու հանգամանքը կարող է մեղ-

4. Տե՛ս **Рарог А. И., Есаков Г. А.** Понимание Верховным Судом РФ «группы лиц» соответствует принципу справедливости // Российская юстиция. 2002. №1. Стр 51-53:
5. Տե՛ս **Галиакбаров Р. Р.** Как квалифицировать убийство и изнасилование, совершенное групповым способом // Российская юстиция. 2000. №10. Стр 293-294:

սագրվել միայն այն դեպքում, երբ հանցագործության կատարմանը մասնակցում են հանցագործության սուբյեկտ համարվող երկու կամ ավելի անձ: Այն դեպքերում, երբ հանցագործությանը մասնակցողներից միայն մեկն է հանցագործության սուբյեկտ՝ խմբի հատկանիշը բացակայում է: Նման դեպքերում արարքը պետք է որակել որպես հանցանքը խմբի կողմից կատարելու փորձ՝ փաստական սխալի կանոններով: Նույն դիրքորոշմանն է Վ. Ս. Կոմիսարովը⁶: «Քրեական իրավունքի հանրագիտարանի» հեղինակներն այս տեսակետը սխալ են համարում այն հիմնավորմամբ, որ հանցափորձի դեպքում հանցագործությունն ավարտին չի հասնում անձի կամքից անկախ հանգամանքներով, իսկ այս դեպքում հանցագործությունը փաստորեն ավարտվում է⁷: Կարծում ենք, որ այս քննադատությունը տեղին չէ: Մեր կարծիքով՝ հանցագործությունն ավարտվում է այն դեպքում, երբ իրագործվում է կոնկրետ հանցակազմը: Հանցագործության ավարտի ցուցիչը տվյալ հանցակազմի բոլոր հատկանիշների առկայությունն է: Եթե հանցակազմի որևէ հատկանիշ բացակայում է, ապա ավարտված հանցագործության մասին խոսելն ավելորդ է: Որպես ասվածի ապացույց բերենք ակնհայտ հղի կնոջ սպանության դեպքը: Եթե անձը կարծում է, թե կինը հղի է և սպանում է նրան, սակայն պարզվում է, որ կինը հղի չէր, ապա քրեագետների մեծ մասի կարծիքով՝ արարքը պետք է որակվի որպես ակնհայտ հղի կնոջ սպանության փորձ:

Ինչ վերաբերում է վերը բերված բռնաբարության օրինակին, ապա նշենք հետևյալը: Սեռական հարաբերությունը բռնաբարության հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշն է: Կատարող է համարվում նաև այն անձը, որն իրականացնում է հանցագործության օբյեկտիվ կողմի մի մասը: Մեր կարծիքով՝ հանցագործության օբյեկտիվ կողմի մի մասն անձը կարող է իրականացնել՝ օգտվելով այլոց արարքներից, որոնք նպաստավոր պայմաններ են ստեղծում իր կողմից այն կատարելու համար: Ընդ որում, այլոք, որոնց արարքներից օգտվում է անձը, կարող են և հանցագործության սուբյեկտ չլինել:

Իրավիճակը փոքր-ինչ այլ է այն դեպքերում, երբ հանցավորը գիտակցաբար է օգտագործում այնպիսի անձանց, ովքեր ենթակա չեն քրեական պատասխանատվության: Մասնավորապես, խմբի կազմում գնում է հանցանքի կատարման կամ հանցանք կատարելու նպատակով խումբ է ստեղծում՝ այդ թվում կայուն խումբ՝ հանցավոր կազմակերպություն, հանցավոր համագործակցություն՝ գիտակցաբար խմբի մեջ ընդգրկելով այնպիսի անձանց, ովքեր ենթակա չեն քրեական պատասխանատվության: Բնականաբար, նման դեպքերում հանցափորձի մասին խոսելն ավելորդ է: Կարծում ենք, որ նման դեպքերում հանցավոր արարքը պետք է որակել այլ կանոններով: Մասնավորապես, եթե հանցավորի արարքը սահմանափակվել է միայն խումբ կամ համագործակցություն ստեղծելով, որոնք ոչ մի այլ հանցանք չեն կատարել, ապա անձը պետք է պատասխանատվության ենթարկվի այն հանցանքները կատարելու նախապատրաստության համար, որոնց կատարումը ծրագրավորված էր հանցավորի կողմից: Խմբի կողմից կոնկրետ հանցանք կատարելու դեպքում անձը պետք է պատասխանատվության ենթարկվի այդ հանցանքը կատարելու համար (հանցագործության միջնորդավորված կատարում): Եթե հանցավորն ինքն էլ մասնակցում է հանցագործության օբյեկտիվ կողմի կատարմանը, ապա նրա արարքը պետք է որակել առանց նշված ծանրացնող հանգամանքի, իսկ որպես քրեական պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք պետք է հաշվի առնվի նշված անձանց օգտագործելու փաստը (քր. օր.-ի հոդված 63-ի առաջին մասի 5-րդ կետ): Բայց վերոգրյալ վերջին իրավիճակն արդարացի լուծելու համար առաջարկում ենք այլ արմատական լուծում այն հոդվածներում, որտեղ որպես ծանրացնող հանգամանք նախատեսված է հանցանքը խմբի կողմից կատարելը, որպես հանցակազմի ծանրացնող հանգամանք նախատեսել նաև հանցանքն այնպիսի անձի հետ կատարելը, որը ենթակա չէ քրեական պատասխանատվության:

Հանցակցության հաջորդ հատկանիշն է հանցագործությանը մասնակցելու համատե-

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 118 2020

6. Снѝ Курс уголовного права. Общая часть. Т. 1: Учение о преступлении / Под ред. Н. Ф. Кузнецовой, И. М. Тяжковой. М., 2002, էջ 389:
7. Снѝ Энциклопедия уголовного права. Т.6, СПб 2007, էջ 35:

ղությունը:

Մենք չենք անդրադառնա համատեղության հատկանիշի վերաբերյալ քրեական իրավունքի տեսության մեջ առկա տարբեր տեսակետներին: Դրանք մանրամասն քննարկվել են «Քրեական իրավունքի հանրագիտարանի» 6-րդ՝ հանցակցությանը նվիրված հատորում⁸: Որպես աշխատանքային տարբերակ ընտրել ենք հենց այդտեղ առկա դիրքորոշումը: Ըստ դրա՝ համատեղությունը հանցակցության ժամանակ նշանակում է, որ բոլոր հանցակիցներն իրենց ներդրումն են ունենում բոլորի համար ընդհանուր հանցագործության մեջ⁹: Համատեղ մասնակցությունը բնութագրվում է երեք տարրերով՝ 1) հանցակիցների արարքների համատեղություն, 2) հանցավոր արդյունքի համատեղություն և 3) առաջին ու երկրորդ տարրերի միջև պատճառահետևանքային պայմանավորվածություն¹⁰: Ընդ որում, հանցավոր արդյունք ասելով պետք է հասկանալ ոչ միայն հանրորեն վտանգավոր հետևանքներն առաջանալու, այլև կատարողի կողմից հանցանքը կատարելու փաստը: Ինչ վերաբերում է պատճառահետևանքային պայմանավորվածությանը, ապա մեզ հետաքրքրող խնդրի շրջանակներում կարևոր է նշել, որ եթե խոսքը հանրորեն վտանգավոր հետևանքների մասին է, ապա պատճառական կապն առկա է կատարողի արարքի և դրանց միջև. մյուս հանցակիցների արարքները միայն պայմանի դեր են կատարում, իսկ եթե խոսքը կատարողի կողմից հանցանքը կատարելու մասին է, ապա մյուս հանցակիցների արարքները պատճառի դեր են կատարում: Սակայն կարևոր է մի ճշտում անել. մյուս հանցակիցների արարքների մասին խոսելիս նկատի ունենք հիմնականում դրդիչի արարքները, որոնցով նա կատարողի մեջ հանցանք կատարելու դիտավորություն է առաջացնում: Նույնը կարելի է ասել կազմակերպիչի մասին այն դեպքերում, երբ նա նաև դրդիչի դեր է կատարում: Մնացած դեպքերում, երբ կազմակերպիչն ինքը չի հանցանք կատարելու դիտավորություն առաջացնում կատարողի մեջ, ինչպես նաև օժանդակության դեպքում, այս հանցակիցների արարքները համատեղ արդյունքի հետ պատճառական կապի մեջ չեն, այլ միայն

պայմանի դեր են կատարում: Սրա հետ կապված՝ մեզ հետաքրքրում է այլ հարց: Քրեական իրավունքի տեսության մեջ ընդունված է, որ հանցակցությունը հնարավոր է մինչև հանցագործությունն ավարտվելը: Հանցագործությունները շատ դեպքերում երկու ավարտի պահ են ունենում՝ իրավաբանական և փաստական: Հարց է առաջանում՝ ո՞ր պահը պետք է նկատի ունենանք՝ հանցագործության իրավաբանական, թե՛ փաստական ավարտի պահը: Ասվածի արդիականությունը հիմնավորենք իրավակիրառ պրակտիկայից վերցված օրինակով: 2019 թվականի փետրվարի 4-ին՝ ժամը 00:30-ի սահմաններում, Երևան քաղաքի Երվանդ Քոչար փողոցում տաքսի ծառայություն մատուցող Յու. Ք-ի նկատմամբ ավազակային հարձակում գործելու դիտավորությամբ Է. Գ-ն դանակի գործադրմամբ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքով նրան գումար տալու պահանջ է ներկայացրել, որից հետո, Գ. Գ-ն միացել է հարձակմանը և Է. Գ.-ի գործողությունները լրացնելով՝ հանցավոր դիտավորությունն ի կատար ածելու ու գումար հափշտակելու նպատակով ստուգել է սուժողի գրպանը, իսկ Է. Գ.-ն, շարունակելով հանցավոր մտադրությունը, հարվածներ է հասցրել Յու. Ք-ին՝ վերջինիս առողջությանը պատճառելով ծանր վնաս: Հարց է առաջանում, թե ինչպես պետք է որակվեն Գ. Գ.-ի գործողությունները: Ինչպես գիտենք՝ ավազակային հարձակումը, որը հափշտակության եղանակ է, իրավաբանորեն ավարտված է համարվում հարձակման պահից: Այսինքն՝ սպառնալիքը տալու պահից Է. Գ.-ն արդեն ավարտել էր ավազակային հարձակումը: Գույքին տիրանալու հետ կապված գործողությունները դուրս են այս հանցակազմի շրջանակներից: Նույնպիսի իրավիճակ կարող է լինել շորթման դեպքում: Ոմն Ա. Ս. առողջությանը ծանր վնաս պատճառելու սպառնալիքով գույքը հանձնելու պահանջ է ներկայացնում Դ. Պ.-ին: Մինչ այդ նա իր ընկեր Ս. Վ.-ի հետ համաձայնության է գալիս առ այն, որ իր կողմից շորթումը կատարելու հաջորդ օրը վերջինս կամրապնդի պահանջը՝ Դ. Պ.-ին նորից սպառնալով և իրենց սպառնալիքների լրջու-

8. См. Энциклопедия уголовного права. Т.6, СПб 2007, էջ 39-88:
 9. См. Энциклопедия уголовного права. Т.6, СПб 2007, էջ 49:
 10. См. նույն տեղում, էջ 48-49:

թյան մեջ նրան հավաստիացնելով, ինչն էլ Ս. Վ.-ն կատարում է: Շորթումը ավարտվել էր Ա. Ս.-ի կողմից պահանջը ներկայացնելու պահից: Ըստ էության, Ս. Վ.-ն նույնպես անմիջականորեն իրականացնում է շորթման օբյեկտիվ կողմը: Նկարագրված երկու դեպքերում էլ հանցագործություններն իրավաբանորեն ավարտվել էին: Այնուամենայնիվ, կարծում ենք, որ այս դեպքերում ևս առկա է հանցակցությունը: Առաջին դեպքում հանցակիցը փաստորեն օգտվեց մյուս հանցակցի կողմից գործադրված սպառնալիքից և գույքին տիրացավ՝ այդ սպառնալիքի ազդեցությունն օգտագործելով: Նման իրավիճակում ճիշտ չի թվում նրա

արարքը որակել որպես կողոպուտ: Երկրորդ դեպքում հանցակիցն իրականացրեց հանցագործության օբյեկտիվ կողմը նախնական համաձայնությամբ, ճիշտ է՝ հանցանքն ավարտվելուց հետո: Եթե առաջին հանցավորի և երկրորդի միջև որևէ պայմանավորվածություն չլիներ, ապա հանցակցությունը կբացակայեր: Այսպիսով, կարելի է ձևակերպել հետևյալ կանոնը. հանցակցությունը հնարավոր է նախքան հանցանքը փաստացի ավարտվելը, եթե հանցավորների միջև առկա է եղել կատարվող արարքների կապակցությամբ համաձայնություն:



ԷԼՅԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

«Ն ոստիկանության շտաբի միջազգային համագործակցության վարչության ավագ տեսուչ,
«Ն ոստիկանության կրթահամալիրի ասպիրանտ

ԵՐԵՒԱՅԻՆ ԴԱՍԻԱՐԱԿԵԼՈՒ ԴԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ՈՉ ԴԱՏՇԱՋ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿՐԻՄԻՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ՀՀ-ՈՒՄ

Յուրաքանչյուր ժամանակակից հասարակության համար երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունը, նրանց ֆիզիկական և հոգեբանական զարգացման և որպես հասարակության լիարժեք անդամ դառնալու համար սոցիալականացման ապահովումը հիմնական խնդիրներից է:

Միջազգային փաստաթղթերի և «Ն օրենսդրության համաձայն՝ անչափահասներն օժտված են իրավունքների և ազատությունների համալիրով՝ այդպիսով ծնողների կամ իրավասու այլ անձանց կողմից դաստիարակության և խնամքի իրավունքով: Ընտանիքը համարվում է երեխայի ձևավորման բնական միջավայրը: Հենց այստեղ են ձևավորվում մարդու հոգեբանական և ֆիզիկական առողջության հիմքերը¹:

Հիմնվելով Երեխայի իրավունքների՝ ժնկյան հռչակագրի վրա՝ «Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան» (1989 թ.) հռչակում է. «Երեխան, նկատի ունենալով նրա ֆիզիկական և մտավոր անհասունությունը, կարիք ունի հատուկ պաշտպանության և հատուկ հոգատարության, ներառյալ՝ պատշաճ իրավական պաշտպանությունը ծնվելուց առաջ և հետո»: Երեխաների օրինական իրավունքների և շահերի քրեաիրավական պաշտպանությունը, հոգեբանական և բարոյական զարգացման ապահովումը երեխաների իրավական պաշտպանության կարևորագույն երաշխիքներից է²:

Երեխաների շահերի պաշտպանության

ուղղուում «Ն օրենսդրության հիմքում ընկած են մի շարք միջազգային պայմանագրեր, որոնք են «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիան, Նվազագույն տարիքի մասին կոնվենցիան, Անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու համար Միավորված ազգերի կազմակերպության նվազագույն ստանդարտ կանոնները (Պեկինյան կանոնները), ՄԱԿ-ի ուղենիշներն անչափահասների հանցավորությունը կանխելու վերաբերյալ (Ռիադյան ուղենիշներ), Ազատությունից զրկված անչափահասների պաշտպանության վերաբերյալ ՄԱԿ-ի կանոնները (Հավանայի կանոնները), Քրեական արդարադատության համակարգում հայտնված երեխաների նկատմամբ գործողությունների ուղենիշները (Վիեննայի ուղենիշները), Հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխաների գործերով արդարադատության ուղենիշները, Ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների վերաբերյալ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնները (Տոկիոյի կանոնները) և ԵԻՄ նախարարների կոմիտեի հանձնարարականները, որոնց իրագործման հիմքում ընկած է ծնողների կողմից երեխաներին դաստիարակելու պարտականության իրականացումը:

«Ն սահմանդրությամբ ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, կրթության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զար-

1. Стн Нечаева А. М. Семейное право. Учебник для академического бакалавриата 5-е изд. – М., 2001. էջ 97:
2. Стн Бойко Т. К., Вопросы привлечения к уголовной ответственности лиц, вовлекающих несовершеннолетних в преступную и антиобщественную деятельность // Советник юриста. 2011. № 4. URL : <http://dis.ru/library/667/26642/>.

զացման մասին (Հոդված 36):

«Հ ընտանեկան օրենսգիրքը սահմանում է, որ յուրաքանչյուր երեխա ունի ընտանիքում ապրելու և դաստիարակվելու, իր ծնողներին ճանաչելու, նրանց հոգատարությանն արժանանալու (որքան դա հնարավոր է), նրանց հետ համատեղ ապրելու իրավունք՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դա կարող է հակասել երեխայի շահերին: Երեխան ունի նաև իր ծնողներից դաստիարակություն ստանալու, նրա շահերի ապահովության, համակողմանի զարգացման, նրա մարդկային արժանապատվությունը հարգելու, ինչպես նաև ֆիզիկական, մտավոր, հոգևոր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ կենսապայմաններ ունենալու իրավունք (ՀՀ ԸՕ հոդված 41):

Երեխայի իրավունքների մասին ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի շրջանակներում նշվում է, որ երեխայի խնամքն ու դաստիարակությունն իրականացվում է հիմնականում ընտանիքում, որոնց պատասխանատվությունը կրում են ծնողները կամ այլ օրինական ներկայացուցիչները, ինչպես նաև պետության կողմից լիազորված պետական մարմինները: Նրանք ստեղծում են անհրաժեշտ պայմաններ երեխայի լիարժեք զարգացման, դաստիարակության, կրթության, առողջության պահպանման, ընտանիքում և հասարակության մեջ ինքնուրույն կյանքի նախապատրաստման համար: Նույն օրենքի 22-րդ հոդվածում ասվում է, որ երեխայի պատվի և արժանապատվության դեմ ոտնձգություն կատարած յուրաքանչյուր անձ՝ ներառյալ ծնողները կամ այլ օրինական ներկայացուցիչները, երեխայի դաստիարակությունը և ուսուցումն իրականացնող այլ անձինք պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հաշվի առնելով հայ հասարակությունում ընտանիքի դերը, ինչպես նաև երեխաների դաստիարակության գործում առկա ավանդույթներն ու սովորույթները՝ թվում է, թե հիմնախնդիրն արդիական չէ մեր երկրի համար: Սակայն վերջին ժամանակահատվածում ըստ ԶԼՄ-ների անցկացված հետազոտությունների և վիճակագրության՝ գործ ունենք այլ պատկերի հետ: Կան բազմաթիվ ծնողներ, որոնց մոտ

ծնողական զգացմունքներն այլ կերպ են արտահայտվում: Նրանք բավականաչափ հոգատարություն չեն դրսևորում իրենց երեխաների նկատմամբ, դաժան վերաբերմունք են ցուցաբերում, ներքաշում են հանցագործությունների կատարման և հակահասարակական գործողությունների մեջ: Ծնողների բացասական վերաբերմունքը պատճառ է հանդիսանում բարոյապես կոտորված անձի ձևավորման համար: Այսպիսի անձինք հասարակությունում առանձնանում են վառ արտահայտված հակահասարակական վարքով և համալրում հանցագործություն կատարած անձանց շարքերը³: Ընտանիքում երեխաների նկատմամբ դրսևորված բռնությունը, վատ վերաբերմունքը գործադրվել է ի պատասխան նրանց կողմից դրսևորված շեղվող վարքագծի:

Գործող օրենսդրության շրջանակներում երեխաների նկատմամբ իրենց պարտականությունները չկատարող ծնողների կամ պատասխանատու անձանց կարող են.

1. զրկել ծնողական իրավունքներից (ՀՀ ընտանեկան օրենսգիրք, հոդված 59),
2. սահմանափակել ծնողական իրավունքները (ՀՀ ընտանեկան օրենսգիրք, հոդված 63),
3. ենթարկել վարչական պատասխանատվության (Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք, հոդված 178),
4. ենթարկել քրեական պատասխանատվության (ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 170):

Երեխաների շահերի պաշտպանության ոլորտում քրեական իրավունքը հանդիսանում է նրանց իրավունքների պաշտպանության պետական երաշխիքը: ՀՀ քրեական օրենսգրքի 20-րդ գլխում ներկայացված են ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործությունները: Այս գլխում պատասխանատվություն է սահմանվում անչափահասին հանցանքի կատարմանը ներգրավելու համար (հոդված 165), երեխային պոռնկության կամ պոռնկագրական բնույթի նյութեր կամ առարկաներ պատրաստելու հետ կապված գործողություններ կատարելուն ներգրավելու համար (հոդված 166), երեխային ոգելից խմիչքների օգտագործմանը, ուժեղ ներգործող կամ այլ թմրեցնող նյութերի ոչ բժշկական օգտագործմանը, թա-

3. Кумановская А.Л. Права и обязанности родителей по воспитанию детей в семейном праве РФ. – Дисс. канд. юрид. наук. – М., 2005. էջ 36.

փառաշրջիկությանը ներգրավելու կամ մուրացկանության հետ կապված գործողություններ կատարելուն ներգրավելու համար (հոդված 166.1), ծնողներից երեխային ապօրինի բաժանելու կամ երեխային փոխելու համար (հոդված 167), խնամքը ստանձնելու նպատակով երեխայի առքի կամ ստանձնողի խնամքին հանձնելու նպատակով երեխայի վաճառքի համար (հոդված 168), որդեգրման գաղտնիքը հրապարակելու կամ որդեգրման համաձայնության տալուն հակելու կամ հարկադրելու համար (հոդված 169), երեխային դաստիարակելու պարտականությունը չկատարելու համար (հոդված 170), երեխայի կյանքի անվտանգության ապահովման կամ առողջության պահպանման պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար (հոդված 171) և ծնողի կողմից երեխային պահելուց չարամտորեն խուսափելու համար (հոդված 173):

Անդրադառնանք ՀՀ քրեական օրենսգրքի 170-րդ հոդվածին, այն է՝ երեխային դաստիարակելու պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու կրիմինոլոգիական բնութագիրը Հայաստանի Հանրապետությունում:

Ըստ հոդվածի առաջին մասի՝ ծնողի կամ այն անձի կողմից, ում վրա դրված է երեխայի դաստիարակության և խնամքի պարտականություն, կամ մանկավարժի, կամ ուսումնական, բուժական, կամ դաստիարակչական հաստատության այլ աշխատողների կողմից երեխային դաստիարակելու պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որն առաջացրել է երեխայի իրավունքների և օրինական շահերի էական խախտում՝ պատժվում է տուգանքով՝ նվազա-

գույն աշխատավարձի հիսնապատիկից հարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

Նույն հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ եթե նույն արարքը զուգորդվել է անչափահասի նկատմամբ դաժան վերաբերմունքով, պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

Յուրաքանչյուր հանցագործության կրիմինոլոգիական բնութագրի ուսումնասիրումը սկսվում է նրա քանակական և որակական բնութագրիչերի հետազոտությունից: Ուսումնասիրվել է 2010-2019 թթ. ընթացքում առկա վիճակագրությունը: Հարաբերական ցուցիչները ներկայացված են հանցավորության ընդհանուր թվի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցավորության համեմատության շրջանակներում:

Ըստ ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի վիճակագրության՝ 2010-2016 թթ. ընթացքում երեխաների շահերի դեմ ուղղված հանցագործությունները բացարձակ թվով նվազում են: 2019 թ. նկատվում է բացարձակ թվով աճ (կրկնապատկվել է): Բացարձակ թվով աճ է նկատվում նաև ՀՀ ՔՕ 170-րդ հոդվածի շրջանակներում գրանցված հանցագործությունների շրջանակներում (Աղյուսակ 1):

Տարիներ	ՀՀ-ում գրանցված հանցագործությունների քանակ	Երեխաների շահերի դեմ ուղղված հանցագործությունների քանակ	ՀՀ ՔՕ 170-րդ հոդվածի շրջանակներում գրանցված հանցագործությունների քանակ
2010	15477	37 / 0,24%	0
2011	16572	30 / 0.18%	1 / 3.3%
2012	15776	28 / 0.18%	1 / 3.6%
2013	18333	25 / 0.13%	1 / 4%
2014	17546	15 / 0.08%	2 / 13.3%

2015	17043	15 / 0.09%	2 / 13.3%
2016	18764	7 / 0.03%	1 / 14.2%
2017	20284	20 / 0.1%	2 / 10%
2018	24678	19 / 0.8%	1 / 5.3 %
2019	26850	41 / 0,15%	3 / 7.3%

Աղյուսակ 1. Ըստ ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի՝ 2010-2019 թթ. վիճակագրության

Անհրաժեշտ է նաև ուշադրությունը բևեռել այն հանգամանքին, որ վերոնշյալ հանցակազմի դեպքում դատական վարույթում նույն ժամանակահատվածում քննվել է երկու դեպք, որոնց դեպքում կայացվել է մեղադրական դատավճիռ և որոշվել է պատիժը պայմանականորեն չկիրառել՝ հաշվի առնելով գործի մի շարք հանգամանքներ⁴: Պատճառներից մեկը հողվածում առկա երկու հասկացությունների՝ «դատարարակել» և «դատան վերաբերմունք» ոչ միանշանակ մեկնաբանությունն է: Այս հասկացությունների սահմանումը հնարավորություն կտա դատավորներին դատական վարույթում խուսափել կամայական մեկնաբանություններից: ՀՀ քննչական կոմիտեի հրապարակած տվյալներով՝ 2019 թվականի ընթացքում երեխաների նկատմամբ կատարված հանցագործությունների վերաբերյալ 294 վարույթ է ընդունվել, որից 3-ը վերաբերել են ՀՀ քրեական օրենսգրքի 170-րդ հոդվածով նախատեսված երեխային դատարարակելու պարտականությունը չկատարելուն կամ ոչ պատշաճ կատարելուն: Գրեթե նույն պատկերն առկա է մյուս տարիներին⁵: 170-րդ հոդվածի շրջանակներում նախատեսված հանցագործություններին բնութագրական են ներընտանեկան հարաբերությունները և երեխայի նկատմամբ դատան վերաբերմունքը, ինչը նշանակում է ընտանեկան բռնության ուսումնասիրու-

թյուն: Յու. Պուդովչեչկինը նշում է, որ «երեխային դատարարակելու պարտականությունը չկատարելու և բռնության կատարվող հանցագործությունների միջև կապն արտահայտվում է այն հանգամանքով, որ երեխայի նկատմամբ բռնության գործադրումը հանգեցնում է երեխայի մոտ մի շարք սոցիալ-հոգեբանական անբարենպաստ հետևանքների»⁶: Ըստ ՀՀ ՔՕ՝ երեխաների շահերի դեմ ուղղված հանցագործությունների դեպքում ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի տվյալներով տեսնում ենք հետևյալ պատկերը (մոր կողմից նորածին երեխայի սպանությունը (հոդված 106), բռնաբարություն կամ սեքսուալ բնույթի բռնի գործողություններ կատարելը (հոդվածներ 138 և 139), խոշտանգում (հոդված 119), մարդու իմունային անբավարարության վիրուսի հարուցիչով և վեներական հիվանդությամբ կամ այլ սեռավարակներով վարակելը (հոդված 123, 124), անձին առանց իր համաձայնության բժշկական կամ գիտական փորձերի ենթարկելը (հոդված 127), ելգենիկական փորձեր իրականացնելը (հոդված 127.1), մարդուն առևանգելը (հոդված 131), թրաֆիքինգ կամ շահագործումը (հոդված 132.2), շահագործման վիճակում գտնվող անձի ծառայությունից օգտվելը (հոդված 132.3), ազատությունից ապօրինի զրկելը (հոդված 133), պոռնկությամբ զբաղվելուն նպաստելը (հոդված 262), թմրամիջոցների

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 118 2020

4. <http://www.datalex.am/> Դատական տեղեկատվական համակարգ, վերջին դիտում 01.04.2020 թ.:
 5. <http://www.investigative.am/home.html> ՀՀ քննչական կոմիտե, վերջին դիտում 01.04.2020 թ.:
 6. Пудовочкин Ю.Е. Уголовно-правовые и криминологические проблемы предупреждения преступлений против несовершеннолетних. Дисс. доктора юрид. наук. – М., 2005. էջ 210.

կամ հոգեմետ նյութերի գործարկմանը | վարձկանությունը (հոդված 395)).
 հակելը կամ ներգրավելը (հոդված 272) և |

Տարի	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019
Նշ. հոդվածներ	10	16	16	19	9	31	9	24	21	13
20-րդ գլուխ	37	30	28	25	15	15	7	20	19	41
Ընդ.	47	46	44	44	24	46	16	44	40	54
%	0,3	0,27	0,28	0,28	0,14	0,27	0,09	0,22	0,16	0,2

Աղյուսակ 2. ՀՀ ՔՕ հոդվածներ, որոնց դեպքում տուժողը եղել է անչափահաս

Այս իրավիճակում կարևոր է նաև հաշվի առնել, որ տվյալ հանցագործությունն ունի լատենտայնության բարձր աստիճան: Արտասահմանյան երկրներում ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այս տիպի հանցագործությունները չեն հայտնվում պաշտոնական վիճակագրությունում մի շարք պատճառներով՝ «չխառնվել ընտանեկան հարաբերություններին», «չցանկանալ ծնողների դեմ հայտարարություն տալ», «պատճառված վնասն այնքան էլ մեծ չի» և այլն⁷: Հետևաբար, ենթադրվում է, որ 170-րդ հոդվածին բնորոշ բազմաթիվ գործողություններ ՀՀ-ում կարող են դուրս են մնալ պաշտոնական վիճակագրությունից, իրավապահ մարմինների աչքից կամ, առավելագույնը, քննվել վարչական վարույթի շրջանակներում: Նման պայմաններում առկա վիճակագրության շրջանակներում տվյալ հանցագործության կրիմինոլոգիական բնութագիրը տալը դառնում է առավել բարդ: Այդ իսկ պատճառով այս հանցագործությունների ուսումնասիրությո-

նությունը պետք է դիտարկել բռնությամբ կատարվող, ընտանիքի, ինչպես նաև անչափահասների դեմ ուղղված հանցավորության շրջանակներում: Ինդիքի վերհանման համար կարևորագույն նշանակություն են ձեռքբերում անցկացված ընտրանքային, սոցիոլոգիական հետազոտությունները: Երեխաների շահերի պաշտպանության շրջանակներում ՀՀ-ում անցկացվող մի շարք հետազոտությունները, ի տարբերություն պաշտոնական վիճակագրության, այլ արդյունքներ են տալիս: Նախ՝ ՀՀ ՔՕ 170 հոդվածի գործողությունները հիմնականում կատարվում են ֆիզիկական կամ հոգեբանական բռնության զուգորդմամբ: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հետ համատեղ «Բնակչության և զարգացման ռազմավարություններ» ծրագրի շրջանակում 2006 թ. ընթացքում ՀՀ ազգային վիճակագրական ծառայության հետ համատեղ իրականացրել է «Ընտանիք» ինստիտուտի ընտրանքային

7. Տե՛ս **Челябова Э.И.** Уголовно-правовой и криминологический анализ неисполнения обязанностей по воспитанию несовершеннолетнего. Дисс. канд. юрид .наук. – Махачкала, 2006. էջ 74:

հետազոտություն, որի արդյունքները հաստատում են հայկական ընտանիքներում երեխաների նկատմամբ բռնության և դաժան վերաբերմունքի առկայությունը⁸:

Մեկ այլ հետազոտություն, որն անցկացվել է 2014 թ. Էստոնիայի կանանց ուսումնասիրությունների և հետազոտությունների կենտրոնի (ENUT) և «Հույս և օգնություն» ՀԿ-ի կողմից համատեղ իրականացվող «Երեխաների պաշտպանություն բռնությունից գիտելիքների ամրապնդման և լավագույն փորձի միջոցով» ծրագրի շրջանակում, ներկայացնում է պաշտոնական վիճակագրության հետ չհամընկնող արդյունքներ: Մասնավորապես՝ ընտանիքում երեխաները ենթարկվում են ծեծի կամ ծեծին հավասարազոր այլ բռնի գործողությունների (էջ 84), աշխատանքի պարտադրման, սեռական բռնության (էջ 21), ֆիզիկական բռնության (էջ 30), ապտակի և հրմշտոցի (էջ 32), հոգեբանական բռնության (34) և այլն⁹: Այսպիսով, ուսումնասիրության արդյունքում կարող ենք ասել, որ երեխային դաստիարակելու պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու վերաբերյալ տեղեկատվությունը չի ներառվում ՀՀ պաշտոնական վիճակագրությունում: Փոխարենը այլ պատկեր է գործում ոչ պաշտոնական վիճակագրության դեպքում: Վաղ անցկացված տարբեր սոցիոլոգիական հետազո-

տությունների արդյունքները վկայում են ընտանիքում երեխաների նկատմամբ ֆիզիկական, հոգեբանական, սեռական բռնության առկայության մասին: Այսինքն, խնդիրն անհրաժեշտ է դիտարկել ընտանեկան բռնության և ներընտանեկան հարաբերությունների շրջանակներում: Նման արդյունքների պատճառները, մեր կարծիքով, մի քանիսն են: Առաջին հերթին՝ երեխային դաստիարակելու պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը դասակարգվում է ոչ մեծ ծանրության հանցագործությունների շարքում, որի դեպքում առավելագույն պատասխանատվությունը մինչև 1 տարի ազատազրկումն է: Երկրորդը 170-րդ հոդվածի օրենսդրական կառուցվածքի անլիարժեքությունն է և տվյալ հանցագործության՝ հստակ որակման պրակտիկայի բացակայությունը: Այստեղ կարևոր նշանակություն ունի նաև «դաստիարակել» հասկացությունը, որը մինչև այժմ չունի օրենսդրական սահմանում: Երեխային դաստիարակելու պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը կապված է երեխայի նկատմամբ դաժան վերաբերմունքի, նրանց նկատմամբ բռնության տարբեր ձևերի և բազմաթիվ այլ հանգամանքների հետ, որոնք ունեն սոցիոլոգիական հետազոտության միջոցով ուսումնասիրության անհրաժեշտություն:

8. Տես ՀՀ կառավարության 2014 թ. դեկտեմբերի 4-ի նիստի N 51 արձանագրային որոշման Հավելված 1, «Երեխայի հանդեպ բռնության երևույթի դեմ պայքարի հայեցակարգ», էջ 3 https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2104/12/51-2_1ardz.pdf.

9. Տես Երեխաների նկատմամբ բռնության դրսևորումները Հայաստանի Հանրապետությունում. հետազոտության արդյունքների վերլուծության հաշվետվություն <http://hopehelp.am/files//pdfs//violence%20against%20children%20in%20the%20republic%20of%20armenia.pdf>.

ՍԵՐԺ ՌՈՒՇԱՆՅԱՆ

Քենթրիջի համալսարանի իրավաբանական ֆակուլտետ
 Իրավագիտության մագիստրոս (Master of Laws)
 Պանթեոն-Սորբոն Փարիզ 1 համալսարանի իրավաբանական ֆակուլտետ
 Մագիստրատուրա (Master 1)

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԵՊԱՅԻՆ ԳԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՌԵԹՐՈԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ (ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԻ ՄԵՋ) ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՐՏԱՀԱՅՏԱԾ ԳԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈՒ

1. Ներածություն

Հայաստանի Հանրապետությունում օրենսդրական մակարդակում ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումները չեն հանդիսանում նախադեպային իրավունք կազմող որոշումներ և, հետևաբար, չեն դասվում իրավունքի աղբյուրների շարքին, որով պայմանավորված էլ օրենսդրական կարգավորումներից դուրս են մնացել վերոնշյալ դատարանի որոշումներում տեղ գտած նախադեպային դիրքորոշումների ռեթրոակտիվության վերաբերյալ հարցերը: ՀՀ Վճռաբեկ դատարանին 2005 թվականից մինչև այսօր տրվել է օրենքների միատեսակ կիրառությունն ապահովելու գործառույթ¹, և վերջինս օրենքներ մեկնաբանելիս սկսել է *de facto* նորմաստեղծ գործունեություն կատարել, սակայն ՀՀ Վճռաբեկ դատարանի դիրքորոշումների նկատմամբ երբևէ չեն կիրառվել քրեաիրավական անբարենպաստ փոփոխությունների հետադարձ կիրառության անթույլատրելիության և քրեաիրավական բարենպաստ փոփոխությունների պարտադիր հետադարձ կիրառության սկզբունքները: Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների

պաշտպանության մասին Եվրոպական Կոնվենցիայի (այսուհետ՝ Եվրոպական Կոնվենցիա) 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «[n]չ ոք չպետք է մեղավոր ճանաչվի որևէ գործողության կամ անգործության համար, որը կատարման պահին գործող ներպետական կամ միջազգային օրենքների [law] համաձայն, հանցագործություն չի համարվել: Չի կարող նաև նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը կիրառելի է եղել հանցագործության կատարման պահին»²: Եվրոպական Կոնվենցիայի 7-րդ հոդվածով ամրագրված երաշխիքի կարևորությունը Եվրոպական Կոնվենցիայով հաստատված մարդու իրավունքների պաշտպանության համակարգում դրսևորվում է այն փաստով, որ, համաձայն 15-րդ հոդվածի, դրանից ոչ մի շեղում թույլատրելի չէ նույնիսկ պատերազմի կամ ժողովրդի անվտանգությանը սպառնացող ցանկացած այլ արտակարգ իրավիճակի ժամանակ: Քննարկվող երաշխիքի մեկնաբանությունն ու կիրառությունը պետք է ուղղված լինեն կամայական հետապնդման, դատապարտման և պատժի կանխելուն³:

1. ՀՀ սահմանադրություն (2015թ.-ի փոփոխություններով) 171-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետ:
 2. Council of Europe, European Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms, as amended by Protocols Nos. 11 and 14, 4 November 1950.
 3. S.W. v. The United Kingdom (Application. no. 20166/92) 22 November 1995, para. 34; C.R. v. The United Kingdom

● ՕՐԵՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 118 2020

2. Դատարանի նախադեպային որոշումների հավասարեցումը օրենքին

Նախ՝ անհրաժեշտ են համարում ընդգծել, որ Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարանը (այսուհետ՝ Եվրոպական Դատարան կամ Դատարան) բազմաթիվ որոշումներում արձանագրել է, որ վերոնշյալ օրենք (law) եզրույթը ներառում է ինչպես գրված օրենքը, այնպես էլ դատական նախադեպային իրավունքը⁴: Դեռևս 1979 թվականին Եվրոպական Հանձնաժողովը Եվրոպական Կոնվենցիայի 10-րդ հոդվածի քննարկման շրջանակներում նշել է, որ օրենքով նախատեսված արտահայտությունը (prescribed by law) ներառում է ինչպես գրված օրենքը, այնպես էլ դատական նախադեպային իրավունքը: Եվրոպական Հանձնաժողովը նշել է նաև, որ կարևոր չի համարում այն փաստը, որ դատարանի մտադրությունը եղել է նախադեպային իրավունք ստեղծելը և ոչ թե օրենսդրություն: Օրենք (Law) եզրույթի սահմանափակ մեկնաբանումը ակնհայտորեն կհակասեր Եվրոպական Կոնվենցիայի հեղինակների մտադրությանը⁵: Հետազոտության այս հատվածում կարևոր է արձանագրել, որ Եվրոպական Դատարանի կողմից Եվրոպական Կոնվենցիայում կիրառվող օրենք (Law) եզրույթին տալով ավելի լայն մեկնաբանություն՝ այն դիրքորոշումները, որոնք ներկայացվել են գրված օրենքների վերաբերյալ, անուղղակիորեն դարձել են կիրառելի նաև դատական նախադեպային իրավունք կազմող դիրք-

որոշումների (այսուհետ՝ նախադեպային դիրքորոշումներ կամ որոշումներ) վրա:

3. Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի նախադեպային դիրքորոշումները և քրեաիրավական անբարենպաստ փոփոխությունների հետադարձ կիրառության անթույլատրելիության սկզբունքը

Եվրոպական Կոնվենցիայի 7-րդ հոդվածը չի սահմանափակվում միայն ի վնաս մեղադրվող անձի քրեական օրենսդրության հետադարձ կիրառման արգելմամբ⁷: Վերջինս իր մեջ ներառում է նաև *nullum crimen, nulla poena sine lege* սկզբունքը, ըստ որի՝ միայն օրենքով կարող է որակվել արարքը որպես հանցագործություն և սահմանվել պատիժ⁸: Վերջինս բացի այն, որ արգելում է քրեական օրենքն ընդարձակորեն մեկնաբանել ի վնաս մեղադրյալի, արգելում է նաև ընդլայնել քրեական օրենքով նախատեսված հանցակազմի սահմանները՝ դարձնելով քրեորեն պատժելի այն արարքները, որոնք մինչ ընդլայնելը հանցագործություններ չեն համարվել: Քննարկվող հոդվածը նաև ենթադրում է որակական երկու պահանջներ, որոնք վերաբերում են օրենքի մատչելիությանը և կանխատեսելիությանը⁹: Այս հետզատության շրջանակներում քննարկվելու է կանխատեսելիության պահանջը: Եվրոպական Դատարանը, բազմիցս ընդունելով, որ շատ օրենքներ անխուսափելիորեն սահմանվում են այնպիսի եզրույթներով, որոնք համե-

● ՕՐԵՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 118 2020

(Application. no. 20190/92) 22 November 1995, para. 32; Kafkaris v. Cyprus (Application. no. 21906/04) 12 February 2008, para. 137.
 4. Kokkinakis v. Greece (Application. no. 14307/88) 25 May 1993, paras. 40-41; Cantoni v. France (Application. no. 17862/91) 25 November 1996, para. 29; Coëme and Others v. Belgium, (Application. nos. 32492/96, 32547/96, 32548/96, 33209/96 and 33210/96) 22 June 2000, para. 145; E.K. v. Turkey (Application. no. 28496/95) 07 February 2002, para. 51.
 5. The Sunday Times v. he United Kingdom (Application. no. 6538/74) 26 April 1979, paras. 47-49.
 6. Welch v. the United Kingdom (Application. no. 17440/90) 9 February 1995, para. 36; Jamil v. France (Application. no. 15917/89) 08 June 1995, para. 35; Ecer and Zeyrek v. Turkey (Application. nos. 29295/95, 29363/95), 08 June 1995, para. 36; Mihai Toma v. Romania (Application. no. 1051/06) 24 January 2012, para. 26-31.
 7. ՏՄ սհղում 2, Kokkinakis, para. 53.
 8. ՏՄ սհղում 2, Coëme, para. 145.
 9. ՏՄ սհղում 2, Kokkinakis, paras. 40-41: ՏՄ սհղում 2, Cantoni, para. 29: ՏՄ սհղում 2, Coëme, para. 145: ՏՄ սհղում 2, E.K. para. 51:

մատաբար անորոշ են¹⁰, նշել է, որ քրեական օրենքի զարգացումը, դատական օրինաստեղծ գործունեությունը Եվրոպական Կոնվենցիայի անդամ պետությունների իրավական սովորույթների՝ արմատավորված և անհրաժեշտ մասն են¹¹:

3.1 Եվրոպական Դատարանի դիրքորոշումները քրեահրավական անբարենպաստ փոփոխությունների հետադարձ կիրառության անթույլատրելիության սկզբունքի վերաբերյալ

Եվրոպական Դատարանի դիրքորոշումների վերլուծությունից կարելի է պայմանականորեն առանձնացնել դատական մեկնաբանության երկու տեսակ, որոնց անդրադարձել է Դատարանը՝ 1. հստակեցնող մեկնաբանություն, 2. փոփոխող մեկնաբանություն:

3.1.1 Հստակեցնող մեկնաբանություն

Իր նախադեպային որոշումներով Եվրոպական Դատարանը նշել է, որ Եվրոպական Կոնվենցիայի 7-րդ հոդվածը չի արգելում քրեական օրենքի աստիճանաբար գործից գործ հստակեցումը, եթե վերջինս բխում է հանցագործության էությունից և կարող է ողջամտորեն կանխատեսելի լինել¹²:

Հատկանշական է, որ այն դեպքում, երբ հստակեցնող մեկնաբանությունը տրվում է **առաջին անգամ**, Եվրոպական Դատարանը սահմանել է ամենամեղմ մոտեցումը: Դատարանը *Jorgic*-ի գործով նշել է, որ երբ դատարանը պետք է քրեական

օրենքը մեկնաբանի առաջին անգամ, մեկնաբանությունը համարվում է կանխատեսելի, երբ վերջինս միայն բխում է հանցագործության էությունից¹³: Վերոնշյալ գործով հանցավոր արարքները ներառում էին կիսաազմականացված խմբի ստեղծելը և մահմեդական խաղաղ բնակչությանը մահապատժի ենթարկելը: Ի թիվս այլ հանցագործությունների՝ դիմումատուին դատապարտվել էր ցեղասպանություն կատարելու համար: Գերմանիայի առաջին ատյանի դատարանը որոշել էր, որ գերմանական քրեական իրավունքում օգտագործվող «խմբի բնաջնջում» արտահայտությունը նշանակում էր խմբի բնաջնջում որպես հասարակական միավոր և չէր պահանջում դրա բնաջնջումը կենսաբանաֆիզիկական իմաստով: Եվրոպական Դատարանը, ըստ էության, գտել էր, որ Եվրոպական Կոնվենցիայի 7-րդ հոդվածի խախտում առկա չէր, քանի որ տրված մեկնաբանությունը հանցագործության էության հետ համատեղելի էր:

Ավելին, մի շարք որոշումներում Եվրոպական Դատարանը, հղում կատարելով *Jorgic*-ի գործին, նշել է, որ «այն դեպքում, երբ ներպետական դատարանները առաջին անգամ են մեկնաբանում քրեական օրենսդրության դրույթը, հանցակազմի շրջանակի վերաբերյալ տրված մեկնաբանությունը, որը բխում է այդ հանցագործության էությունից, պետք է, որպես կանոն, համարել կանխատեսելի»¹⁴: Վերոնշյալ վերլուծությունից կարելի է փաստել, որ Եվրոպական Դատարանն առաջին անգամ տրված հստակեցնող մեկնաբանության համար ցուցաբերել է ամենամեղմ մոտեցումը. այդ մասին է վկայում այն, որ

10. *Stu* հղում 2, *Kokkinakis*, para. 40; *Stu* հղում 2, *Cantoni*, para. 31.
 11. *Kruslin v. France* (Application. no. 11801/85) 24 April 1990, para. 29.
 12. *Rohlens v. The Czech Republic* (Application. no. 59552/08) 07 January 2015, paras. 50, 58; *Kononov v. Latvia Kononov* (Application. no. 36376/04) 17 May 2010, para. 185; *Del Río Prada v. Spain* (Application. no. 42750/09) 21 October 2013, para. 93.
 13. *Jorgic v. Germany* (Application. no. 74613/01) 12 July 2007, paras. 101-109.
 14. *Litschauer v. The Republic of Moldova* (Application. no. 25092/15) 13 November 2018, para. 10; *Berardi and Mularoni v. San Marino* (Application. nos. 24705/16, 24818/16) 10 January 2019, para. 44; *Staiano v. San Marino* (Application. no. 75201/16) 03 September 2019, para. 55

կախատեսելիության պայմանը Դատարանը համարում է առկա, եթե մեկնաբանությունը բխել է միայն հանցագործության էությունից, մինչդեռ արդեն տրված մեկնաբանությունը հստակեցնող մեկնաբանությունը հանցագործության էությունից բխելուց բացի, պետք է նաև առանձին համապատասխանի կանխատեսելիության պահանջին:

3.1.2 Փոփոխող մեկնաբանություն

Իրավական պրակտիկայում հնարավոր է փոփոխող (հանցակազմը լայնացնող) մեկնաբանության երեք դրսևորում, օրենսդրական նորմը փոփոխող մեկնաբանություն, ձևավորված նախադեպային իրավունքը փոփոխող մեկնաբանություն և օրենսդրական նորմը կամ ձևավորված նախադեպային իրավունքը փոփոխող մեկնաբանություն որպես մինչ այդ իրավական պրակտիկայի զարգացման ուղղության շարունակություն:

Օրենսդրական նորմը փոփոխող մեկնաբանություն

Dragotoniu-ի գործով մասնավոր առևտրային կազմակերպության երկու աշխատակիցներ դատապարտվել էին կաշառք ստանալու համար: Յուրաքանչյուրը ստացել էր ավտոմեքենա իրենց մասնագիտական պարտականություններին հակասող գործողությունների կատարման դիմաց: Ենթադրյալ հանցանքը կատարելու պահին քրեական օրենքով նախատեսված կաշառք ստանալու հանցակազմի առկայության համար անհրաժեշտ էր, որ արարք կատարող անձը եղած լինի պետական պաշտոնատար անձ, քաղաքացիական ծառայող կամ ունենա պետական ձեռնարկության աշխատողի կարգավիճակ: Վերաքննիչ դատարանը, ընդունելով վերագրյալը, նշել էր, որ կաշառք ստանալու հանցակազմն

ընդգրկում է նաև մասնավոր ընկերության աշխատակցի կողմից կաշառք ստանալը, քանի որ օրենսդրի նպատակն է եղել պատժել իրավաբանական անձի նկատմամբ մասնագիտական պարտավորություններ ունեցող անձին, որն այդ պարտավորություններն անտեսում է այլ անձի հետ հարաբերություններում: Վճռաբեկ դատարանը վերահաստատել էր վերոնշյալ դիրքորոշումը: Եվրոպական Դատարանն այս գործով արձանագրել էր խախտում՝ նշելով, որ մինչ այդ արարքի կատարումը մասնավոր առևտրային ընկերությունների աշխատակիցների կողմից կաշառք ստանալը երբեք չի որակվել որպես քրեորեն պատժելի արարք, և մասնավոր կազմակերպության աշխատակիցների համար դժվար, եթե ոչ անհնարին է եղել կանխատեսել բարձր դատարանի կողմից հանցակազմի լայնացումը¹⁵: Այսպիսով՝ Դատարանն անընդունելի է համարել հետադարձ կարգով ի վսաս մեղադրվողի կիրառված մեկնաբանությունը՝ համարելով օրենսդրական նորմի փոփոխությունը որպես անկանխատեսելի: Անհրաժեշտ է տարբերակել փոփոխող մեկնաբանության այս տեսակն արդեն քննարկված, առաջին անգամ տրված հստակեցնող մեկնաբանության տեսակից: Տարբերությունը հստակ պատկերելու համար անհրաժեշտ է քննարկումն իրականացնել ներկայացված գործերի փաստական հանգամանքների շրջանակներում: Վերը քննարկված *Jorgic*-ի գործով «խմբի բնաջնջում» արտահայտությունը հստակեցնելիս ներպետական դատարանը կարող էր նեղ կամ լայն մեկնաբանել հանցակազմի շրջանակը: Քննարկվող գործով ներպետական դատարանը լայն էր մեկնաբանել, որի արդյունքում մեղադրվողի արարքը որակվել էր որպես քրեորեն պատժելի, սակայն վերջինս Եվրոպական Դատարանը չի համարել որպես հանցակազմը փոփոխող մեկնաբանություն, այլ դիտարկել է որպես հստակեցնող, քանի որ որևէ

● ՕՐԵՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 118 2020

15. *Dragotoniu and Militaru-Pidhorni v. Romania* (Application. nos. 77193/01, 77196/01) 24 May 2007.

ձևակերպված օրենսդրական նորմ չի փոփոխվել, մինչդեռ Dragotoni-ի գործով ներպետական դատարանը, փոփոխելով հստակ ամրագրված նորմը, լայնացրել էր հանցագործության սուբյեկտների շրջանակը:

Ձևավորված նախադեպային իրավունքը փոփոխող մեկնաբանություն

Եվրոպական Դատարանն արձանագրել է, որ այն դեպքում, երբ ներպետական դատարանն իր մեկնաբանություններով փոփոխում է իր իսկ կողմից տրված նախկին մեկնաբանությունները (լայնացնում է հանցակազմի՝ իր իսկ նախանշած սահմանները), որը դժվար կամ անհնար է կանխատեսել արարքը կատարելու ժամանակ, ապա այդ փոփոխություններին հետադարձ ուժ տալը (այդ թվում նույն գործով կիրառելը) կարող է հանգեցնել ամբաստանյալի՝ Եվրոպական Կոնվենցիայի 7-րդ հոդվածով նախատեսված իրավունքի խախտման¹⁶:

Եվրոպական Դատարանի դիրքորոշումն ավելի խորքային ուսումնասիրելու համար անհրաժեշտ է ներկայացնել Pessino-ի գործի փաստական հանգամանքները: Այս գործով դիմումատուն ձեռք էր բերել կառուցելու թույլտվություն և սկսել էր շինարարական աշխատանքները: Որոշակի աշխատանքներ կատարելուց հետո վարչական դատարանն անվավեր էր ճանաչել դիմումատուի՝ կառուցելու թույլտվությունը, սակայն դիմումատուն շարունակել էր իր աշխատանքները, որի արդյունքում անձին քրեական պատասխանատվության էին ենթարկել առանց կառուցելու թույլտվության՝ շինարարական աշխատանքներ կատարելու համար: Դիմումատուն դիմել էր Ֆրանսիայի Վճռաբեկ դատարան՝ պարզելու, թե արդյոք անվավեր ճանաչված

թույլտվությամբ կատարված շինարարական աշխատանքները կարող է գնահատվել որպես առանց թույլտվության կատարված: Ֆրանսիայի Վճռաբեկ դատարանը, փոխելով իր դիրքորոշումը, արձանագրել է, որ այդ իրավիճակում նույնպես համարվում է, որ անձն աշխատանքները կատարել է առանց կառուցելու թույլտվության: Այս գործով Եվրոպական Դատարանն արձանագրել է, որ Ֆրանսիան, այս մեկնաբանությանը տալով հետադարձ կիրառություն, խախտել է Եվրոպական Կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված իրավունքը, քանի որ ներպետական դատարանը լայնացրել էր հանցակազմի սահմանները¹⁷:

Մեկ այլ գործով դիմումատուն քրեական պատասխանատվության էր ենթարկվել ցույցի մասնակցելու համար, որը ներառել էր բռնության գործողություններ անձանց և գույքի նկատմամբ: Դիմումատուն, ընդունելով ցույցին միանալու հանգամանքը, նշել էր, որ համաձայնություն չէր հայտնել և նպատակ չէր ունեցել մասնակցել բռնության գործողություններին: Մինչև արարքի կատարումը Շվեյցարիայի Վճռաբեկ դատարանի ձևավորած նախադեպային իրավունքի համաձայն՝ քննարկվող հանցակազմի առկայության համար անհրաժեշտ էր, որ անձը նախապես համաձայնություն հայտնած լիներ խմբի կողմից բռնության գործողություններ կատարելուն: Սակայն Վճռաբեկ դատարանը, սույն գործով փոփոխելով ձևավորված նախադեպային դիրքորոշումը, նշել էր, որ հանցակազմն առկա էր նույնիսկ այն դեպքում, երբ անձն ուղղակի ներկա էր ցույցին, քանի որ վերջինիս ներկայությունը ենթադրում էր հավանություն խմբի բռնության գործողություններին: Եվրոպական Հանձնաժողովը, գտնելով խախտում, նշել էր, որ ներպետական դատարանները կա-

16. Pessino v. France (Application. No. 40403/02) 10 October 2006, para. 35: Տե՛ս հղում 2, Coëme, para. 150: Տե՛ս հղում 13, Dragotoni, paras. 39-48.
17. Ibid. Pessino.

րող են հստակեցնել հանցակազմի հատկանիշները, սակայն ընդունելի չէ հետադարձությամբ կիրառել ներպետական դատարանների այն դիրքորոշումները, որոնք հանցակազմը փոփոխում են այնպես, որ ներառում են այնպիսի հատկանիշներ, որոնք մինչ այդ չեն հանդիսացել հանցակազմի մաս¹⁸: Այսպիսով՝ անհրաժեշտ է արձանագրել, որ Եվրոպական Դատարանը, ներպետական դատարանների նախադեպային որոշումները հավասարեցնելով ներպետական օրենքներին, կիրառել է օրենսդրական նորմի փոփոխությանը վերաբերող կանոնները և անընդունելի է համարել հետադարձ կարգով ի վնաս մեղադրվողի կիրառված մեկնաբանությունը՝ համարելով նախադեպային իրավունքի փոփոխությունը որպես անկանխատեսելի:

Օրենսդրական նորմը կամ ձևավորված նախադեպային իրավունքը փոփոխող մեկնաբանությունը որպես մինչ այդ իրավական պրակտիկայի զարգացման ուղղության շարունակություն

Եվրոպական Դատարանը S.W.-ի գործով արձանագրել է, որ այն դեպքում, երբ ներպետական դատարանն օրենսդրական նորմը կամ ձևավորված նախադեպային իրավունքը փոփոխող մեկնաբանություն է տալիս, ապա ողջամտորեն կանխատեսելիության պայմանն առկա է այն դեպքում, երբ մեկնաբանությունները հանցագործության էությունից բխելուց բացի, նաև հանդիսանում են իրավական պրակտիկայի զարգացման ուղղության շարունակություն¹⁹: Ավելի համակարգային ուսումնասիրելու համար այստեղ ևս անհրաժեշտ է ներկայացնել S.W.-ի գործի փաստական հանգամանքները: Դիմումատուները քրեական պատասխանատվու-

թյան էին ենթարկվել ամուսնության ընթացքում իրենց կանանց բռնաբարելու համար, այն դեպքում, երբ իրենց արարքի կատարման պահին քրեական օրենքը սահմանել էր բացառություն՝ ամուսնության ընթացքում կնոջը բռնաբարելը: Եվրոպական Դատարանը գտել էր, որ դիմումատուները պետք է կանխատեսեին ամուսնական բռնաբարությունը որպես հանցագործություն նախատեսող քրեական օրենքի զարգացումը, քանի որ մինչ արարքի կատարումն արդեն ընթանում էր ամուսինների իրավունքների և պարտավորությունների աստիճանաբար հավասարեցման գործընթաց²⁰, որի մասնավոր դրսևորում էր կանանց և տղամարդկանց՝ իրենց մարմիններին նկատմամբ ունեցած ինքնավարության հավասարեցումը²¹: Այսպիսով՝ կարելի է արձանագրել, որ Եվրոպական Դատարանը, սահմանելով բացառություն, կանխատեսելի է համարել այն փոփոխությունը (հանցակազմի սահմանների լայնացումը), որը իրավական պրակտիկայի զարգացման ուղղության շարունակություն է:

3.2 Միջանկյալ եզրահանգումներ

Եվրոպական Դատարանի վերոնշյալ դիրքորոշումների վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ Դատարանն ամենամեղմ մոտեցումը ցուցաբերել է առաջին անգամ տրված հստակեցնող մեկնաբանության համար՝ կանխատեսելիության պայմանը համարելով առկա, եթե մեկնաբանությունը բխել է միայն հանցագործության էությունից: Դատարանը մեղմ մոտեցում է ցուցաբերել նաև արդեն տրված մեկնաբանությունը հստակեցնող մեկնաբանության համար: Չնայած Դատարանը վերջինիս կանխատեսելիության պահանջի առկայությունն

18. Enkelmann v. Switzerland (Application. No. 10505/83) 04.03.1985.
 19. Տե՛ս հղում 1, S.W.
 20. Ibid. S.W., para. 26.
 21. Ibid. S.W., para., 36, 40: Տե՛ս հղում 1, C.R., para. 34.

ուղղակիորեն չի կապել հանցագործության էությունից բխելու հետ, դիրքորոշումների համակարգային վերլուծությունը թույլ է տալիս փաստել, որ հանցագործության էությունից բխող հստակեցնող մեկնաբանությունները *de facto* նույնպես համարվում են կանխատեսելի: Եվրոպական Դատարանն անհամեմատ խիստ մոտեցում է ցուցաբերել ձևավորված նախադեպային իրավունքը կամ օրենսդրական նորմը փոփոխող մեկնաբանությունների համար և, ըստ էության, վերոնշյալ դրսևորումներով փոփոխությունները, որպես կանոն, համարում է անկանխատեսելի՝ որպես բացառություն նախատեսելով այն դեպքերը, երբ վերջիններս իրավական պրակտիկայի զարգացման ուղղության շարունակություն են, որով դառնում են կանխատեսելի:

3.3 Եվրոպական Դատարանի դիրքորոշումների կիրառելիությունը ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումների վրա

Եվրոպական Դատարանի վերոնշյալ դիրքորոշումներն ուղղակիորեն կիրառելի են ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպային դիրքորոշումների վրա, քանի որ վերջիններս *de facto* կազմում է նախադեպային իրավունք որպես իրավունքի աղբյուր: Այն տեսակետը, որ ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումները չեն կարող կազմել նախադեպային իրավունք, քանի որ ՀՀ Սահմանադրությամբ վերջինս չունի նորմաստեղծ գործունեություն իրականացնելու գործառույթ, այլ միայն տալիս է մեկնաբանություններ արդեն գոյություն ունեցող նորմերի վերաբերյալ, հիմնավոր չէ, քանի որ այժմ ՀՀ Վճռաբեկ դատարանն իր մեկնաբանություններով ստեղծում, փոփոխում կամ դադարեցնում է իրավական նորմեր, որի օրինակները կներկայացվեն ստորև: Իրականությունից կտրված չլինելով՝ մի շարք երկրներ, ընդունելով իրենց բարձր դատարանների որոշումների նախադեպային բույթը, օրենսդրական մա-

կարդակում սահմանել են ռեթրոակտիվության համապատասխան կարգ: Ֆրանսիայի Վճռաբեկ դատարանը (Cour de cassation), ինչպես ՀՀ Վճռաբեկ դատարանը, չունի օրինաստեղծ գործունեություն իրականացնելու լիազորություն, սակայն պետությունն ընդունել է, որ որոշումները փաստացի ունեն դատական նախադեպային բնույթ: Արդյունքում՝ Ֆրանսիայի Վճռաբեկ դատարանի որոշումների վրա կիրառվում է դատական նախադեպերին բնորոշ ռեթրոակտիվության կարգ: *Revirement de jurisprudence*-ի իրավական ինստիտուտը վերաբերում է հենց Ֆրանսիայի բարձր դատարանների կողմից դիրքորոշումների փոփոխության ժամանակի մեջ կիրառությանը, մինչդեռ Հայաստանի Հանրապետությունում առկա չէ որևէ ներպետական իրավակարգավորում, որը կսահմանի ՀՀ Վճռաբեկ դատարանի դիրքորոշումների հետադարձ կիրառության կարգ: Արդյունքում՝ ՀՀ Վճռաբեկ դատարանի գործունեության ամբողջ ընթացքում վերջինիս բոլոր դիրքորոշումները կիրառվել են հետադարձ կարգով՝ ներառյալ այն դեպքերը, երբ չեն պահպանվել կանխատեսելիության պայմանները: Հետազոտության այս հատվածում կքննարկեմ որոշումներ, որտեղ ՀՀ Վճռաբեկ դատարանը, հետադարձ կիրառելով ձևավորված նախադեպային իրավունքը և օրենսդրական նորմերը փոփոխող մեկնաբանությունները, որոնք արարքը կատարողի համար դժվար կամ անհնար էր կանխատեսել, խախտել է Եվրոպական Կոնվենցիայի 7-րդ հոդվածը:

3.3.1 ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ ձևավորված նախադեպային իրավունքը փոփոխող մեկնաբանություն

Այսպիսով՝ անհրաժեշտ է ներկայացնել մի օրինակ, որտեղ Վճռաբեկ դատարանն իր իսկ նախադեպային դիրքորոշումը փոփոխել և կիրառել է նույն գործով, որով ակնհայտորեն խախտվել է Եվրոպական

● ՕՐԵՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 118 2020

Կոնվենցիայի 7-րդ հոդվածը: ՀՀ Վճռաբեկ դատարանն Արթուր Սերոբյանի գործով նշել էր, որ «[...] արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցակազմով՝ զենքի և որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ խուլիգանություն որակելու համար **բավարար չէ զենք կամ որպես զենք օգտագործվող առարկայի գործադրմամբ ուրիշի գույքը ոչնչացնելու կամ վնասելու հատկանիշը** (ընդգծումը՝ հեղինակի): ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցակազմի համար **պարտադիր է**, որպեսզի հանցավորը խուլիգանական գործողություններ կատարելու ընթացքում զենքով կամ որպես զենք օգտագործվող առարկայով մարմնական վնասվածք հասցնի կամ փորձի հասցնել, կամ էլ նրա **գործողությունների հետևանքով անձանց կյանքի կամ առողջության համար իրական վտանգ ստեղծվի** (ընդգծումը՝ հեղինակի): [...]»²²: Պետք է նշել նաև, որ գործով պարզվել էր, որ Արթուր Սերոբյանի կողմից արարքը կատարվել էր հանրային վայրում՝ գիշերային ակումբում, ինչպես նաև եղել էին այլ անձինք (պարուհիներ), իսկ անկանոն կրակոցները, որոնք վնասել էին գույքը, արձակվել էին 7,65 տրամաչափի «Մաուզեր» տեսակի զենքով:

Տարիներ անց ՀՀ Վճռաբեկ դատարանն Ազատ Էդվարդի Խլղայանի գործով նշել էր, որ «[...] հանցանքի կատարման հանրավտանգ եղանակը, այն է՝ **ինքնաձիգով մի քանի անկանոն կրակոցներով մարդաշատ վայրում գույքը վնասելը** (ընդգծումը՝ հեղինակի), արդեն իսկ վկայում է անձանց կյանքի և առողջության համար իրական վտանգ ստեղծելու մասին, ինչը բավարար է (ընդգծումը՝ հեղինակի)

հանցավորի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասի՝ զենքի գործադրմամբ խուլիգանության հատկանիշների առկայությունը հավաստելու համար: [...]»²³: Վերոնշյալ երկու որոշումների ուսումնասիրությունը թույլ է տալիս փաստել, որ նախկինում նույնական փաստական հանգամանքներով ՀՀ Վճռաբեկ դատարանը համարել է, որ զենքի և որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ խուլիգանություն որակելու համար բավարար չէ զենք կամ որպես զենք օգտագործվող առարկայի գործադրմամբ հանրային վայրում ուրիշի գույքը ոչնչացնելու կամ վնասելու հատկանիշը, քանի որ վերջինս չի վկայում անձանց կյանքի և առողջության համար իրական վտանգ ստեղծելու հանգամանքի մասին, իսկ տարիներ անց, փոփոխելով դիրքորոշումը, նշել է, որ ինքնաձիգով մի քանի անկանոն կրակոցներով մարդաշատ վայրում գույքը վնասելն արդեն իսկ վկայում է անձանց կյանքի և առողջության համար իրական վտանգ ստեղծելու մասին. հետևաբար, պետք է որակվի որպես զենքի և որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ խուլիգանություն: ՀՀ Վճռաբեկ դատարանի քննարկվող երկու որոշումների համակարգային վերլուծությունը թույլ է տալիս փաստել, որ ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից դիրքորոշման փոփոխման արդյունքում ինքնաձիգով մի քանի անկանոն կրակոցներով մարդաշատ վայրում գույքը վնասելը համարվել է անձանց կյանքի և առողջության համար իրական վտանգ ստեղծել, որով հանցակազմի շրջանակը լայնացվել է, սակայն, վերջինիս տալով հետադարձ ուժ, կիրառվել է նույն գործով՝ խախտելով Եվրոպական Կոնվենցիայի 7-րդ հոդվածը:

22. Արթուր Սերոբյանի գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ ԵՔՐԴ/0095/01/08 որոշում:

23. Ազատ Խլղայանի գործով Վճռաբեկ դատարանի 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ՏԴ/0095/01/08 որոշում:

3.3.2 ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ օրենսդրական նորմը փոփոխող մեկնաբանություն

Անհրաժեշտ ենք համարում ներկայացնել նաև այլ գործ, որով դատարանը փոփոխել է ոչ թե իր արտահայտած դիրքորոշումը, այլ օրենսդրական կոնկրետ ձևակերպումը: ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Իրավունք վերապահող կամ **պատասխանատվությունից ազատող** (ընդգծումը՝ հեղինակի) վկայական կամ պաշտոնական այլ փաստաթուղթ կեղծելը՝ կեղծողի կողմից անձամբ կամ այլ անձի կողմից դրանք օգտագործելու կամ իրացնելու նպատակով կամ այդպիսի փաստաթուղթ իրացնելը կամ նույն նպատակներով կեղծ կնիքներ, դրոշմներ, ձևաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշներ պատրաստելը կամ իրացնելը, ինչպես նաև ակնհայտ կեղծ փաստաթուղթ օգտագործելը»²⁴:

Վճռաբեկ դատարանը Սամվել Պապիկյանի և Արարատ Սարգսյանի գործով, անդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի իմաստով «իրավունք վերապահող կամ պատասխանատվությունից ազատող պաշտոնական փաստաթուղթ» եզրույթի հատկանիշներին, նշել է, որ «[...] հիշյալ եզրույթը ենթադրում է, որ համապատասխան հանցակազմի առարկան է կազմում իրավաբանական նշանակություն ունեցող փաստ, իրադարձություն հավաստող այն փաստաթուղթը, որը տրամադրում է որևէ իրավունք կամ **ազատում պատասխանատվությունից** (ընդգծումը՝ հեղինակի): Ընդ որում, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ խնդրո առարկա հոդվածի իմաստով «**պատասխանատվությունից ազատել**» (ընդգծումը՝ հեղինակի)

եզրույթը ներառում է ինչպես իրավական պատասխանատվության որևէ տեսակից (քրեական, վարչական, կարգապահական, քաղաքացիաիրավական և այլն), այնպես էլ որևէ **պարտականությունից ազատելու հատկանիշը** (ընդգծումը՝ հեղինակի): [...] Ա. Սարգսյանը, իր վրա դրված պարտականությունը չկատարելով, մասնավորապես՝ համապատասխան օրերին (2014 թվականի նոյեմբերի 5-ին և 2015 թվականի հունվարի 12-ին) բաժանմունք չներկայանալով, միառժամանակ հետին ամսաթվով ստորագրել է չներկայացած օրերի, այսինքն՝ հավաստել է իր վրա դրված պարտականությունն իբր պատշաճ կերպով կատարված լինելու փաստը՝ դրանով իսկ իրեն **ազատելով փաստացի չկատարված պարտականությունից** (ընդգծումը՝ հեղինակի): [...]»²⁵:

Վերոնշյալ մեկնաբանությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս փաստել, որ ՀՀ Վճռաբեկ դատարանը լայնացրել է քննարկվող հանցակազմի շրջանակը՝ ներառելով նաև պարտականությունից ազատելու հատկանիշը, որը դժվար, եթե ոչ անհնար է եղել կանխատեսելը, քանի որ վերջինս չի հանդիսացել օրենսդրական և դատական պրակտիկայի զարգացումների շարունակություն: Այսպիսով՝ ՀՀ Վճռաբեկ դատարանը, այս դիրքորոշումը հետադարձ կիրառելով, խախտել է Եվրոպական Կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված իրավունքը:

Ավելին՝ վերոնշյալ մեկնաբանությունները նաև հետադարձ կիրառվել են մեկ այլ գործով: ՀՀ Վճռաբեկ դատարանը, Արամ Վարդանյանի գործով որոշման 13.1 կետում հղում կատարելով Սամվել Պապիկյանի և Արարատ Սարգսյանի գործով որոշման 15-րդ կետի վրա (որով լայնացվել էր քննարկվող հանցակազմը), հետադարձ կիրառել

24. ՀՀ քրեական օրենսգիրք, ՀՕ-528-Ն, 18.04.2003, 325-րդ հոդվածի 1-ին մաս:

25. Սամվել Պապիկյանի և Արարատ Սարգսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2017 թվականի հունիսի 22-ի թիվ ԱՐԴ/0116/01/15 որոշման 15-րդ կետ:

էր վերոնշյալ դիրքորոշումը՝ արձանագրելով, որ «[...] Ա. Վարդանյանը իր վրա դրված պարտականությունը չկատարելով, մասնավորապես՝ համապատասխան օրը (2014 թվականի դեկտեմբերի 3-ին) բաժանմունք չներկայանալով, նախապես ստորագրել է չներկայացած օրվա դիմաց, այսինքն՝ հավաստել է իր վրա դրված պարտականությունն իբր պատշաճ կերպով կատարված լինելու փաստը՝ դրանով իսկ իրեն ազատելով փաստացի չկատարված պարտականությունից: [...]»²⁶: Վերոնշյալից ակնհայտ է դառնում, որ այս գործով ևս խախտվել էր Եվրոպական Կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված իրավունքը, քանի որ դիրքորոշմանը տրվել է հետադարձ կիրառություն:

3.4 Միջանկյալ եզրահանգումներ

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ օրենսդրական մակարդակում ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումների ռեթրոակտիվության վերաբերյալ կարգավորումների բացակայության պատճառով ՀՀ Վճռաբեկ դատարանի արտահայտած բոլոր նախադեպային որոշումներն առանց բացառության ունեցել են հետադարձ ուժ: Արդյունքում՝ այն բոլոր դեպքերում, երբ արտահայտած դիրքորոշումները չեն համապատասխանել կանխատեսելիության պայմաններին, բայց հետադարձությամբ կիրառվել են, խախտվել է Եվրոպական Կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված իրավունքը: Շարունակելով պետք է նաև նշել, որ այն բոլոր դեպքերում, երբ ՀՀ Վճռաբեկ դատարանը, իրավունքի զարգացմամբ պայմանավորված, ապագայում փոփոխի իր դիրքորոշումը, որով ավելի խիստ մեկնաբանի որևէ քրեական նորմ և վերջինս ունենա հետադարձ ուժ

կխախտվի Եվրոպական Կոնվենցիայի 7-րդ հոդվածը, եթե այդ մեկնաբանությունը չի լինի իրավական պրակտիկայի զարգացման ուղղության շարունակություն: Արդյունքում՝ ստացվում է մի իրավիճակ, որտեղ օրենսդրական կարգավորման բացակայությունը կարող է խոչընդոտել ՀՀ Վճռաբեկ դատարանին, իրավունքի զարգացմամբ պայմանավորված, փոփոխել իր իսկ կողմից տրված մեկնաբանությունները:

Վերոգրյալից կարելի է եզրակացնել, որ քրեաիրավական անբարենպաստ փոփոխությունների հետադարձ կիրառության անթույլատրելիության սկզբունքի ապահովմանն ուղղված օրենսդրական կարգավորումների ընդունումն ունի առանցքային նշանակություն ոչ միայն մարդու իրավունքների պաշտպանության, այլև ՀՀ Վճռաբեկ դատարանի բնականոն գործունեությունն ապահովելու համար:

4. Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի նախադեպային դիրքորոշումները և քրեաիրավական բարենպաստ փոփոխությունների հետադարձ կիրառության սկզբունքը

Եվրոպական Դատարանը *Scoppola*-ի գործով դիրքորոշում է արտահայտել առ այն, որ չնայած Եվրոպական Կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին կետը չի նշում քրեաիրավական բարենպաստ փոփոխությունների հետադարձ կիրառության սկզբունքը՝ Եվրոպական Դատարանը համարում է, որ 7-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է ոչ միայն քրեաիրավական անբարենպաստ փոփոխությունների հետադարձ կիրառության անթույլատրելիության սկզբունքը, այլև քրեաիրավական բարենպաստ փոփոխությունների հետա-

26. Արամ Վարդանյանի գործով Վճռաբեկ դատարանի 2017 թվականի հունիսի 22-ի թիվ ԵՇԴ/0155/01/15 որոշման 13.1 կետ:

դարձ կիրառության սկզբունքը: Այս սկզբունքից նախ բխում է այն, որ եթե առկա են հանցագործության կատարման պահին գործող քրեական օրենքի և հետագայում ընդունված քրեական օրենքների միջև տարբերություններ, դատարանները պետք է կիրառեն այն օրենքը, որի դրույթները առավել բարենպաստ են ամբաստանյալի համար²⁷: Եվրոպական Դատարանը նշել է նաև, որ Եվրոպայում և միջազգային հարթակում աստիճանաբար ձևավորվել է կոնսենսուս, որ ավելի մեղմ պատիժ նախատեսող քրեական օրենքի հետադարձ կիրառումը հանցագործության կատարումից հետո դարձել է քրեական օրենքի հիմնարար սկզբունք²⁸: Քննարկվող սկզբունքը տարածվում է ոչ միայն կիրառելի պատժի, այլև հանցակազմի տարրերի վրա²⁹: Չնայած *Scoppola*-ի գործով Եվրոպական Դատարանը որևէ դիրքորոշում չի արտահայտել այն հարցի շուրջ, որ պետք է այս սկզբունքը կիրառվի նաև դատապարտյալների նկատմամբ, սակայն *Gouarre Patte*-ի գործով գտել է նաև դատապարտյալների նկատմամբ այս սկզբունքի կիրառման անհրաժեշտությունը, երբ ներքին օրենսդրությունը պահանջում է ներքին դատարաններից վերանայել դատավճիռը հետագայում տեղի ունեցող քրեաիրավական բարենպաստ փոփոխությունների պարագայում³⁰:

Վերոնշյալից երևում է, որ Եվրոպական Դատարանը դատապարտյալների նկատմամբ այս սկզբունքի կիրառությունը կապում է ներքին օրենսդրական կարգավորման հետ: Այսպիսով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածը սահմանում է, որ արարքի հանցավորությունը վերացնող,

պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը հետադարձ ուժ ունի, այսինքն՝ տարածվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց՝ այդ թվում այն անձանց վրա, ովքեր կրում են պատիժը կամ կրել են դա, սակայն ունեն դատվածություն: Եվրոպական Դատարանի որոշումների լույսի ներքո կարելի է եզրահանգել, որ Հայաստանի Հանրապետությունն ունի պոզիտիվ պարտականություն՝ ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներում առկա քրեաիրավական բարենպաստ փոփոխություններին տալ հետադարձ կիրառություն, որը հանդիսանում է Եվրոպական Կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին մասից բխող սկզբունք:

Հայկ Մովսիսյանի գործով ՀՀ Վճռաբեկ դատարանը, նեղացնելով հանցակազմի տարրերից մեկի շրջանակը, նախկինում դատապարտված անձանց կողմից կատարված արարքները դարձրել էր ոչ հանցավոր ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «[զինձառայողի կողմից իր առողջությանը վնաս պատճառելը (անդամախեղելը), որը հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել զինվորական ծառայության կամ դրա առանձին պարտականությունների կատարումը ժամանակավորապես դադարեցնելուն»³¹: Մինչ ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից այս դրույթի մեկնաբանություն տալը օգտագործված «կարող էր» ձևակերպումը դատարանները մեկնաբանում էին այնպես, որ սուբյեկտիվ կողմը կարող էր նաև դրսևորվել անուղղակի դիտավորությամբ, սակայն ՀՀ Վճռաբեկ դատարանը

27. *Scoppola v. Italy* (Application no. 10249/03) 17 September 2009, paras. 103-109.

28. *Ibid.* *Scoppola*, para. 106.

29. *Parmak and Bakir v. Turkey* (Application nos. 22429/07, 25195/07), 03 December 2019.

30. *Gouarre Patte v. Andorra* (Application no. 33427/10) 12 January 2016, paras. 28-36.

31. ՀՀ քրեական օրենսգրք, ՀՕ-528-Ն, 18.04.2003, 363-րդ հոդվածի 1-ին մաս:

32. Հայկ Արտավազյի Մովսիսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ՍԴ/0389/01/11

Հայկ Մովսիսյանի գործով նշել է, որ այս հանցակազմի սուբյեկտիվ կողմը բնութագրվում է միայն ուղղակի դիտավորությամբ³²: Սակայն հետագայում այն անձինք, ովքեր քրեական պատասխանատվության էին ենթարկվել արարքն անուղղակի դիտավորությամբ կատարելով, փաստացի հնարավորություն չեն ունեցել օգտվելու քրեաիրավական բարենպաստ փոփոխությունների հետադարձ կիրառության սկզբունքից՝ համապատասխան մեխանիզմների և կարգավորումների անհստակության պատճառով:

Թեև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 4142-րդ հոդվածով նախատեսված Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերից մեկը դատարանի թույլ տված արդարադատության բուն էությունը խաթարող դատական սխալն է³³, պետք է նշել, որ վերջինս չի հանդիսանում պատշաճ մեխանիզմ վերոնշյալ խնդրի լուծման համար, քանի որ ՀՀ Վճռաբեկ դատարանը դեռևս ոչ մի որոշմամբ քննարկվող խնդիրը չի համարել արդարադատության բուն էությունը խաթարող դատական սխալ: Ակնհայտ է, որ պետք է նախատեսվի առավել հստակ մեխանիզմ, որով կերաշխավորվի անձանց քննարկվող իրավունքի պաշտպանությունը: Նմանօրինակ լուծում կարող է լինել, օրինակ, քննարկվող իրավիճակի դիտարկումը որպես նոր երևան եկած հանգամանք,

ինչպիսին, օրինակ, դիտարկվում է Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրի հիման վրա գործող միջազգային դատարանների կողմից խախտում արձանագրելը:

5. Եզրակացություն

Եզրափակելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է ամփոփել հետևյալը.

Քրեաիրավական անբարենպաստ փոփոխությունների հետադարձ կիրառության անթույլատրելիության և քրեաիրավական բարենպաստ փոփոխությունների հետադարձ կիրառության սկզբունքների պատշաճ կիրառության համար անհրաժեշտ է օրենսդրական մակարդակում ամրագրել ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումների վրա վերոնշյալ սկզբունքների կիրառությունը և սահմանել իրագործման մեխանիզմները:

Սկզբունքների կիրառության երաշխավորմանն ուղղված օրենսդրական կարգավորումների ընդունումն ունի առանցքային նշանակություն ոչ միայն մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության համար, այլև ՀՀ Վճռաբեկ դատարանի բնականոն գործունեությունն ապահովելու համար:

որոշման 21-րդ կետը ; Եղիշե Արիստակեսի Ալոյանի գործով Վճռաբեկ դատարանի 2015 թվականի հունիսի 5-ի թիվ ԼԴ/0048/01/14 որոշման 22-րդ կետը:

33. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, ՀՕ-248, 01.07.1998, 4142-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետ:

ԴԱՎԻԹ ԶԻԼՖԻՄՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ,
Շիրակի մարզի դատախազության դատախազ

**ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆԱԽԿԻՆ ԱՇԽԱՏԱԿԻՑ
ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ**

Քրեական պատասխանատվության կիրառումը և հանցավոր անձի նկատմամբ պատժի նշանակումը փոխում է իրավախախտ անձի իրավական վիճակի բովանդակությունը: Ինչպես և բոլոր դատապարտվածները, իրավապահ մարմինների նախկին աշխատակից անձինք ևս դառնում են քրեակատարողական իրավահարաբերության սուբյեկտ, որն ունի օրենքով ամրագրված որոշակի իրավական վիճակ: Այդ վիճակի էական տարրն է սուբյեկտի՝ դատապարտյալի, իրավունքների ու պարտականությունների բովանդակությունը¹:

Իրավունքի տեսության մեջ ընդունված մոտեցում է, որ անհատի իրավական վիճակը հասարակության մեջ նրա իրավաբանորեն ամրագրված վիճակն է, որն արտահայտում է անհատի իրավական կեցության բոլոր հիմնական կողմերը, նրա շահերը, պահանջունքները, փոխհարաբերությունը պետության հետ, աշխատանքային և քաղաքական գործունեությունը: Իրավական վիճակի հիմքում ընկած է անհատի փաստական հասարակական դրությունը, այսինքն՝ մարդու իրական դրությունը հասարակական հարաբերությունների տվյալ ոլորտում: Իրավունքը միայն ամրագրում է այդ դրությունը, այն դնում է օրենսդրական և երաշխավորված հունի մեջ. հետևաբար, անհատի իրավական վիճակը կարելի է բնորոշել որպես հա-

սարակության մեջ անհատի իրավաբանորեն ամրագրված դրություն, որը կոչված է երաշխավորելու մարդու ազատությունը, իրավահավասարությունը, արժանապատվությունը²:

Անհատի իրավական վիճակը նրա կարգավիճակն է հարաբերությունների կամ հաղորդակցման որոշակի ոլորտում: Ըստ անհատի հաղորդակցման այդ ոլորտների՝ նրա կողմից կատարվող սոցիալական դերերի քանակի ու առանձնահատկությունների, նրա ընդհանուր իրավական կարգավիճակը կոնկրետացվում և հստակեցվում է: Քաղաքացիների ընդհանուր իրավական կարգավիճակն ամրագրված է ՀՀ Սահմանադրության 2-րդ գլխում որպես սահմանադրական իրավունքների ու ազատությունների համակցություն:

Անհատի իրավական կարգավիճակը նրա իրավական դրությունն է որոշակի ոլորտներում՝ սահմանված առանձին օրենսդրական ակտերով: Իրավապահ մարմինների նախկին աշխատակիցները կազմում են հատուկ կարգավիճակ ունեցող անձանց առանձին խումբ: Նրանց կարգավիճակը մեր հետազոտության առարկայի տեսանկյունից ունի երկու կողմ. առաջին՝ իրավապահ մարմինների նախկին աշխատակից հանդիսանալը, և երկրորդ՝ դատարանի դատավճռով դատապարտված լինելը: Այսպիսով, իրավապահ մար-

1. Տե՛ս **Наумов А.В.**, Механизм уголовно-правового регулирования //Криминологические и уголовно-правовые идеи борьбы с преступностью. – М.: ИГП РАН, 1996, էջ 69:
2. Տե՛ս **Վաղարշյան Ա.Գ.**, Պետության և իրավունքի տեսություն-2: Դասախոսություն; ԵՊՀ.- Եր.: Հեղինակային իրատարակություն, 2011. էջ 390-391:

մինների նախկին աշխատակից դատապարտյալների իրավական կարգավիճակին բնորոշ է բազմատարրությունը և համալիրությունը, ինչը և պահանջում է հատուկ կանգ առնել դրա բաղադրատարրերի հետազոտման վրա:

Մինչ քրեակատարողական իրավահարաբերության առաջացումը նշյալ խմբի անձինք՝ «իրավապահ մարմինների նախկին աշխատակիցները», չունեն միասնական իրավական հատուկ կարգավիճակ, քանի որ նրանցից ամեն մեկի ծառայական և աշխատանքային ոլորտներն աչքի են ընկնում իրարից տարբերվող սուբյեկտային կազմով: Քրեակատարողական իմաստով «իրավապահ մարմինների» հասկացությունն ունի պայմանական իմաստ, քանի որ ներառում է բազմաբնույթ պետական մարմիններ, որոնց աշխատակիցների ծառայական ու աշխատանքային կարգավիճակում չկա միասնականություն: Մյուս կողմից, իրավապահ համարվող ոլորտներից յուրաքանչյուրում այդ անձինք ունեցել են դրան բնորոշ իրավական հատուկ կարգավիճակ, դրան համապատասխանող իրավունքների ու պարտականությունների համակցություն: Ընդ որում, այդ կարգավիճակը նշյալ սուբյեկտի համար կարող է լինել նաև անցյալում մնացած, քանզի հանցագործության կատարման կամ դատապարտվելու պահին անձը կարող է չունենալ այդ հատուկ կարգավիճակը, այսինքն՝ նա բառիս բուն իմաստով նախկին աշխատակից էր նաև հանցանքի կատարման պահին:

Այսպիսով, հանցագործություն կատարած իրավապահ մարմինների նախկին աշխատակիցները հանցագործության կատարման պահին կարող են լինել հատուկ կարգավիճակով օժտված և հատուկ կարգավիճակով չօժտված, երբ նրանք արդեն չեն կատարում հատուկ ծառայական կամ աշխատանքային պարտականություններ իրավապահ որևէ ոլորտում: Կարգավիճակային այս տարբերությունը կարող է հանգեցնել քրեաիրավական հարաբերությունների սուբյեկտի կարգավիճակային

տարբերության, որը թերևս չունի որևէ նշանակություն քրեակատարողական իրավունքում: Ասվածից ելնելով՝ կարելի է եզրակացնել, որ իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալը քրեակատարողական իրավունքում այնպիսի սուբյեկտ է, որը նախկինում (հանցագործության կատարման պահին և կամ դրանից առաջ) իրավունքի հատուկ սուբյեկտ էր, ներառված էր իրավապահայան ոլորտի ծառայական կամ աշխատանքային հարաբերությունների հատուկ համակարգում:

Կատարելով հանցագործություն և կրելով դրա համար նշանակված պատիժը՝ նշյալ խմբի անձինք կրում են իրավական վիճակի որոշակի փոփոխություններ: Այդ փոփոխությունների սոցիալ-իրավական հիմքը բխում է քրեական պատժի բնույթից և իմաստից, որը պետական հարկադրանքի անհատականացված միջոց է՝ կապված հանցանք կատարած անձին որոշակի իրավունքների ու ազատությունների սահմանափակման կամ դրանից զրկման հետ: Իրավական սահմանափակումների այդ չափը կախված է պատժից, իսկ վերջինս իր հերթին պայմանավորված է կատարված կոնկրետ հանցագործության բնույթով, դրա ծանրության աստիճանով, տեսակով, օբյեկտով, վրա հասած հետևանքների տեսակով, շարժառիթների և նպատակների յուրահատկությամբ և այլն: Կախված այս հանգամանքներից՝ որոշվում է անձի պատժի հարցը՝ այսինքն դրա ծավալը, բովանդակությունը, մեղավոր անձի սահմանափակումների և զրկանքների բովանդակությունը:

Այսպիսով, իրավապահ մարմինների նախկին աշխատակից հատուկ իրավական վիճակը հանցագործություն կատարած անձի համար քրեական իրավունքի ոլորտում չի ծնում նոր հատուկ իրավական վիճակ: Այն ընդամենը կարող է հիմք հանդիսանալ որոշ դեպքերում հանցագործության հատուկ սուբյեկտի վերաձվելու համար:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 118 2020

Դատապարտյալի իրավական վիճակը օրենսդրության զանազան ճյուղերի նորմերով ամրագրված և դատապարտյալի իրավունքների ու օրինական շահերի, և պարտականությունների համակցության միջոցով արտահայտված նրա վիճակն է քրեական այս կամ այն տեսակի պատժի կրման ընթացքում³: Ի տարբերություն դատապարտյալի ընդհանուր և որոշ խմբերի դատապարտյալների իրավական կարգավիճակի⁴ իրավապահ մարմինների նախկին աշխատակիցների իրավական վիճակի հարցը քրեակատարողական իրավունքի

ստեղծության մեջ քիչ, իսկ մեր իրականության մեջ ընդհանրապես չուսումնասիրվածներից է:

Արդի շրջանում դատապարտյալների իրավական վիճակի հիմքում ընկած են միջազգային մի շարք փաստաթղթերում ամրագրված չափանիշներ⁵. հետևաբար, այդ կարգավիճակն ինչպես իր գործնական-կիրառական, այնպես էլ տեսական հիմքերով մեր իրականության մեջ նորություն է: Դատապարտյալների իրավական վիճակի մասին արդի ուսմունքը նախադրյալներ է ստեղծում տարբերակել պատժիչ-կանխար-

3. Տե՛ս Уголовно-исполнительное право. /под. ред. И.В. Шмарова.- М.: БЕК, 1996, էջ 93; **Рябинин А. А.**, Основы исправительно-трудового (уголовно-исполнительного) права.-М.: Юристъ, 1995, էջ 73-74: Уголовно-исполнительное право России /Под ред. проф. В.И. Селиверстова. – 2-е изд., перераб. и доп. – М.: Юристъ, 2000.- էջ 111-114; Уголовно-исполнительное право: В 2 т., Т. 1: Общая часть /Под общ. ред. Ю.И. Калинина. – 2-е изд., испр. и доп.- М.: Рязань: Логос; Академия права и управления федеральной службы исполнения наказаний, 2006. էջ 348-350: **Խաչիկյան Հ.Մ.**, Հայաստանի Հանրապետության քրեակատարողական իրավունք: ԵՊՀ իրատ., Եր., 2011, էջ 66-70; Уголовно-исполнительное право России: теория, законодательство, международные стандарты, отечественная практика конца XIX - начала XXI века. /Под ред. д. ю. н., проф. А. И. Зубкова. - 3-е изд., перераб. и доп. - М.: Норма, 2006. էջ 21-38; Уголовно-исполнительное право России. В 2 т. Т. 1. Общая часть /под ред. В. Е. Эминова, В. Н. Орлова.- 3-е изд., испр. и доп.- М. : Издательство Юрайт, 2015. с. 186-205:

4. Տե՛ս **Потапов А. М.**, Правовой статус лиц, отбывших наказание в виде лишения свободы: диссертация ... кандидата юридических наук: 12.00.08. Уголовное право и криминология; уголовно-исполнительное право. – Рязань, 2006. 232 էջ: **Добрынина М. Л.** Правовое положение осужденных в местах лишения свободы: диссертация ... кандидата юридических наук: 12.00.08. Уголовное право и криминология; уголовно-исполнительное право. – Москва, 2006. 153 էջ: **Акимов С. Т.**, Правовые и организационные аспекты защиты и восстановления прав и свобод осужденных, отбывающих наказание в виде лишения свободы: диссертация ... кандидата юридических наук: 12.00.08. Уголовное право и криминология; уголовно-исполнительное право. – Москва, 2006. 195 էջ: **Ивашин Д. И.**, Правовое положение осужденных к лишению свободы в Российской Федерации: диссертация ... кандидата юридических наук: 12.00.08. Уголовное право и криминология; уголовно-исполнительное право. – Хабаровск, 2003. 194 էջ: **Минстер М. В.**, Правовое положение женщин, осужденных к лишению свободы: диссертация ... кандидата юридических наук: 12.00.08. Уголовное право и криминология; уголовно-исполнительное право. – Иркутск, 2009. 222 էջ և այլն:

5. Դատապարտյալների իրավական վիճակի վերաբերյալ միջազգային հիմնական փաստաթղթերից են՝ Минимальные стандартные правила обращения с заключенными Приняты первым конгрессом ООН по предупреждению преступности и обращению с правонарушителями (Женева, 1955 г.). Одобрены резолюциями экономического и социального совета ООН 663 С (XXIV) от 31 июля 1957 г. и 2076 (LXII) от 13 мая 1977 г.; Конвенция Международной Организации Труда N 105 об упразднении принудительного труда 1957 г.; Кодекс поведения должностных лиц по поддержанию правопорядка 1979 г. и Руководящие принципы для эффективного осуществления Кодекса поведения должностных лиц по поддержанию правопорядка 1989 г. Приняты резолюциями 34/169 Генеральной Ассамблеи ООН от 17 декабря 1979 г. и экономического и социального совета ООН от 24 мая 1989 г.; Конвенция против пыток и других жестоких, бесчеловечных или унижающих достоинство видов обращения и наказания. Принята и открыта для подписания, ратификации и присоединения резолюцией 39/46 Генеральной Ассамблеи ООН от 10 дек. 1984 г.; Меры, гарантирующие защиту прав тех, кто приговорен к смертной казни. Одобрены резолюцией 1984/50 экономического и социального совета ООН от 25 мая 1984 г.; Декларация основных принципов правосудия для жертв преступлений и злоупотребления властью. Принята резолюцией 40/34 Генеральной Ассамблеи ООН от 29 ноября 1985 г.; Свод принципов защиты всех лиц, подвергаемых задержанию или заключению в какой бы то ни было форме. Утвержден резолюцией 43/173 Генеральной Ассамблеи ООН от 9 декабря 1988 г.; Основные принципы, касающиеся роли юристов. Приняты восьмым конгрессом ООН по предупреждению преступности и обращению с правонарушителями (Гавана, 1990 г.); Руководящие принципы ООН в области предупреждения преступности и уголовного правосудия в контексте развития и нового международного экономического порядка. (Миланский план действий 1985 г.); Минимальные стандартные правила ООН в отношении мер, не связанных с тюремным заключением (Токийские правила) 1990 г.; Европейские тюремные правила 2006 г.; Европейские правила, касающиеся несовершеннолетних правонарушителей, в отношении которых применены санкции или меры 2009 г.; Правила Совета Европы о пробации 2010 г. և այլն:

գելիչ ազդեցությունը՝ կախված դատարանի դատավճռով օրենքի հիման վրա սահմանված անհատական որոշակի հատկանիշներից: Դատապարտյալի իրավական վիճակի ամրագրումը երաշխիք է նրա անձի պաշտպանության և օրինականության ապահովման համար: Ոլորտի քրեաիրավական կարգավորման առանձնահատկություններով պայմանավորված՝ դատապարտյալների իրավական կարգավիճակը ՀՀ ՔԿՕ-ում կարգավորվում է ինչպես դրա ընդհանուր, այնպես էլ հատուկ մասերում՝ յուրաքննաչուր պատժատեսակին համապատասխան: Այս բաժանման համատեքստում «իրավապահ մարմինների նախկին աշխատակից» հատկանիշն իրավաբանական նշանակություն է ձեռք բերում այն դեպքում, երբ անձի նկատմամբ, ով նախկինում կամ հանցագործության կատարման պահին եղել է իրավապահ մարմնի աշխատակից, դատարանի կողմից նշանակվում է ազատությունից զրկելու հետ կապված պատիժ: Ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների նշանակման դեպքերում այդ հատկանիշը չունի որևէ իրավական նշանակություն պատժի կատարման համար: Հետևաբար, քրեակատարողական իրավունքի ոլորտում «իրավապահ մարմնի նախկին աշխատակից դատապարտյալ անձը» կարող է ունենալ երկու կարգավիճակ՝ ընդհանուր և հատուկ: Այն դեպքում, երբ նա դատապարտվում է ազատությունից

զրկելու հետ չկապված պատժի, ապա նրա իրավական դրությունը որևէ կերպ չի տարբերվում նույն բնույթի պատիժը կրող այլ անձանցից: Իսկ երբ նա դատապարտվում է ազատությունից զրկելու հետ կապված պատժի, ապա վերածվում է հատուկ իրավական դրությամբ ազատազրկման հետ կապված պատժի դատապարտվածի և ունի այլ դատապարտյալներից պատիժն անջատ կրելու իրավունք:

Քրեակատարողական իրավունքի տեսության և օրենսդրության մեջ քրեական պատիժ կրող անձանց իրավական վիճակը բաժանվում է երկու տեսակի՝ ա) ազատությունից զրկող կամ այն սահմանափակող պատիժներ կրող դատապարտյալների իրավական վիճակը, բ) ազատությունից զրկելու կամ այն սահմանափակելու հետ չկապված պատիժ կրող դատապարտյալների իրավական վիճակը⁶: Գիտության կողմից առաջադրված դատապարտյալների իրավական վիճակի այս դասակարգումն իրավապահ մարմինների նախկին աշխատակից անձանց վիճակի նկատմամբ կիրառումը և վերլուծությունը հանգեցնում է հետևյալ եզրակացություններին. իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալների այն մասը, որ կրում է ազատությունից չզրկելու կամ չսահմանափակելու հետ կապված պատիժ, իր իրավական վիճակով չունի որևէ յուրահատկություն՝ իր որպես «հատուկ սուբյեկտի

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 118 2020

5. Օրինակ՝ Վ.Վ. Գերանինը դատապարտյալների իրավական վիճակը բնորոշում է որպես նրանց բնութագրական իրավունքների, օրինական շահերի, պարտականությունների համակցություն՝ ըստ նշանակված կոնկրետ պատժատեսակի: Ընդ որում նա ուշադրություն է հրավիրում հետևյալի վրա. բոլոր պատիժներից ազատազրկումն ընդհանուր սահմանադրական վիճակը էականորեն փոփոխող պատժատեսակ է, հետևաբար ազատազրկման դատապարտվածների իրավական վիճակն օրենքով առավել մանրազնին է ենթարկված կարգավորման (տես В.В. Геранин «Правовое положение осужденных» // в книге Уголовно-исполнительное право: В 2 т., Т. 1: Общая часть /Под общ. ред. Ю.И. Калинина. – 2-е изд., испр. и доп.- М.: Рязань: Логос; Академия права и управления федеральной службы исполнения наказаний, 2006. էջ 355): Տես նաև Российский курс уголовно-исполнительного права. В 2-х т. Т. 1. Общая часть. /Е.А. Антоян, Ю.М. Антоян, С.А. Борсученко и др.; под ред. В.Е. Эминова, В.Н. Орлова.- М.: МГЮА имени О.Е. Кутафина; ООО «Издательство “Элит”», 2012. – էջ 619-625: Դատապարտյալների իրավական վիճակը որպես ըստ նշանակված այս կամ այն պատժատեսակին համապատասխանող և օրենքով նրանց երաշխավորված իրավունքների, օրինական շահերի, պարտականությունների համակցություն են դիտարկում քրեակատարողական իրավունքի տեսաբանների մեծ մասը (տես օրինակ՝ Уголовно-исполнительное право России /Под ред. проф. В.И. Селиверстова. – 2-е изд., перераб. и доп. – М.; Юристь, 2000.- էջ 114; Уголовно-исполнительное право России /Под ред. проф. В.И. Селиверстова. – 8-е изд., перераб. и доп. – М.; Юристь, 2019.- с. 92-100):

տեսանկյունով»: Այսպիսի պատիժ կրող իրավապահ մարմինների նախկին աշխատակից անձն ունի նույն իրավունքները և կրում է նույն պարտականությունները, օժտված չէ որևէ առանձնահատկությամբ: Ազատության սահմանափակման հետ կապված պատիժների դեպքում ևս իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալ անձը չունի կարգավիճակային տարբերություն:

Եվ ընդհակառակը՝ իրավապահ մարմինների նախկին աշխատակից այն անձինք, ովքեր դատապարտվել են ազատազրկման, ընդհանրապես ազատազրկման դատապարտված այլ անձանցից տարբերվում են իրենց կարգավիճակով: Այդ տարբերությունը բխում է ՔԿՕ-ի 68 հոդվածով սահմանված կարգից, որին համապատասխան՝ այս անձինք ունեն լրացուցիչ իրավունք, այն է՝ ազատազրկումը կրել այլ դատապարտյալներից առանձին: Օրենքի այս դրույթի կենսագործման նապատակով հիմնադրված է քրեակատարողական առանձին հիմնարկ: ՀՀ-ում այն «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկն է: Դատապարտյալների այլ խմբերի և իրավապահ մարմինների նախկին աշխատակից ազատազրկման դատապարտվածների իրավական վիճակների, նրանց քրեակատարողական իրավունքների ու պարտականությունների մեջ չկա որևէ այլ տարբերություն:

Քրեակատարողական իրավունքի

գիտության մեջ դատապարտյալների իրավական վիճակները դասակարգվում են նաև ըստ կոնկրետ պատժատեսակների: Այս հիմքով ինչպես բոլոր դատապարտյալների, այնպես էլ իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալներին կարող ենք բաժանել կարգավիճակային խմբերի՝ ըստ պատժի տեսակի՝ կալանք, ազատազրկում, տուգանք և այլն: Այս դասակարգման տեսանկյունից առանձնահատուկ է միայն կալանքի ու ազատազրկման դատապարտված իրավապահ մարմինների նախկին աշխատակից անձանց վիճակը. նրանք օրենքի ուժով ունեն այլ դատապարտյալներից անջատ պատժի կատարման և կրման իրավունք:

Ինչպես բոլոր դատապարտյալների դեպքում, այնպես էլ իրավապահ մարմինների նախկին աշխատակից անձանց իրավական վիճակի այդ տեսակները միմյանց հետ կապված են որպես ընդհանուր, հատուկ, եզակի բաղադրատարրեր, այսինքն՝ իրենցից ներկայացնում են անձանց սոցիալական հաղորդակցման տարբեր ոլորտներում իրավունքների, օրինական շահերի, պարտականությունների, ինչպես նաև դրանց երաշխիքների ու կենսագործման կառուցակարգերի համակցություն⁷:

Իրավունքի տեսության մեջ իրավական կարգավիճակների բոլոր դասակարգումներից ամենատարածվածը դրա բաժանումն է ընդհանուրի, հատուկի և անհատականի⁸: Փորձենք այս դասակարգ-

7. Իրավագիտության մեջ իրավական կարգավիճակը համարում են բազմատարր, դրանում ներառելով ոչ միայն իրավունքների, ազատությունների, պարտականությունների և օրինական շահերի համակարգը, այլև քաղաքացիությունը, ընդհանուր իրավաունակությունը, իրավունքների երաշխիքները, իրավական պատասխանատվությունը և այլն (տե՛ս **Безуглов А. А., Солдатов С. А.** Конституционное право России. Т. 1. М., 2007. էջ 359: Права человека /От. ред. Лукашева Е.А., М., 2002, չ3 91: Конституция Р.Ф. Комментарий. М., 1994, էջ 76: **Головистикова А. Н., Дмитриев Ю. А.**, Проблемы теории государства и права. М., 2005. էջ 637-640) Ն.Վ. Վիտրուկն անհատի իրավական կարգավիճակը բնութագրող բոլոր իրավական երևույթների մեջ սուբյեկտիվ իրավունքների, ազատությունների, պարտականությունների և օրինական շահերի համակցությունը համարում է դրա հիմք, միջուկ, այլ տարրերը կապող բաղադրատարր (տե՛ս **Витрук Н. В.**, Основы теории правового положения личности в социалистическом обществе. М., 1979, էջ 38): Ա. Վաղարշյանը գտնում է, որ երաշխիքները կարգավիճակի կարևոր բաղադրատարրն են, որովհետև ապահովում են դրա իրականացման հնարավորությունը (տե՛ս **Վաղարշյան Ա. Գ.**, Պետության և իրավունքի տեսություն-2: ԵՊՀ.- Եր.: Հեղինակային հրատարակություն, 2011. էջ 393-396):

8. Անհատի իրավական կարգավիճակի տեսակների հարցում հեղինակների մոտեցումները բազմազան են: Որոշ տեսաբաններ առանձնացնում են դրա հետևյալ տեսակները՝ ընդհանուր (սահմանադրական), առանձին խմբերի անհատների հատուկ (սեռային), անհատական. ֆիզիկական և իրավաբանական անձանց. օտարերկրացիների,

մանը հապատասխան վերլուծել իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալների իրավական վիճակի առանձնահատկությունները: Իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալը քրեական պատիժը կրելու ընթացքում պահպանում կամ օժտված է որպես անհատի սահմանադրական համընդհանուր իրավական վիճակով (ընդհանուրը), որը ճանաչվում է քրեակատարողական օրենսդրության կողմից:

Քրեակատարողական օրենսդրությունն այդ անձի՝ որպես հատուկ սոցիալական դերակատարի՝ քրեական պատժի դատապարտվածի համար սահմանում է նրա (ինչպես և բոլոր դատապարտյալների) որպես քրեակատարողական հարաբերությունների մասնակցի հատուկ իրավունքներն ու պարտականությունները, հատուկ իրավական վիճակը: Իրավական վիճակի այս տեսակում բոլոր դատապարտյալների և իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալների միջև չկա որևէ բովանդակային տարբերություն: Սակայն քրեակատարողական օրենսդրությունը կարգավորում է դատապարտյալների իրավական վիճակը նաև ըստ առանձին պատժատեսակների (եզակի կարգավիճակ):

Այսպիսով՝ եզակի կարգավիճակը, ի տարբերություն հատուկի, բազմազան է կամ հատուկի վրա ճյուղավորված՝ ըստ դատապարտյալի նկատմամբ դատարանի նշանակած պատժի: Բոլոր եզակի քրեակատարողական իրավական վիճակներից, իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալ անձինք,

մնացած այլ կամ ոչ իրավապահ մարմինների նախկին աշխատակից անձանցից տարբերվում են միայն մեկ դեպքում. եթե դատարանը նրանց դատապարտել է ազատությունից զրկելու հետ կապված պատժի, ապա նրանց պատիժը կատարող մարմինները պարտավոր են դա իրացնել այլ խմբի ազատությունից զրկված դատապարտյալներից առանձին: Սա այդ մարմինների պարտականությունն է, որին համապատասխանում է իրավապահ մարմինների նախկին աշխատակից ազատությունից զրկված անձանց իրավունքն այդ պատժատեսակը կրելու առանձին: Այսպիսով՝ քրեակատարողական իրավունքում դատապարտյալների հատուկ կարգավիճակի առանձնահատկությունը հանգում է նրան, որ դատարանի դատավճռով ինչ-որ պատժի կրման դատապարտված անձի նկատմամբ կիրառվում են անհատի մի շարք իրավունքների և ազատությունների (ընդհանուր կարգավիճակի) սահմանափակումներ կամ դրանցից զրկելը: Քրեական պատիժը կրող անձանց իրավունքների սահմանափակումներն արտահայտվում են երեք ձևով. ա) դատապարտյալը զրկվում է որոշակի իրավունքներից օգտվելու հնարավորություններից, բ) առանձին իրավունքների և ազատությունների համար գործում են սահմանափակումներ, որոնց շրջանակում դատապարտյալը կարող է օգտվել դրանցից, գ) դատապարտյալը պարտավոր է կատարել պետական հարկադրանքի տարեր պարունակող որոշակի պարտականություններ, որոնք չեն կարող դրվել չդատապարտված անձանց վրա: Նոր

քաղաքացիություն չունեցողների, երկքաղաքացիների և փախստականների. արտասահմանում գտնվող քաղաքացիների. ճյուղային կարգավիճակներ. մասնագիտական և պաշտոնական կարգավիճակներ. արտակարգ պայմաններում աշխատող կամ երկրի հատուկ տարածքներում ապրող անձանց (տես Головистикова А.Н., Дмитриев Ю.А., Проблемы теории государства и права. М., 2005. էջ 646; Теория государства и права. Курс лекции. Под ред. Н.И. Матузова и А.В. Малько. М., 1999, էջ 235-236): Ընդհանուր, հատուկ և անհատական դասակարգումը ամենատարածված և տեսագործական էական նշանակություն ունեցողներից է (տես Վաղարշյան Ա.Գ., Պետության և իրավունքի տեսություն-2: ԵՊՀ.- Եր.: Հեղինակային հրատարակություն, 2011. էջ 403):

իրավական վիճակում, այսինքն՝ դատապարտյալ վիճակում (ներառյալ ազատազրկման) անձը ձեռք է բերում նաև որոշակի իրավունքներ, որոնք բխում են նրա հատուկ վիճակից, դատապարտյալ լինելու իրավական վիճակից: Դատապարտյալների իրավական վիճակի նման տարանջատման մեջ ազատությունից զրկելու հետ կապված պատժի դատապարտված իրավապահ մարմինների նախկին աշխատակից անձանց համար պատժի կրումն անջատ (կամ առանձին) և իրավունք, և պարտականություն է: Այն արտոնություն չէ, որովհետև պատժի կրման մնացած բոլոր հարցերում նրանք ունեն նույն իրավունքները և կրում են նույն պարտականությունները, ենթարկվում են իրավունքների ու ազատությունների նույն չափով սահմանափակմանը, ինչ որ ազատազրկման դատապարտված մնացած անձինք: Իրավապահ մարմինների նախկին աշխատակից ազատությունից զրկելու հետ կապված պատժի կրման դատապարտվածների համար անջատ պահելու երկակիությունը բխում է քրեակատարողական իրավունքում դատապարտյալների հատուկ իրավական վիճակի տարր հանդիսացող անձնական անվտանգության ապահովման իրավունքից: Ընդհանուր իրավական վիճակի տարր համարվող այդ իրավունքն իրավապահ մարմինների նախկին աշխատակից ազատությունից զրկված դատապարտյալի համար վերածվում է պատժի անջատ կրման (կատարման) իրավունքի: Յուրաքանչյուր իրավունք ենթադրում է այլընտրանք, սակայն այս դեպքում այն չի գործում, որովհետև քրեակատարողական օրենսդրության օրինականության սկզբունքի ուժով պատժի կատարման մարմիններն ու իրավապահ մարմինների նախկին աշխատակիցները պարտավոր են գործել օրենքով սահմանված գործողությունների շրջանակում (ՔԿՕ, հոդված 7): Հետևաբար իրավապահ մարմինների նախկին աշխա-

տակից ազատությունից զրկման դատապարտյալ անձը չի կարող հրաժարվել իր իրավունքից և պահանջել, որ ազատազրկումն ինքը ցանկանում է կրել ընդհանուր քրեակատարողական հիմնարկում: ՀՀ ՔԿՕ-ում դատապարտյալների իրավունքները սահմանվում են բավականին մանրամասն: Նման կարգավորումը բխում է պատիժների կատարման և դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային իրավական փաստաթղթերի պահանջներից: ՀՀ ՔԿՕ-ի 12 հոդ. 1-ին մասի 7-րդ կետը դատապարտյալների հիմնական իրավունքների շրջանակում ներառում է անձնական անվտանգության ապահովման իրավունքը, բայց չի մանրամասնում այն: Առաջարկում ենք ՀՀ ՔԿՕ-ում նախատեսել առանձին հոդված դատապարտյալի անձնական անվտանգության իրավունքը վերտառությամբ, հետևյալ բովանդակությամբ՝

«1. Դատապարտյալն ունի անձնական անվտանգության ապահովման իրավունք: Այդ իրավունքը պետք է երաշխավորվի քրեական պատիժներ կատարելու և կրելու կարգն ու պայմանները սահմանելիս, ինչպես նաև կիրառելիս:

2. Անհրաժեշտության դեպքում դատապարտյալն իրավունք ունի անձնական անվտանգության ապահովման խնդրանքով դիմելու ազատությունից զրկելու հետ կապված պատիժը կատարող հիմնարկի ցանկացած պաշտանատար անձի: Նման դեպքում նշված պաշտոնատար անձն անհապաղ միջոցներ է ձեռնարկում դատապարտյալի անձնական անվտանգության ապահովման համար:

3. Սույն հոդվածի 2-րդ մասում նշված պատիժը կատարող հիմնարկի պետը, դատապարտյալի դիմումի համաձայն կամ սեփական նախաձեռնությամբ, որոշում է ընդունում դատապարտյալին անվտանգ վայր տեղափոխելու կամ դատապարտյալի անձնական անվտանգության ապահովման

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 118 2020

այլ միջոցներ կիրառելու մասին»:

Այսպիսով, քննարկելով իրավապահ մարմինների նախկին աշխատակից ազատությունից զրկված դատապարտյալի իրավական վիճակի հիմնահարցն անհատի իրավական կարգավիճակի ընդհանուր տեսության և քրեակատարողական իրավունքում դատապարտյալների իրավական վիճակի տեսության համատեքստում՝ կարող ենք եզրակացնել հետևյալը:

1. Քրեակատարողական իրավունքի ոլորտում «իրավապահ մարմնի նախկին աշխատակից դատապարտյալ անձը» կարող է ունենալ երկու կարգավիճակ, ընդհանուր և հատուկ: Այն դեպքում, երբ նա դատապարտվում է ազատությունից զրկելու հետ չկապված պատժի, ապա նրա իրավական դրությունը որևէ կերպ չի տարբերվում նույն բնույթի պատիժը կրող այլ անձանցից: Իսկ երբ նա դատապարտվում է ազատությունից զրկելու հետ կապված պատժի, ապա նա վերաժվում է հատուկ իրավական վիճակով դատապարտյալի և ունի այլ դատապարտյալներից պատիժն անջատ կրելու լրացուցիչ իրավունք, որի հիմքերը բխում են ՀՀ ՔԿՕ-ի 68 հոդվածից:

2. Իրավապահ մարմինների նախկին աշխատակից անձանց ազատությունից զրկելու հետ կապված պատժի դատապարտվելու դեպքում, պատիժը կատարող մարմինները պարտավոր են դա իրացնել այլ խմբի ազատությունից զրկված դատապարտյալներից անջատ: Քրեակատարողական մարմինների այս պարտականությանը համապատասխանում է նշված անձանց

իրավունքը՝ այդ պատժատեսակը կրել անջատ:

3. Ազատությունից զրկելու հետ կապված պատժի դատապարտված իրավապահ մարմինների նախկին աշխատակից անձանց համար պատժի կրումն անջատ և իրավունք է, և պարտականություն: Այն արտոնություն չէ, որովհետև պատժի կրման մնացած բոլոր հարցերում նրանք օժտված են նույն իրավունքներով և կրում են նույն պարտականությունները, ենթարկվում են իրավունքների ու ազատությունների նույն չափով սահմանափակմանը, ինչ որ ազատազրկման դատապարտված մնացած անձինք:

4. Իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալներին անջատ պահելու երկակիությունը բխում է քրեակատարողական իրավունքում դատապարտյալների հատուկ իրավական վիճակի տարր հանդիսացող անձնական անվտանգության ապահովման իրավունքից: Այդ իրավունքն իրավապահ մարմինների նախկին աշխատակից ազատությունից զրկված դատապարտյալի համար վերաժվում է պատժի անջատ կրման (կատարման) իրավունքի: Սակայն իրավապահ մարմինների նախկին աշխատակից ազատությունից զրկված անձը չի կարող հրաժարվել իր այդ իրավունքից: Այս կապակցությամբ նպատակահարմար է ՀՀ ՔԿՕ-ում նախատեսել առանձին հոդված, որի կարգավորման առարկան կլինի դատապարտյալի անձնական անվտանգության իրավունքը:



МИЛЕНА САРГСЯН

Магистрант 1-ого курса Института Права и Политики Российско-Армянского (Славянского) университета по направлению «Корпоративный юрист»

ПРАКТИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ ОПРЕДЕЛЕНИЯ ПРАВОВОЙ ПРИРОДЫ ТОРГОВ КАК СПОСОБА ЗАКЛЮЧЕНИЯ ДОГОВОРА ИЛИ КАК СПОСОБА ВЫБОРА ПРЕДПОЧТИТЕЛЬНОГО КОНТРАГЕНТА

Способы заключения договора, как известно, не исчерпываются традиционным правовым механизмом оферты и акцепта. Одним из возможных путей заключения договора являются организация и проведение торгов, состоящих из нескольких стадий и представляющих собой сложную процедуру. Общепринятое значение открытых торгов в доктрине гражданского права сводится к *особому способу заключения договора, выражающемуся в создании заинтересованным лицом (организатором) равных конкурентных условий для неопределенного круга лиц, которые могут претендовать на заключение договора посредством представления своих предложений*¹. Исходя из такого понимания, смысл института торгов представляется ясным, однако существует проблема определения правовой сущности торгов. Являются ли торги способом, «особым процедурным аспектом заключения договора» или же способом определения контрагента, с которым впоследствии будет заключен договор. Такая теоретическая, на первый взгляд, проблема порождает множество практических проблем, которые будут рас-

смотрены далее.

Толковый словарь С. И. Ожегова определяет слово способ как «действие или систему действий, применяемые при исполнении какой-н. работы, при осуществлении чего-н»². То есть применительно к заключению договора способ означал бы действия, применяемые *при* заключении договора. Так, в юридической литературе способами заключения договоров считались «определенные действия, посредством которых достигается взаимосогласованная воля сторон»³. Рассматривая данные определения, можно заключить, что способ используется *при* заключении договора и *посредством* него заключается договор. Следовательно, признание торгов способом заключения договора означает необходимость возникновения заключенного договора в момент завершения торгов так же, как и в случае с традиционным способом заключения договора, когда в момент получения лицом, направившим оферту, ее акцепта, договор считается заключенным (часть 1 статьи 449 ГК РФ). При этом торги как способ будут отражать процедурный аспект заключения договора, процедурную особенность

1. Е. Н. Абрамова, Н. Н. Аверченко и др.; под ред. Сергеева А. П.: Комментарий к Гражданскому кодексу Российской Федерации. Часть первая (постатейный): учебно-практический комментарий — 2-е изд., перераб. и доп. — Москва: Проспект, 2019. — с.1213.

2. Ожегов С.И.; под ред: Шведовой Н.Ю: Словарь русского языка - изд. 9, исп. и доп.. -М., «Сов. Энциклопедия». 1972г. - с. 697.

3. Советское гражданское право. Т. 1 / Под ред. В.П. Грибанова, С.М. Корнеева. М., 1979. С. 468.

заклучения договора⁴.

Анализ некоторых положений как ГК РА, так и иных законов РА, регулирующих организацию и порядок проведения отдельных видов торгов, позволяет сделать вывод о том, что гражданским законодательством РА воспринят именно такой подход - о признании торгов способом или же процедурной особенностью заключения договора. Так, согласно части 1 статьи 463 ГК РА договор, если иное не вытекает из его сущности, может быть заключен посредством торгов. В соответствии со статьей 2 Закона РА «О публичных торгах» торги представляют собой процедуру заключения договора посредством аукциона (конкурса), в котором может участвовать неопределенный круг лиц, удовлетворяющих предусмотренным законом требованиям. Согласно той же статье участниками торгов признаются лица, заплатившие задаток в предусмотренном законом порядке и выразившие желание заключить соответствующий договор посредством публичных торгов. Одновременно второе предложение части 1 статьи 463 ГК РА гласит о том, что договор заключается с лицом, выигравшим торги. Данная норма с учетом вышеуказанных положений о признании торгов способом заключения договора можно было бы истолковать следующим образом: договор считается заключенным в момент завершения торгов с лицом, выигравшим торги. Однако такое толкование неоднозначно с учетом того, что ГК РА предусматривает также случаи, когда предметом торгов является *только право на заключение договора*. Законом устанавливается конкретный срок, в течение которого должен быть заключен такой договор (часть 6 статьи 464 ГК РФ). При этом часть 7 статьи 464 ГК РА предоставляет стороне право на обращение в суд с целью понуждения к заключению дого-

вора, а также возмещения убытков, причиненных уклонением от заключения договора. В таких случаях торги будут выступать *не способом заключения договора, а способом определения предпочтительного контрагента*. Помимо этого, проблема состоит в том, что отдельные законодательные положения о торгах умаляют значение торгов как способа заключения договора, *так как логика этих положений сводится к обязательности заключения последующего отдельного договора*. В этом контексте следует обратить внимание также на следующие статьи Закона РА «О публичных торгах»:

1. Согласно части 5 статьи 33, предусматривающей процесс принудительных аукционов, принудительный исполнитель в течение трех дней после внесения победившим в аукционе участником суммы покупки в кассу или на депозитный счет подразделения службы **заключает с ним договор купли-продажи**.

2. Согласно статье 35.3 принудительный электронный аукцион считается несостоявшимся, если победившее в аукционе **лицо отказалось от заключения договора купли-продажи** или в установленный срок не оплатило сумму покупки лота или не представило документа, удостоверяющего уплату налога на доход.

Анализ указанных статей позволяет сделать вывод о том, что завершение аукциона не совпадает с моментом заключения договора и договор, например, купли-продажи заключается по истечению определенного законом времени. Более того, уклонение стороны от заключения последующего договора, которое, казалось бы, заключается лишь для более детального регулирования *уже существующих договорных отношений*, способно аннулировать весь процесс и результат торгов. Сказанное

4. **Беляева О. А.** Торги: основы теории и проблемы практики : монография / О. А. Беляева ; Институт законодательства и сравнительного правоведения при Правительстве Российской Федерации. — Москва : Проспект, 2020. — с.25.

означает, что торги в соответствии с гражданским законодательством РА представляют собой, скорее всего, не способ или же процедурную особенность заключения договора, *а способ определения лица, с которым впоследствии будет заключен договор*. Однако такое суждение также не полностью отражает подход, отраженный в ГК РА и нормативно-правовых актах, регулирующих организацию и порядок проведения торгов. Так, в соответствии с частью 7 статьи 35.2 Закона «О публичных торгах» (процесс принудительных электронных аукционов) принудительный исполнитель в течение пяти дней после внесения победителем суммы покупки в кассу или на депозитный счет подразделения службы заключает с ним или с его представителем договор купли-продажи. В случае, **если в указанный срок договор не заключается, сумма покупки возвращается победителю**, а задаток остается на депозитном счете службы. В связи с этим возникает вопрос, а что служит основанием для передачи после проведения торгов и, соответственно, подписания протокола «суммы покупки», если договор не заключен и будет заключен лишь в дальнейшем, а покупка, следовательно, не совершена. Ситуация более усложняется тем, что в соответствии с частью 5 статьи 464 ГК РА победившее в торгах лицо и организатор торгов в день проведения аукциона или конкурса подписывают протокол о результатах торгов, который имеет **силу договора**.

Понимание данной нормы крайне затруднительно. Общее правило, касающееся подведения итогов торгов, предусмотренное как ГК РА, так и специальным законодательством, сводится к необходимости подписания сторонами протокола торгов (например, часть 5 статьи 25, часть 2 статьи 33 Закона РА «О публичных торгах и т.д.»). В противном случае торги будут признаны несостоявшимися (пункт 3 части

1 статьи 34 того же закона). В связи с этим и с учетом части 5 статьи 464 ГК РА представляется неясным, что имеет в виду законодатель. Является ли наличие подписанного протокола свидетельством того, что договор по результатам торгов уже заключен и подписания отдельного договора не требуется, иначе говоря, является ли такой протокол тем договором, для заключения которого и проводились торги. Регулирование, предусмотренное частью 5 статьи 464 ГК РА, вступает в прямое противоречие с подходом, согласно которому торги это не способ заключения самого договора, а способ определения *предпочтительного контрагента*.

Следует отметить, что аналогичное регулирование о придании подписанному протоколу силы договора присутствует также в гражданском законодательстве Российской Федерации. Так, в соответствии с частью 6 статьи 448 Гражданского кодекса Российской Федерации (далее ГК РФ), если иное не установлено законом, лицо, выигравшее торги, и организатор торгов подписывают в день проведения аукциона или конкурса протокол о результатах торгов, который имеет силу договора. При этом согласно пункту 51 Постановления Пленума Верховного Суда РФ от 23.04.2019 N 10 "О применении части четвертой Гражданского кодекса Российской Федерации", исходя из пункта 6 статьи 448 ГК РФ, лицо, выигравшее торги, и организатор торгов подписывают в день проведения аукциона протокол о результатах торгов. Если переход исключительного права на соответствующий результат интеллектуальной деятельности или средство индивидуализации с учетом положений статьи 1232 ГК РФ подлежит государственной регистрации, **основанием для такой регистрации служит указанный протокол о результатах торгов**. Часть 3 статьи 1232 ГК РФ устанавливает, что государственная регистрация отчужде-

ния исключительного права на результат интеллектуальной деятельности или на средство индивидуализации по договору, государственная регистрация залога этого права, а также государственная регистрация предоставления права использования такого результата или такого средства по договору осуществляется по заявлению сторон договора, и в случае подачи заявления одной из сторон договора к заявлению может быть приложен сам договор. Таким образом, вышеизложенная правовая позиция Пленума Верховного суда РФ заключается в приравнивании договора и протокола о торгах, а именно – их юридической силы.

К проблеме неопределенности юридической силы протокола о результатах торгов и возможности понуждения заключения последующего договора обратились также в Концепции развития гражданского законодательства Российской Федерации (одобрена Советом при Президенте РФ по кодификации и совершенствованию гражданского законодательства 7 октября 2009 г.)⁵. Согласно позиции, изложенной в ней, если торги выступают в качестве способа заключения договора и договор заключается непосредственно в ходе торгов, то в условиях существующего регулирования нельзя определить тот момент, когда договор следует считать заключенным. Совпадает ли он с моментом принятия предложения на торгах или с моментом подписания протокола? С другой стороны, если предметом торгов является право на заключение договора, на торгах только выявляется победитель и договор будет заключен впоследствии (пункт 5 статьи 448 ГК РФ), то нет точного ответа на вопрос о том, является ли наличие протокола, подписанного сторонами, обязательным условием для предъявления требования о понуждении

заключить договор. Для второго случая предлагалось указать, что при существовании протокола, подписанного сторонами, может быть заявлено требование о заключении договора, так как протокол сам по себе является предварительным договором. Следовательно, авторы Концепции исходили из того, что если предметом торгов является право на заключение договора, то подписанный протокол о результатах торгов нельзя считать договором, который должен был быть заключен впоследствии, указание закона о придании протоколу силы договора, **скорее всего, необходимо понимать как признание протокола предварительным договором**. В таких условиях уже, исходя из регулирования статьи 429 ГК РФ, можно было бы предъявить требование о понуждении к заключению договора.

Рассмотрение всех вышеуказанных законодательных положений, касающихся института торгов, показывает, **что действующие нормы ГК РА допускают два варианта толкования правовой природы торгов**: с одной стороны, как способа заключения договора, с другой стороны, как способа определения контрагента.

Что же касается практики РА в сфере организации и проведения торгов, то результаты торгов фиксируются в протоколе, который подписывается сторонами, однако в дальнейшем заключается также договор для более детального регулирования отдельных условий. Это объясняется как законодательным требованием, в частности положениями Закона РА «О публичных торгах», так и, например, Постановлением Правительства РА «Об утверждении порядка отчуждения, предоставления права застройки и пользования земель, являющихся государственной или муниципальной собственностью» от 12.04.2001 г. В условиях

5. Электронный ресурс: <http://base.garant.ru/12176781/> (дата обращения: 19.05.2020 г.).

существования такой практики рассмотренная выше часть 5 статьи 464 ГК РА лишена практической значимости. Но правовые проблемы она порождает неизбежно. Во-первых, придавая протоколу силу договора, сложно понять, с какого момента возникают договорные правоотношения между организатором (заказчиком) и победителем торгов, с какого момента у них возникают договорные права и обязанности и, соответственно, когда начинается отсчет сроков исполнения обязательства; подлежат ли взысканию убытки за нарушение предусмотренных договором обязательств, если нарушение было допущено до заключения самого договора, с какого дня будет уплачиваться предусмотренная договором неустойка за нарушение конкретных договорных обязательств и т.д.? Во-вторых, возникает вопрос, можно ли требовать исполнения договорных обязательств от лица, подписавшего протокол о результатах торгов, если оно уклоняется от подписания договора?

Существование перечисленных правовых проблем обусловлено непоследовательностью законодателя в регулировании института торгов, а именно смешением двух различных правовых природ торгов как способа заключения договора, с одной стороны, и способа определения предпочтительного контрагента, с другой стороны. Законодатель, признавая возможность заключения договора непосредственно в ходе торгов, предусмотрел также возможность признания предметом торгов права на заключение договор, придавая при этом любому подписанному протоколу о результатах торгов силы договора.

Дискуссионным является вопрос о том, **прямое закрепление какой природы торгов является более правильным с точки зрения более эффективного решения проблем, возникающих на практике.** В связи с этим рассмотрим правовое

регулирование института торгов в некоторых зарубежных странах.

Статья 57(2) Закона «О продаже товаров»⁶ Соединенного Королевства Великобритании и Северной Ирландии от 1979 г. продажа с аукциона завершается, когда аукционист объявляет о своем завершении стуком молотка (или любым другим обычным способом). До этого времени участник торгов имеет право отозвать свою заявку. Первоначальный вызов аукциониста на предложение цен - это то, что известно как «приглашение сделать предложение (оферту)». Озвучивание предложения равносильно «оферте», а удар молотка - «акцепту». При этом отмечается, что основными компонентами, необходимыми для заключения контракта являются оферта, акцепт, вознаграждение (обычно деньги), намерение вступить в правовые отношения и определенность условий. Вопрос о том, имела ли место оферта и была ли акцептована оферта, звучит довольно просто и получение ответа на него кажется нетрудным, однако на практике это не всегда так. Это касается особенно тех случаев, когда контракт заключается посредством аукциона. Например, делает ли аукционист оферту при запросе ставок, или участник аукциона делает оферту при озвучивании предложения цены? А когда оферта акцептуется?

В связи с этим интересно будет рассмотреть следующий случай.

12 октября 2018г. в Лондоне состоялся аукцион Sotheby's, на котором картину знаменитого уличного художника Бэнкси «Девочка с шариком» продали за \$1,4 миллиона неизвестному коллекционеру. На глазах у пораженных участников торгов работа начала самоуничтожаться с помощью шредера, тайно установленного в раму. Сотрудники Sotheby's тут же дали картине другое название - «Любовь в мусорном ведре». После провокационной акции

6. Электронный ресурс: <http://www.legislation.gov.uk/ukpga/1979/54> (дата обращения: 19.05.2020 г.).

работа не только выросла в цене, но и приобрела культовый статус.

Сразу же после этого многие задались вопросом, что это значит для победителя торгов. Должны ли они были продолжать покупку частично разрушенной картины, на которую они только что предложили 1,4 млн фунтов? Когда сделка «заключена» на аукционе? Хотя все вышеперечисленное вызывает интересную дискуссию, многие искусствоведы полагают, что этот исторический трюк на самом деле увеличит ценность картины, и поэтому трудно понять, почему претендент захочет отказаться от сделки. Действительно, из освещения в прессе следует, что участник аукциона Sotheby's получил возможность отказаться от покупки и решил оставить работу. Сообщается, что покупатель, который был идентифицирован как европейский коллекционер женского пола и давний клиент Sotheby's, сказал: «Когда молот упал [...] и работа была уничтожена, я была сначала шокирована, но потом постепенно поняла, что я в конечном итоге получу свою историю искусства»⁷.

Рассмотрение как указанного практического случая, так и соответствующих законодательных положений об аукционах, позволяют делать вывод о том, что английское право признает договор заключенным в момент завершения аукциона и определения победителя с ударом молотка.

В канадском праве любой тендерный процесс создаст два контракта, которые связывают участника торгов и организатора⁸. Регулирование процесса проведения торгов в Канаде базируется на анализе контракта «А» и контракта «В», установленном по делу *The Queen (Ont.) v. Ron Engineering & Construction (Eastern) Ltd.*

(*"Ron Engineering"*). Контракт «А» - это название, данное контракту, который возникает между участником торгов и организатором после озвучивания предложения цены в ответ на вызов организатора торгов делать предложения. Контракт «А» регулирует, как будет проходить процесс торгов, включая, помимо прочего, критерии оценивания предложения участника торгов. Если организатор не соблюдает условия, изложенные в первоначальном приглашении к участию в торгах (т. е. организатор уклоняется от первоначально описанных критериев оценки), участник торгов может утверждать, что контракт «А» был нарушен. Контракт «А» - это концепция, которая применялась судами для укоренения справедливости и равного отношения к участникам в ходе торгов. По мнению судов, из контракта «А» вытекает договорная обязанность добросовестности в отношении всех участников, озвучивших предложения цен. Контракт «В» - исполнительный контракт - заключается с победителем торгов после принятия предложенной этим участником цены. Контракт "В" - это сам контракт на товары и услуги, **который вступает в силу с момента принятия организатором, например, самой высокой цены** (если цена является ключевым фактором в детальных критериях оценки). Следовательно, канадское право также признает договор заключенным в момент завершения торгов, и торги выступают способом заключения самого договора.

Согласно статье 156 Германского гражданского уложения (заключение договоров на аукционах) на аукционе договор не заключается до падения молотка. Предложение цены не учитывается, если предложена более высокая ставка или если

7. Электронный ресурс: <https://www.kingsleynapley.co.uk/insights/blogs/dispute-resolution-law-blog/going-going-gone-when-is-a-contract-formed-at-auction> (дата обращения: 19.05.2020 г.).

8. Электронный ресурс: <https://www.mondaq.com/canada/government-contracts-procurement-ppp/272560/legal-basics-of-competitive-bidding-and-procurement-in-canada> (дата обращения: 19.05.2020г.).

аукцион закрыт без падения молотка.

Вышеуказанные примеры демонстрируют, что моментом завершения торгов и заключения договора выступает удар молотка, а именно момент определения победившего в торгах лица, из чего можно заключить, что торги выступают способом заключения самого договора.

Учитывая законодательное регулирование РА в сфере организации и порядка проведения торгов, а также сложившуюся правовую практику, считаем, что торги необходимо определять **не как способ заключения договора, а как способ определения предпочтительного контрагента по следующей причине:**

1. Существует множество научных исследований, направленных на выявление момента заключения **договора в ходе торгов** (когда торги выступают способом заключения самого договора). При этом до сих пор не сформировалось единого подхода по поводу того, когда имеют место быть оферта, а когда – акцепт. Является ли оферентом участник торгов, предлагающий определенную цену, или же аукционист. Является ли приглашение аукциониста делать предложения цен публичной офертой или же приглашением делать оферту? Рассмотрение данных вопросов не входит в предмет исследования настоящей научной работы, однако, как уже было отмечено, в условиях существующего регулирования нельзя определить тот момент, когда договор следует считать заключенным. При этом признание торгов способом определения предпочтительного контрагента решает все вышеуказанные проблемы, так как способ определения предпочтительного контрагента не предполагает необходимости существования уже заключенного договора в момент завершения торгов. Напротив, все действия, совершенные с момента извещения о проведении торгов и до их завершения как участниками торгов, так и

аукционистом, будут считаться односторонними сделками.

2. Признание торгов способом заключения сделки предполагает наличие заключенного договора в момент завершения аукциона. Однако, если предметом торгов является недвижимое или иное имущество, права на которое подлежат государственной регистрации, то это изначально исключает возможность существования заключенного договора к моменту завершения торгов, так как часть 3 статьи 449 ГК РА предусматривает, что если возникающие из договора права подлежат государственной регистрации, то такой договор считается заключенным с момента регистрации такого права.

В связи с этим следует рассмотреть статью 4 Закона РА «О публичных торгах», посвященную условиям заключения договора посредством торгов. В соответствии с ней, если подлежащий продаже лот является недвижимым или движимым имуществом, права в отношении которых подлежат государственной регистрации, то с момента подписания протокола с победившим в торгах лицом ему переходит право в отношении заключения договора относительно соответствующего лота. Согласно части 2 той же статьи, если лот – это право, в том числе предложение выполнить работу или оказать услугу, а также право пользования, то с момента подписания протокола с победившим в торгах лицом ему переходит право в отношении заключения договора относительно соответствующего лота. Логика данных положений заключается в следующем: законодатель предусмотрел одинаковые правовые последствия для случаев, когда предметом аукциона является или право на заключение договора, или имущество, права на которые подлежат государственной регистрации. Законодатель априори устанавливает, что в таких случаях торги являются лишь способом определения контрагента, а не способом

заклучения договора. Однако в остальных случаях возможность возникновения уже заключенного договора в момент завершения торгов также порождает проблемы, в первую очередь, вследствие наличия законодательных требований, относящихся к форме сделок. Если, например, предметом торгов является вещь, стоимость которой превышает 20 000 армянских драм, то признание договора заключенным в момент завершения торгов еще до подписания протокола о результатах торгов, повлечет за собой существование заключенного, но недействительного договора.

3. Если торги являются способом заключения договора и договор, соответственно, считается заключенным в момент завершения торгов и определения победителя или, как отмечается в законодательстве зарубежных стран, в момент удара молотка, то что собой представляют подписанный

протокол и дальнейший договор?

Таким образом, исходя из вышеуказанного и учитывая сложившуюся правовую практику в сфере организации и проведения торгов, считаем, что в основе законодательства РА должен лежать подход о признании торгов **способом определения предпочтительного контрагента**. При этом подписанный сторонами протокол о подведении итогов торгов следует квалифицировать как предварительный договор, на основе которого впоследствии заключается основной договор. В связи с этим предлагаем внести соответствующие изменения в законодательство РА, закрепив за подписанным сторонами протоколом о результатах торгов силу предварительного договора и устранив неопределенности, порожденные частью 5 статьи 464 ГК РА.



ԱՐԹՈՒՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՐՊՈՐԱՏԻՎՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հաշվի առնելով հետազոտության օբյեկտի առանձնահատկությունները՝ յուրաքանչյուր գիտություն «կառավարել» եզրույթը բնորոշում է յուրովի: Տեսական գրականության մեջ առևտրային իրավաբանական անձանց կառավարումն անվանվում է նաև կորպորատիվ կառավարում¹: Ինչպես նշում է պրոֆեսոր Վ.Դ. Ավետիսյանը՝ այն իրավաբանական անձինք, որոնց հիմնադիրները (անդամները) ունեն դրանց կառավարմանը մասնակցելու իրավունք, պետք է դասել կորպորատիվ կազմակերպությունների (կորպորացիաների) շարքը, իսկ այն իրավաբանական անձինք, որոնց հիմնադիրներն իրավաբանական անձանց գործերի վարմանը մասնակցության կամ անդամակցության իրավունք ձեռք չեն բերում, պետք է դասել ոչ կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց շարքը²: Կոռպերատիվները ղեկավարվում են իրենց հիմնադիրների, մասնակիցների կողմից. հետևաբար, նրանց կառավարումը ևս իրականացվում է կորպորատիվ կառավարման մոդելով:

Մոգիլևսկին կորպորատիվ կառավարումը բնորոշում է որպես սոցիալական կառավարման տարատեսակ, որն իրենից ներկայացնում է տնտեսական ընկերության

գործունեության մեջ կորպորատիվ շահերով կամ աշխատանքային պայմանագրերով ընդգրկված անձանց վարքագծի վրա անընդհատ և նպատակաուղղված ազդեցություն³: Համաշխարհային բանկի կողմից տրված բնորոշման համաձայն՝ կորպորատիվ կառավարումն օրենքների, իրավական այլ ակտերի և մասնավոր հատվածի կամ մավոր գործունեության այնպիսի միասնությունն է, որը ձեռնարկություններին հնարավորություն է ընձեռում ներգրավել ֆինանսական և մարդկային կապիտալ, գործել արդյունավետ և այդպիսով հարատևել՝ իրենց բաժնետերերի համար ստեղծելով երկարաժամկետ տնտեսական արժեք, որը պետք է զուգորդվի շահագրգռված բոլոր կողմերի և, ընդհանուր առմամբ, հասարակության շահերի նկատմամբ ունեցած հարգանքով⁴: Բազմապիսի տարողունակ սահմանումներ կողքին, մեր կարծիքով, ամենապարզ և դիպուկ սահմանումներից մեկը տրված է Միացյալ Թագավորության Քեդբրրիի Կանոնագրքում, համաձայն որի՝ «Կորպորատիվ կառավարումը համակարգ է, որով ընկերությունները ղեկավարվում և վերահսկվում են»⁵:

Կառավարման ոլորտում կոռպերատիվները՝ որպես իրավաբանական ան-

1. Այս մասին առավել մանրամասն տես, Վ. Դ. Ավետիսյան, «Կորպորատիվ իրավահարաբերությունների արդի հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում», Երևան 2013, էջ 269:
 2. Տե՛ս նույն տեղում, էջ 44:
 3. Տե՛ս **Могилевский С.Д.** Органы управления хозяйственными обществами.(Правовой аспект),дисс... д-ра юридических наук,М.,2000, էջ 166:
 4. Տե՛ս **Massen G. F.** International Comparison of Corporate Governance Models, Elst, the Netherlands, 2000, էջ 1:
 5. «Կորպորատիվ կառավարման կանոնագրքին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարություն 30,12,2010 թ. Թիվ 1769-Ա որոշումը (ՀՀՊՏ 2011/6(809)02.02.11):

ծի յուրահատուկ տեսակ, ունեն իրենց առանձնահատկությունները: Կոոպերատիվների կառավարմանը բնորոշ են ժողովրդավարությունը, ինքնակառավարումը, ինքնագործունեությունը⁶:

Կոոպերատիվի կառավարման մարմինները երաշխավորում են անդամների մասնակցությունը կառավարմանը և ապահովում են ինքնակառավարման սկզբունքի իրականացումը: Իրավաբան-գիտնական Դ. Մ. Գենկինի կարծիքով. «Իրավաբանական անձի կառավարման մարմինների թվին կարելի է դասել միայն այն մարմինները, որոնք իրավասու են ընդունել կատարման համար պարտադիր որոշումներ»⁷: Կոոպերատիվների կառավարման մարմինները սահմանվում են «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքի⁸ (այսուհետ՝ նաև Օրենք) 14-րդ հոդվածով, որի 1-ին մասի համաձայն. «Կոոպերատիվի կառավարման մարմիններն են՝

1) բարձրագույն մարմինը՝ կոոպերատիվի անդամների ընդհանուր ժողովը (այսուհետ՝ ընդհանուր ժողով):

2) գործադիր մարմինը՝ վարչությունը կամ կոոպերատիվի նախագահը.

3) դիտորդ խորհուրդը»:

Կոոպերատիվի կառավարման բարձրագույն մարմինը ընդհանուր ժողովն է: Անդամների՝ կոոպերատիվի կառավարմանը մասնակցելու իրավունքը իրացվում է հենց ընդհանուր ժողովներին մասնակցելու միջոցով, որտեղ յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընդհանուր ժողովը կարող է լինել հերթական և արտահերթ: Հերթական ընդհանուր ժողովը գումարվում է կոոպերատիվի կանոնադրությամբ սահմանված ժամկետներում, սակայն ոչ պակաս, քան տարին մեկ անգամ: Հերթական ընդհանուր ժողովից բա-

ցի, գումարվող ընդհանուր ժողովները համարվում են արտահերթ:

Արտահերթ ընդհանուր ժողովը գումարվում է կոոպերատիվի անդամների առնվազն մեկ երրորդի կամ գործադիր մարմնի կողմից: Արտահերթ ընդհանուր ժողովի գումարման մասին գրավոր ներկայացրած պահանջի առկայության դեպքում գործադիր մարմինը պարտավոր է արտահերթ ընդհանուր ժողով գումարել պահանջը ներկայացնելու պահից երեսուն օրվա ընթացքում:

Կոոպերատիվի անդամն ընդհանուր ժողովին անձամբ մասնակցելու իր իրավունքը լիազորագրի տրման միջոցով կարող է փոխանցել իր ներկայացուցչին, այդ թվում՝ կոոպերատիվի որևէ այլ անդամի:

Կոոպերատիվի անդամների ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանն են պատկանում՝ կոոպերատիվի կանոնադրությունը փոխելը, դիտորդ խորհուրդ կազմավորելը, նրա անդամներ լիազորությունները դադարեցնելը և այլ առանցքային հարցերի լուծումը: Անդամների ընդհանուր ժողովը չի կարող այդ լիազորությունները փոխանցել այլ մարմնի: Ընդհանուր ժողովում հիմնական որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ, որոշումների մի մասի ընդունման համար անհրաժեշտ է ձայների 2/3 հարաբերակցությունը (կոոպերատիվի վերակազմակերպում, լուծարում), իսկ մի խումբ որոշումներ էլ ընդունվում են ձայների բացարձակ մեծամասնությամբ (կանոնադրությունը փոփոխելը, դրանում լրացում կատարելը և այլն):

Կոոպերատիվի գործադիր մարմիններն են վարչությունը և (կամ) նախագահը (Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մաս): Օրենքի չի բացառում երկու գործադիր մարմնի միաժամանակյա առկայություն, և այն դեպքում, երբ կոոպերատիվի անդամների

6. Ст' u К. И. Вахитов «История потребительской кооперации России», М. 2008, էջ 296:

7. Ст' u Генкин Д. М. Законодательство о промышленной кооперации («Положение о промышленной кооперации» от 11 июня 1928 года с теоретическими и практическими постанетейными разъяснениями). М., 1930. С.213.

8. ՀՀՊՏ 2015.12.30/91(1180):

թիվը 20-ից ավելի է, կարող է նախագահի ընտրությանը զուգահեռ ստեղծվել նաև վարչություն:

Կոոպերատիվի գործադիր մարմինը իրականացնում է կոոպերատիվի ընթացիկ ղեկավարումը և ներկայացնում է կոոպերատիվը տնտեսական և այլ հարաբերություններում: Կամ ինչպես իրավաբանական գրականության մեջ է երբեմն անվանվում. «Վարչությունը իրականացնում է կոոպերատիվի ղեկավարումը ընդհանուր ժողովների միջև ընկած ժամանակահատվածներում»⁹: Վարչությունը հաշվետու է ընդհանուր ժողովին և դիտորդ խորհրդին¹⁰: Գործադիր մարմինն իրավասու է գործարքներ կնքել կոոպերատիվի անունից, ներկայացնել կոոպերատիվը արտաքին հարաբերություններում՝ առանց լիազորագրի:

Գործադիր մարմինը ընտրվում է ընդհանուր ժողովի կողմից, հաշվետու է ընդհանուր ժողովին¹¹: Հարկ է նկատել, որ ո՛չ Օրենքի 15-րդ հոդվածը, որը սահմանում է ընդհանուր ժողովի լիազորությունները, և ո՛չ էլ 18-րդ հոդվածը չեն նախատեսել գործադիր մարմնի ազատման հնարավորությունը ընդհանուր ժողովի որոշմամբ, ինչը գործնականում կարող է մի շարք խնդիրներ առաջ բերել, այդ թվում՝ այն դեպքերում երբ գործադիր մարմինը անբարեխիղճ կատարի իր վրա դրված պարտականությունները, անդամները փաստացի հնարավորություն չեն ունենա գործադիր մարմնին վաղաժամկետ ազատել իր պարտականությունների կատարումից: Հարկ է նկատել, որ կոոպերատիվների վերաբերող օրենսդրության ուսումնասիրությունը ևս վկայում է նման կարգավորման անհրա-

ժեշտության մասին¹²: Վերոգրյալը հաշվի առնելով՝ կարծում ենք **Օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը (ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությունները) անհրաժեշտ է լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 19-րդ կետով.**

«19) գործադիր մարմիններին պաշտոնի նշանակումը և պաշտոնից ազատումը, կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառումը նրանց նկատմամբ»:

Գործադիր մարմնի անդամ կարող է ընտրվել տասնութ տարին լրացած կոոպերատիվի անդամ հանդիսացող, դիտորդ խորհրդի անդամ չհանդիսացող ֆիզիկական անձը: Ներկայումս առանձին հեղինակներ գտնում են, որ կոոպերատիվները պետք է կառավարվեն կոոպերատիվի անդամ չհանդիսացող պրոֆեսիոնալ կառավարիչների կողմից, որը կբարձրացնի կոոպերատիվների գործունեության արդյունավետությունը և գործող շուկայական հարաբերություններում նրանց կդարձնի առավել կենսունակ¹³: Սակայն կարծում ենք, որ այս մոդելը կիրառելի է մեծ և հարուստ կոոպերատիվների մակարդակում, որոնք տիրապետում են հսկայական ռեսուրսներ, իսկ մեր պայմաններում այդ նույն արդյունքին կարելի է հասնել կոոպերատիվների անդամների վերապատրաստման, նրանց կրթության միջոցով, միևնույն ժամանակ նրանց շահագրգռվածությունը ավելի մեծ կլինի կոոպերատիվի արդյունավետ կառավարման համար, քանի որ դրանից է կախված կոոպերատիվի շահույթը և համապատասխանաբար՝ իրենց եկամուտը: Առանձին երկրների օրենքներ նախատեսում են ժամանակային սահմանափա-

9. Տե՛ս **Тюкавкин-Плотников Алексей Александрович** “Правовое положение производственного кооператива как субъекта предпринимательской деятельности”, Иркутск, 2003, էջ 199:
 10. Տե՛ս **Демьяненко Владимир Васильевич** “Сельскохозяйственный производственный кооператив как юридическое лицо” Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, Саратов, 1997, էջ 125:
 11. St’u Guidelines for Cooperative Legislation, third revised edition ILO, section 5 Organs, Bodies And Management: էջ 132:
 12. Տե՛ս մասնավորապես Федеральный закон от 08.12.1995 N 193-ФЗ (ред. от 02.12.2019) “О сельскохозяйственной кооперации” հոդված 20:
 13. St’u “Cooperative Governance”, Münkner, February 2013, էջ 3-4:

կումներ կառավարման գործադիր մարմինների գործունեության համար, ինչը մեր կարծիքով արդարացված է. այսպես, օրինակ՝ Սերբիայի՝ կոոպերատիվներին վերաբերող օրենսդրությունը սահմանում է, որ կառավարման մարմինները՝ տնօրենների խորհրդի անդամները, նախագահը, վերստուգիչ հանձնաժողովի անդամները ընտրվում են ընդհանուր ժողովի կողմից, և նրանց պաշտոնավարման ժամկետը չի կարող գերազանցել կանոնադրությամբ նախատեսված ժամկետը, որը չի կարող ավել լինել 5 տարուց¹⁴: Մեր օրենքով ևս ամրագրված է այս մոտեցումը, ինչը ողջունելի է. օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Կոոպերատիվի նախագահը և վարչության անդամներն ընտրվում են մինչև երեք տարի ժամկետով՝ վերընտրվելու իրավունքով:

Կոոպերատիվների կառավարման մարմիններում առանձնահատուկ է դիտորդ խորհրդի առկայությունը: Դիտորդ խորհուրդը հսկողություն է իրականացնում կոոպերատիվի գործադիր մարմինների նկատմամբ, ինչը ավելի արդյունավետ է դարձնում վերջիններիս հաշվետվողականությունը, քանի որ անդամների ընդհանուր ժողովը գումարվում է տարեկան մեկ կամ ըստ անհրաժեշտության, իսկ դիտորդ խորհուրդը մշտապես գործող մարմին է¹⁵: Պետք է նկատի ունենալ, որ դիտորդ խորհրդի ստեղծումը պարտադիր է 50-ից ավել անդամներ ունեցող կոոպերատիվներում, մինչև 20 անդամ ունեցող կոոպերատիվներում դիտորդ խորհրդի ֆունկցիան կատարում է վերստուգողը, իսկ 20-ից 50 անդամ ունեցող կոոպերատիվներում՝ վերստուգիչ հանձնաժողովը: Դիտորդ խորհուրդը ստեղծվում է ընդհանուր ժողովի որոշմամբ, մինչև 50 անդամ ունեցող

կոոպերատիվներում՝ առնվազն 5 հոգու կազմով, 50-ից ավել անդամ ունեցող կոոպերատիվներում՝ առնվազն 7 անդամի կազմով (Օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մաս):

Դիտորդ խորհուրդը իրականացնում է հսկողություն կոոպերատիվի ընթացիկ գործունեության նկատմամբ, իրավասու է ստուգելու կոոպերատիվի դրամարկղը, արժեթղթերի և առևտրային փաստաթղթերի առկայությունը, անցկացնելու գույքագրում և իրականացնելու կոոպերատիվի ֆինանսատնտեսական գործունեության և հաշվապահական հաշվեկշռի նկատմամբ հսկողությանն առնչվող այլ գործառույթներ, նախաձեռնում է ընդհանուր ժողովի գումարումը օրենքով և կոոպերատիվի կանոնադրությամբ նախատեսված դեպքերում, իրավասու է կասեցնելու գործադիր մարմնի գործունեությունը՝ հրավիրելով արտահերթ ընդհանուր ժողով: Դիտորդ խորհրդի պահանջով տրամադրման ենթակա են դիտարկումների համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը: Դիտորդ խորհրդի լիազորությունները չեն կարող փոխանցվել այլ անձի, խորհրդի անդամներն իրավունք չունեն գործելու կոոպերատիվի անունից, ինչը նշանակում է, որ արտաքին հարաբերություններում խորհրդի անդամը չի կարող ներկայացնել կոոպերատիվս ի պաշտոնե:

Վերոգրյալից պարզ է դառնում, որ դիտորդ խորհրդի (այդ թվում նաև՝ վերստուգողի, վերստուգիչ հանձնաժողովի) հիմնական ֆունկցիան կոոպերատիվի կառավարումն առավել արդյունավետ դարձնելն է, կառավարման ընթացքում թույլ տված չարաշահումները բացահայտելը և դրանք կոոպերատիվի անդամներին ներկայացնելը: Չնայած Օրենքի 20-րդ հոդ-

14. Stü Cooperatives Act, ("FR Yugoslavia Off. Gazette ", No 41/96, 12/98 and "Republic of Serbia Off. Gazette " No. 101/2005 – and 34/2006), հոդվածներ 31-43:

15. St' u "Cooperative Governance", Münkner, February 2013, էջ 15:

վածի 6-րդ մասը որպես դիտորդ խորհրդի լիազորություն նախատեսում է նաև գործադիր մարմնի լիազորությունների կասեցումը, արտահերթ ժողովի նախաձեռնումը, այդուհանդերձ օրենսդիրը չի հստակեցնում այն ժամկետները, երբ գործադիր մարմնի լիազորությունը կասեցնելուց հետո դիտորդ խորհուրդը պետք է դիմի ընդհանուր ժողովին, ավելին, նշված չեն այն հիմքերը, որոնց առկայության դեպքում դիտորդ խորհուրդը կարող է կասեցնել գործադիր մարմնի լիազորությունները, ինչը կարող է հնարավոր կամայականությունների տեղիք տալ, այդ իսկ պատճառով կարծում ենք, որ **Օրենքի 20-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետը անհրաժեշտ է խմբագրել հետևյալ բովանդակությամբ.**

«Կոոպերատիվի ֆինանսական վիճակի ուսումնասիրությունների, գործունեության նկատմամբ իրականացված դիտարկումների և ստուգումների արդյունքում չարաշահումներ հայտնաբերելիս դիտորդ խորհուրդը կասեցնում է գործադիր մարմնի լիազորությունները և կանոնադրությամբ նախատեսված ժամկետում, բայց ոչ ավել, քան 15 օրվա ընթացքում հրավիրում է արտահերթ ընդհանուր ժողով՝ ներկայացնելով հայտնաբերված չարաշահումների վերաբերյալ կազմված եզրակացությունը: Եզրակացությունը պետք է պարունակի չարաշահումների բովանդակությունը և դրանց արդյունքում կոոպերատիվին պատճառված վնասը: Եզրակացության քննության արդյունքում ընդհանուր ժողովը՝ ձայների պարզ մեծամասնությամբ, որոշում է կայացնում գործադիր մարմնի լիազորությունները դադարեցնելու մասին կամ վերացնում է գործադիր մարմնի լիազորությունների

կասեցումը: Եթե չարաշահումների արդյունքում կոոպերատիվին վնաս է պատճառվել, ապա արտահերթ ժողովը որոշում է կայացնում վնասների հատուցմանն ուղղված հետագա քայլերի վերաբերյալ»:

Ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքի չի նախատեսել իրավական կարգավորումներ այն դեպքերի համար, երբ կառավարման մարմնի գործունեության արդյունքում վնաս է պատճառվում կոոպերատիվին: Այնինչ կառավարման մարմինների գործունեության արդյունքում պատճառված վնասի և դրա հատուցման կարգի վերաբերյալ կարգավորումներ նախատեսված են «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքով¹⁶ (հոդված 46), «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով¹⁷ (հոդված 90): Նման կարգավորումներ նախատեսված են նաև գյուղատնտեսական կոոպերատիվներին վերաբերող օտարերկրյա իրավական ակտերով¹⁸: Վերոգրյալը հաշվի առնելով՝ առաջարկում ենք Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 20.1 հոդվածով.

«Հոդված 20.1 Գործադիր մարմնի, դիտորդ խորհրդի, վերստուգիչ հանձնաժողովի և վերստուգողի պատասխանատվությունը

1. Կոոպերատիվի գործադիր մարմնի անդամները, դիտորդ խորհրդի, վերստուգիչ հանձնաժողովի անդամները, վերստուգողը (այսուհետ՝ կառավարման մարմնի անդամներ) պարտավոր են գործել բարեխիղճ և իրենց գործունեությունն իրականացնելիս ղեկավարվել կոոպերատիվ շահերով: Նրանք պարտավոր են

16. Տե՛ս ՀՀՊՏ 2001.12.07/38(170):

17. Տե՛ս ՀՀՊՏ 2001.11.06/34(166):

18. Տե՛ս, մասնավորապես, Федеральный закон от 08.12.1995 N 193-ФЗ (ред. от 02.12.2019) "О сельскохозяйственной кооперации" հոդված 28:

պահպանել իրենց գործունեության ընթացքում հայտնի դարձած առևտրային գաղտնիք պարունակող տեղեկությունները:

2. Կառավարման մարմնի անդամների գործունեության արդյունքում կոոպերատիվին պատճառված վնասը ենթակա է հատուցման դատական կարգով: Վնաս պատճառած անձինք (կառավարման մարմնի անդամները) համապարտ պատասխանատվություն են կրում կոոպերատիվի առաջ:

3. Կոոպերատիվի յուրաքանչյուր անդամ իրավունք ունի դիմելու դատարան՝ պահանջելով կառավարման մարմնի գործունեության արդյունքում կոոպերատիվին պատճառված վնասի հատուցում:

4. Կառավարման մարմնի անդամները ազատվում են պատասխանատվությունից, եթե որոշումը, որի արդյունքում կոոպերատիվին վնաս է պատճառվել, հաստատվել է ընդհանուր ժողովի կողմից:

5. Կառավարման մարմնի անդամը ազատվում է պատասխանատվությունից, եթե չի մասնակցել այն որոշման կայացմանը, որի արդյունքում կոոպերատիվին վնաս է պատճառվել, կամ մասնակցել է որոշման կայացմանը, սակայն դեմ է քվեարկվել նման որոշման ընդունմանը¹⁹:

6. Կոոպերատիվի նախագահը

պատասխանատվություն է կրում իր հետ կնքած աշխատանքային պայմանագրով և աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված կարգով»:

Նման կարգավորման նախատեսումը, մեր կարծիքով, ունի նաև գործնական կարևոր նշանակություն, քանի որ կոչված է զսպող դեր կատարելու կառավարման մարմինների կողմից հնարավոր չարաշահումները կանխելու ուղղությամբ, իսկ այն դեպքերի համար, երբ արդեն տեղի է ունեցել չարաշահումը, կոոպերատիվի անդամին հնարավորություն է տալիս իր իրավունքների արդյունավետ իրացման միջոցով վերականգնել կոոպերատիվին պատճառված վնասը:

Կոոպերատիվների կառավարման արդյունավետությունը բարձրացնելու, անդամների միջև բարիդրացիական հարաբերությունները պահպանելու համար հաճախ կոոպերատիվների կանոնդրությունը նախատեսում է այնպիսի մարմինների և մեխանիզմների ստեղծումը, որոնք լուծում են անդամների միջև առաջացող վեճերը, ինչն ավելի քիչ ժամանակատար և ծախսատար է, քան դատական ընթացակարգը²⁰: Որպես նման ընթացակարգի օրինակ կարելի է նշել, օրինակ կոոպերատիվի գործադիր մարմնի որոշումների բողոքարկման հնարավորությունը ընդհանուր ժողովում և այլն:

19. Հարկ է նկատել, որ որոշ հեղինակների կարծիքով կառավարման մարմնի անդամը կարող է պատասխանատվության ենթարկվել անգամ մեղքի բացակայության դեպքում այլ անդամների հետ միասին: Առավել մանրամասն տեսն Генкин Д.М. Краткий курс кооперативного права - М.-1929. - էջ. 8:

20. St' u International Association of Cooperative Law Journal. No22, 1995: series of articles on cooperative legislation in European countries.

ԱՆԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀՀ արդարադատության նախարարության
 Իրավական ապահովման վարչության պետի տեղակալ,
 ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի դասախոս

**ՄԻՄՅԱՆՅ ՇԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՈՐԾԵՐԻ ԸՆԴՊԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ
 ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆԴՊԱՏՈՒԹՅԱՆ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՏԵՍԱԿ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի¹ 2-րդ հոդվածը, արտացոլելով ՀՀ Սահմանադրությամբ² սահմանված դատական պաշտպանության իրավունքի սահմանադրական դրույթը, ամրագրել է սուբյեկտիվ իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության խնդրով յուրաքանչյուր շահագրգիռ անձի դատարան դիմելու հնարավորությունը: Սակայն շահագրգիռ անձի կողմից իր խախտված կամ վիճարկվող սուբյեկտիվ իրավունքների, ազատությունների և օրինական շահերի դատական պաշտպանությունը հնարավոր է միայն օրենքով սահմանված կարգով համապատասխան ընդդատյա դատարան դիմելով, այսինքն՝ այն դատարան, որի իրավասությունների շրջանակի մեջ է մտնում կոնկրետ գործի քննությունը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը, սահմանելով ընդհանուր տարածքային ընդդատություն, որի համաձայն՝ հայցը ներկայացվում է պատասխանողի հաշվառման (գտնվելու) վայրի, իսկ քաղաքացու՝ հաշվառման վայր չունենալու դեպքում՝ բնակության վերջին հայտնի վայրի առաջին ատյանի դատարան (ՀՀ ՔԴՕ 21-րդ հոդված), միաժամանակ սահմանել է նաև տարածքային ընդդատության այլ տեսակներ՝ այլընտրանքային, պայմանագրային և բացառիկ ընդդատություն: Սակայն ՀՀ ՔԴՕ-ում ամրագրված են նաև

ընդդատության՝ կոնկրետ դատարան դիմելու իրավունքի իրացման այնպիսի կանոններ, որոնք թույլ են տալիս առանձնացնել միմյանց հետ կապված գործերի ընդդատությունը որպես տարածքային ընդդատության ինքնուրույն տեսակ:

Քաղաքացիական դատավարությունում դատավարական խնայողության և կողմերի միջև իրական փոխհարաբերությունների համակողմանի պարզաբանման շահերը մի շարք դեպքերում պահանջում են միմյանց հետ փոխկապակցված գործերի համատեղ քննություն, որը իրականացվում է միմյանց հետ կապված գործերի ընդդատության կանոնների միջոցով:

Միմյանց հետ կապված գործերի ընդդատությունը իրենից ներկայացնում է տարածքային ընդդատության այնպիսի տեսակ, որի դեպքում մի գործի ընդդատությունը որոշվում է դրա հետ կապված այլ գործի ընդդատությամբ և կանխորոշում կոնկրետ դատարան դիմելու իրավունքը: Այլ կերպ ասած՝ միմյանց հետ կապված գործերի ընդդատության իմաստը կայանում է նրանում, որ անկախ պատասխանողի բնակության (գտնվելու) վայրի դատարանից՝ գործն ընդդատյա է այն դատարանում քննության, որտեղ քննվում է կամ քննվել է տվյալ գործի հետ կապված այլ գործ:

Միմյանց հետ կապված գործերի ընդդատության սահմանման նպատակը

1. Տե՛ս **Бутенко А. П.** Государство: его вчерашние и сегодняшние трактовок// «Государство и право», 1993, N7.
 2. Տե՛ս **Мамут Л. С.** Государство в ценностном измерении. М., 1998.

պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Այսպես, **միմյանց հետ կապված գործերի ընդդատություն սահմանելը նպատակահարմար է ինչպես շահագրգիռ անձանց իրավունքների արդյունավետ դատական պաշտպանության, այնպես էլ՝ դատավարական միջոցների խնայողության տեսանկյունից:**

Նախ՝ միմյանց հետ կապված գործերի ընդդատության պարագայում սկզբնական հայցի հետ կապված հայցի քննությունն իրականացվում է սկզբնական հայցը քննող նույն դատարանի վայրում, ինչը հարմար է ինչպես կողմերի, այնպես էլ դատարանի համար:

Երկրորդ՝ միմյանց հետ կապված գործերի ընդդատության կանոնները նպատակաուղղված են արագացնելու վարույթը, տնտեսելու դատարանի և կողմերի ժամանակը, կրճատելու ծախսերը, դատավարական նվազագույն ուժերի և միջոցների կիրառմամբ դատական գործընթացն իրականացնելու առավել արդյունավետությամբ, տվյալ գործով փաստական և ապացուցողական ամբողջ նյութը կենտրոնացնել մեկ վարույթում, խուսափել միմյանց հետ կապված գործերով հակասական վճիռներ կայացնելուց: Այն, վերջին հաշվով, ապահովում է միմյանց հետ կապված պահանջների բազմակողմանի քննությունն ու միատեղ ճիշտ լուծումը³:

Միմյանց հետ կապված գործերի ընդդատության կանոնների առանձնացման համար որոշիչ նշանակություն ունի նաև ընդդատության այս տեսակի սահմանման չափանիշների պարզումը: Կարծում ենք, որ որպես այդպիսիք պետք է դիտարկել հետևյալ հատկանիշների միաժամանակյա առկայությունը.

- *հարուցվող հայցի հետ կապված արդեն քննվում է կամ քննվել են գործեր, որոնք օբյեկտիվորեն կապված են միմյանց հետ,*

- *հարուցվող հայցով և արդեն քննվող կամ քննված գործով դատավարության սուբյեկտները նույնն են:*

Հարկ է նշել, որ իրավաբանական գրականության մեջ չկա միասնական կարծիք միմյանց հետ կապված գործերի ընդդատության սահմանման և ընդդատության այս տեսակն ընդգրկող կանոնների շրջանակի հետ կապված:

Այսպես, որոշ հեղինակներ միմյանց հետ կապված պահանջներով ընդդատությունը դիտարկում են որպես միմյանց հետ կապված գործերի ընդդատության դրսևորում⁴: Մինչդեռ, դրանք պետք է տարբերել միմյանցից: Միմյանց հետ կապված պահանջներով գործերի ընդդատությունն առաջին հերթին սահմանվում է այն դեպքերի համար, երբ գործով պատասխանողները մի քանիսն են, նրանց դեմ ներկայացվող պահանջները օբյեկտիվորեն կապված են իրար հետ, որը հնարավորություն է ստեղծում բոլոր պատասխանողների դեմ ուղղված պահանջները քննել համատեղ՝ մեկ վարույթում, թեկուզև նրանք բնակվում (գտնվում) են տարբեր վայրերում⁵:

Ինչ վերաբերվում է միմյանց հետ կապված գործերի ընդդատությանը, ապա այս դեպքում մենք գործ ունենք ոչ թե մեկ հայցադիմումում միացված տարբեր պահանջների հետ, այլ ինքնուրույն, ընդհանուր իրավասության դատարանի իրավասությանը վերապահված առանձին քաղաքացիական գործերի հետ, որոնք կապված են իրար հետ:

3. Տե՛ս Պետրոսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարություն, - երրորդ հրատ., Երևանի համալս. հրատ., Եր., 2007, էջեր 272-273:

4. Տե՛ս Պետրոսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարություն, - չորրորդ հրատ., Երևանի համալս. հրատ., Եր., 2012, էջ 129: Гражданский процесс: Учебник / Под ред. М.К. Треушников. — М.: ООО «Городец-издат», 2003, էջ:

5. Տե՛ս Ռ.Գ. Պետրոսյան, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարություն: - երրորդ հրատ. - Եր.: Երևանի համալս. հրատ., 2007, էջ 272-273:

Հարկ է նշել, որ մի շարք օտարերկրյա պետությունների դատավարական օրենսդրությունները չեն նախատեսում միմյանց հետ կապված գործերի ընդդատությունն որպես տարածքային ընդդատության ինքնուրույն տեսակ (օրինակ՝ Ֆրանսիա, Գերմանիա, Վրաստան): Իսկ այն պետությունների դատավարական օրենսդրությունները, որտեղ ամրագրված է տարածքային ընդդատության այս տեսակը, նախատեսում են միմյանց հետ կապված գործերի ընդդատության հետևյալ կանոնները՝

1) հակընդդեմ հայցը ներկայացվում է սկզբնական հայցի քննության վայրի դատարան⁶,

2) մի քանի պատասխանողների դեմ հայցը, որոնք բնակվում կամ գտնվում են տարբեր վայրերում, ներկայացվում է պատասխանողներից մեկի բնակության կամ գտնվելու վայրի դատարան⁷,

3) ինքնուրույն պահանջ ներկայացնող երրորդ անձանց հայցերը կարող են ներկայացվել այն դատարան, որտեղ քննվում է հիմնական հայցը⁸:

Մեր կարծիքով՝ որպես միմյանց հետ կապված գործերի ընդդատություն պետք է դիտարկել հետևյալ դեպքերը.

1) ՀՀ ՔԴՕ-ի 140-րդ հոդված 1-ին մասի համաձայն՝ «Պատասխանողն իրավունք ունի մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը հակընդդեմ հայց ներկայացնել ընդդեմ հայցվորի՝ սկզբնական հայցի հետ համատեղ քննելու համար»:

Ի տարբերություն գործող կարգավորման, որը սահմանափակել է հակընդ-

դեմ հայց ներկայացնելու իրավունքի իրականացումը մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը, 1998 թ. ընդունված ՔԴՕ-ով այդ իրավունքը պատասխանողը կարող էր իրագործել մինչև գործով վճիռ կայացնելը (ՀՀ ՔԴՕ 96-րդ հոդված, 1-ին մաս):

Նշված դրույթից պարզ է դառնում, որ հակընդդեմ հայցերով ընդդատությունը պատկանում է սկզբնական հայցի դատարանին: Դա տրամաբանական է, քանի որ սկզբնական հայցը և նրանից պաշտպանվելու միջոցը՝ պատասխանողի կողմից սկզբնական հայցվորին ներկայացվող հակընդդեմ հայցը միմյանց հետ անխզելիորեն (տրամաբանորեն և իրավականորեն) կապված են: Դրանցից մեկի բավարարումը հանգեցնում է մյուսի մերժմանը. դրանցից բխող պահանջները հնարավոր է հաշվակցել իրար հետ: Սկզբնական հայցով և հակընդդեմ հայցով կողմերը նույնն են: Դրա համար էլ հակընդդեմ հայցը ճիշտ և արագ կարող է քննվել միայն սկզբնական հայցի քննության վայրի դատարանում: Հակընդդեմ հայց ներկայացնելը հնարավորություն է ընձեռում պատասխանողին մասնակցելու դատավարությանը՝ անհրաժեշտության դեպքում օգտագործելով օրենքով նախատեսված դատավարական պաշտպանության միջոցները:

Հակընդդեմ հայցի ինստիտուտը հնարավորություն է տալիս մեկ դատավարության ընթացքում մեկ դատական ակտով լուծել կողմերի փոխադարձ պահանջները և դատավարական նվազագույն ուժերի ու միջոցների կիրառմամբ դատական գործընթացն իրականացնել առա-

6. Ст' у Гражданский процессуальный кодекс Эстонской Республики: Принят 20.04.2005, RT 2005, 26, 197. Вступление в силу 01.01.2006, статья 98, "Гражданский процессуальный кодекс Российской Федерации" от 14.11.2002 N 138-ФЗ (ред. от 03.04.2018), статья 31, "Гражданский процессуальный кодекс Украины", статья 113 (<https://meget.kiev.ua/kodeks/gpk/>).

7. Ст' у "Гражданский процессуальный кодекс Российской Федерации" от 14.11.2002 N 138-ФЗ (ред. от 03.04.2018), статья 31, "Гражданский процессуальный кодекс Украины", статья 113 (<https://meget.kiev.ua/kodeks/gpk/>).

8. Ст' у Гражданский процессуальный кодекс Эстонской Республики: Принят 20.04.2005, RT 2005, 26, 197. Вступление в силу 01.01.2006, статья 98:

9. Ст' у ՀՀ սահմանադրական դատարանի 2016 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԱԴՈ-1315 որոշումը:

վել արդյունավետությամբ⁹:

Թեև հակընդդեմ հայց ներկայացնելու հնարավորության սահմանափակումներն ընդհանուր առմամբ չեն խոչընդոտում անձի դատական պաշտպանության հնարավորությունը, քանի որ ցանկացած պարագայում նա իրավասու է քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով ինքնուրույն հայց ներկայացնել դատարան, ինչպես նաև հակընդդեմ հայցի մերժման դեպքում պատասխանողն իրավունք ունի ինքնուրույն հայցադիմում ներկայացնելով իրացնել իր դատական պաշտպանության իրավունքը, սակայն դա չի կարող լիարժեք հիմնավոր համարվել պատասխանողի իրավունքների արդյունավետ դատական պաշտպանության տեսանկյունից հետևյալ պատճառաբանությամբ.

Նախ՝ ՀՀ դատական օրենսգրքի¹⁰ «Առաջին ատյանի դատարանում գործերի բաշխումը» վերտառությամբ 42-րդ հոդվածը կանոնակարգում է դատարաններում գործերի բաշխման գործընթացը: Ի տարբերություն հակընդդեմ հայցադիմումի՝ պատասխանողի կողմից ինքնուրույն հայցադիմում ներկայացվելու դեպքում վերոհիշյալ կանոնակարգումը չի երաշխավորում այդ հայցի քննումը սկզբնական հայցը քննող նույն դատարանի վայրում,

Երկրորդ՝ ինքնուրույն հայց ներկայացնելու դեպքում ակնհայտորեն ավելանում են ՀՀ ՔԴՕ 101-րդ հոդվածով նախատեսված դատական ծախսերը,

Երրորդ՝ հակընդդեմ հայցը հիմնական հայցի հետ քննելու արդյունքում կայացվում է մեկ դատական ակտ, ինչն առավել մատչելի և արդյունավետ է այդ ակտի բողոքարկման, ինչպես նաև կատարման տեսանկյուններից:

Տվյալ կանոնը բացատրվում է հակընդդեմ հայցի իրավական բնույթով, ինչ-

պես նաև վերջինիս ներկայացման պայմանով, որի արդյունքում այն կարող է քննվել միայն սկզբնական հայցի հետ միաժամանակ¹¹:

2) Որպես միմյանց հետ կապված գործերի ընդդատություն պետք է դիտարկել նաև **վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ ներկայացնող երրորդ անձանց հայցերը:**

ՀՀ ՔԴՕ-ը երրորդ անձանց հայցերի ընդդատության կարգավորման համար հատուկ կանոն չի նախատեսել: Օրենսգրքի ընդհանուր տրամաբանությունից և իրավակիրառ պրակտիկայից բխում է, որ երրորդ անձանց հայցերը քննվում են հիմնական (սկզբնական) հայցի հետ մեկտեղ: Երրորդ անձանց հայցերը, որոնք վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ են ներկայացնում, ներկայացվում և քննվում են այն դատարանում, որտեղ լուծվում է հայցվորի և պատասխանողի միջև գործը, որի առարկան նույնն է:

Վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձինք վեճի առարկայի նկատմամբ ներկայացնում են ինքնուրույն պահանջներ, գործի ելքում ունեն նյութափրավական ուղղակի շահ, վարույթ են մտնում իրենց նախաձեռնությամբ՝ ընդհանուր հիմունքներով հայց հարուցելով, և օգտվում են հայցվորի իրավունքներից և կրում նրա պարտականությունները¹²:

Ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձինք ունեն ինքնուրույն դատավարական և նյութափրավական շահեր, որոնք շոշափվում են դատական գործի շրջանակում: Հետևաբար, ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձանց պետք է այդ շահերը գործին մասնակցող այլ անձանց հետ հավասար հիմունքներով արդյունավետ պաշտպանելու հնարավորու-

10. Ընդունվել է 07.02.2018թ., ուժի մեջ է մտել 09.04.2018թ.: Տե՛ս ՀՀ ՊՏ 2018.02.12/10(1368), ՀՕ-95-Ն:

11. Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2016 թվականի հունիսի 23-ի թիվ ԱԴՈ-1289 որոշումը:

12. Տե՛ս Մեղրյան Ս. Գ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունը սխեմաներում/ Ս.Գ.Մեղրյան.-Եր: ԵՊՀ հրատ. 2011, էջ 47:

թյուն ընձեռվի: Մասնավորապես, չի կարող օրենսդրական կարգավորման արդյունքում ստեղծվել այնպիսի իրավիճակ, երբ գործին մասնակցող որևէ անձի իրավունքի խախտման, կոնկրետ դեպքում՝ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձանց վնաս պատճառելու գործնական հնարավորություն լինի դատավարության ընթացքում, սակայն հնարավորություն չնախատեսվի նրանց համար խախտված իրավունքը վերականգնելու գործին մասնակցող այլ անձանց նման հնարավորություն ընձեռելու պայմաններում: Նման իրավակարգավորումը կհակասեր խախտված իրավունքների արդյունավետ վերականգնման և խտրականության բացառման սահմանադրաիրավական սկզբունքներին: Երրորդ անձանց վերաբերյալ վերը նշված տեսական պատկերացումները գրեթե ամբողջությամբ արտացոլված են ՀՀ գործող քաղաքացիական դատավարության օրենսգրքի դրույթներում՝ բացառությամբ երրորդ անձանց կողմից ներկայացվող հայցերի ընդդատության հստակ կանոնակարգման:

3) ՀՀ ՔԴՕ 138-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող անձը կամ այլ անձը, որի դեմ կիրառվել է հայցի ապահովման միջոց, իրավունք ունի հայցադիմում ներկայացնելու նույն դատարան՝ ընդդեմ հայցի ապահովման միջոց պահանջած գործին մասնակցող անձի՝ հայցի ապահովմամբ իրեն պատճառված վնասները հատուցելու պահանջով, եթե դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով ներկայացված հայցը մասնակի կամ ամբողջությամբ մերժվել է, թողնվել է առանց քննության, կամ գործի վարույթը կարճվել է սույն օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ, 7-րդ կամ 11-րդ կետերով նախատեսված հիմքով:

Նշված դրույթը նախատեսում է հայցի ապահովման միջոց կիրառած դատարանի հայց հարուցելու հնարավորություն գործին մասնակցող անձի կամ այլ անձի

համար այն դեպքերում, երբ կիրառված հայցի ապահովմամբ վերջինիս վնաս է պատճառվել:

Հարկ է նշել, որ մինչև գործող ՀՀ ՔԴՕ-ի ընդունումը հայցի ապահովմամբ պատճառված վնասի հատուցման՝ 1998 թ. ընդունված ՔԴՕ-ով նախատեսված իրավակարգավորումը բավականին խնդրահարույց էր: Մասնավորապես, նախկին իրավակարգավորմամբ՝ հայցի ապահովմամբ պատճառված վնասները հատուցելու պահանջով հայց հարուցելու իրավունքով օժտված էր միայն պատասխանողը, քանի որ ՀՀ ՔԴՕ 102-րդ հոդվածի 2-րդ մասում օրենսդիրն ուղղակիորեն օգտագործում էր «պատասխանող» բառը:

Նախատեսված կարգավորման պայմաններում այլ անձինք, փաստորեն, զրկված էին հայցի ապահովմամբ իրենց պատճառված վնասները հատուցելու պահանջով հայցի ապահովման միջոց կիրառած դատարանի հայց ներկայացնելու հնարավորությունից:

Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ևս վկայում էր այն մասին, որ ՀՀ ՔԴՕ 102-րդ հոդվածի 2-րդ մասի նորմը հաճախ կիրառվում էր նեղ մեկնաբանությամբ: Օրինակ՝ թիվ ԵՄԴ/0425/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը 09.04.2015 թվականի որոշմամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Հայցի ապահովման էությունից բխում է, որ այն կիրառվում է պատասխանողի նկատմամբ, մինչդեռ վիճարկվող պարագայում հայցի ապահովման միջոցը կիրառվել է երրորդ անձի նկատմամբ: Ամեն դեպքում, ակնհայտ է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածը պատասխանողին է իրավունք վերապահում հայց հարուցել նույն Դատարան, ընդդեմ հայցվորի՝ հայցի ապահովմամբ պատճառված վնասների հատուցման պահանջով...»:

Եվ պատահական չէ, որ նշված

դրույթը դարձել է ՀՀ սահմանադրական դատարանի քննարկման առարկա: Այսպես, ՀՀ սահմանադրական դատարանը 2016 թ. ապրիլի 12-ի «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով՝ թիվ ՍԴՈ-1264 որոշման շրջանակներում անդրադարձել է նշված նորմի վերլուծությանը: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրական դատարանը նշել է, որ հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները՝ սույն գործի քննության շրջանակներում Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 2-րդ մասում «Պատասխանողը» բառի օգտագործմամբ օրենսդիրը, ըստ էության, նկատի է ունեցել պատասխանողին: Մյուս կողմից, օրենսդիրը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսել է դատավարական պաշտպանության համապատասխան միջոցներ և եղանակներ, որոնց օգտագործմամբ հայցի ապահովմամբ վստաս կրած անձը հնարավորություն է ստանում ձեռք բերելու պատճառված վստասի հատուցման իրավունք: Ընդ որում, դատավարական պաշտպանության համապատասխան միջոցները և եղանակները, ի թիվս այլնի, ներառում են դատավարական կարգավիճակը փոխելու կամ համապատասխան դատավարական կարգավիճակ ձեռք բերելու իրավական հնարավորությունները:

Նման պայմաններում օրենսգրքի վիճարկվող դրույթով նախատեսված իրավունքը վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձանց չտրամադրելը վկայում է ոչ թե դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի սահմանափակման, այլ դիմողի կողմից դատական պաշտ-

պանության համապատասխան միջոցը և եղանակը չընտրելու մասին:

Մինչդեռ, ակնհայտ է, որ հայցի ապահովմամբ վստաս կարող է պատճառվել ոչ միայն պատասխանողին, այլև գործին մասնակցող և այլ անձանց ևս, որոնց նկատմամբ կիրառվել է հայցի ապահովում:

Բացի այդ, անհրաժեշտություն կար հստակեցնել նաև այն դեպքերը, որոնց դեպքում վրա է հասնում հայցի ապահովմամբ պատճառված վստասի հատուցում ստանալու իրավունքը:

Գործով ՀՀ ՔԴՕ-ով արդեն համապարփակ կարգավորում է տրվել նշված հարցին: Այսպես, ՀՀ ՔԴՕ 138-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող անձը կամ այլ անձը, որի դեմ կիրառվել է հայցի ապահովման միջոց, իրավունք ունի հայցադիմում ներկայացնելու նույն դատարան՝ ընդդեմ հայցի ապահովման միջոց պահանջած գործին մասնակցող անձի՝ հայցի ապահովմամբ իրեն պատճառված վստասները հատուցելու պահանջով, եթե դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով ներկայացված հայցը մասնակի կամ ամբողջությամբ մերժվել է, թողնվել է առանց քննության, կամ գործի վարույթը կարճվել է սույն օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ, 7-րդ կամ 11-րդ կետերով նախատեսված հիմքով:

Ավելին, ՀՀ ՔԴՕ-ը կարգավորում է նաև հայցի նախնական ապահովմամբ պատճառված վստասները հատուցելու և հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշումը չկատարելու հետևանքով պատճառված վստասների հատուցման հետ կապված հարցերը:

ՀՀ ՔԴՕ 138-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝ անձը, որի դեմ կիրառվել է հայցի նախնական ապահովման միջոց, իրավունք ունի հայցադիմում ներկայացնելու նույն դատարան՝ ընդդեմ հայցի նախնական ապահովման միջոց պահանջած անձի՝ նախնական ապահովմամբ իրեն պատճառված վստասները հատուցելու

● ՕՐԵՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 118 2020

պահանջով, եթե սահմանված ժամկետում չի ներկայացվել հայցադիմում այն պահանջով, որի կապակցությամբ կիրառվել է նախնական ապահովման միջոց, կամ ներկայացված հայցը մերժվել է, թողնվել է առանց քննության կամ գործի վարույթը կարճվել է սույն օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ, 7-րդ կամ 11-րդ կետերով նախատեսված հիմքով:

Գործին մասնակցող անձը, որի միջնորդությամբ կիրառվել է հայցի ապահովման միջոց, իրավունք ունի հայցադիմում ներկայացնելու նույն դատարան՝ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշումը չկատարելու հետևանքով իրեն պատճառված վնասները հատուցելու պահանջով:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարող ենք նշել, որ վերը թվարկված կանոնները իրենց բնույթով դասվում են միմյանց հետ կապված գործերի ընդդատության շարքում:

Տեղին է նշել նաև, որ 1998 թ. ընդունված ՀՀ ՔԴՕ-ը պարունակում էր միմյանց հետ կապված գործերի ընդդատության այլ կանոն ևս: Մասնավորապես, 1998 թ. ՀՀ ՔԴՕ 129-րդ հոդվածը սահմանում էր, որ ակնհայտ անհիմն հայցը դատարանի կողմից մերժվելու դեպքում պատասխանողն իրավունք ունի ընդդեմ հայցվորի հայց հարուցել նույն դատարան՝ իրեն պատճառած վնասները հատուցելու պահանջով:

ՀՀ վճռաբեկ դատարանը, 26.01.2007 թվականի թիվ 3-2431(ՎԴ) գործով անդրադառնալով պատասխանողի կողմից իր դեմ ակնհայտ անհիմն հայց հարուցելու հետևանքով պատճառված վնասը հատուցելու պահանջով ներկայացվող հայցին, արձանագրել է. «ՀՀ ՔԴՕ 129-րդ հոդվածի հիմքով դատարանի կողմից ակնհայտ անհիմն գնահատված հայց ներկայացրած անձի դեմ վնասների հատուցման պահանջով դատարան դիմելու դեպքից զատ

որևէ այլ դեպքում պատասխանողի մոտ հայցվորի նկատմամբ դատարան դիմելու հետևանքով իրեն պատճառված վնասները հատուցելու պահանջի իրավունք չի առաջանում:

Փաստորեն, միակ բացառությունը օրենսդիրը կատարել է ՀՀ ՔԴՕ 129-րդ հոդվածով, երբ արդար դատաքննության իրավունքից անբարեխիղճ օգտվելը կարող է վնասներ հատուցելու պարտականություն առաջացնել: Նման դեպքերում մեղքի առկայության և վնասների հատուցման հիմք է հանդիսանում դատարանի կողմից հայցն ակնհայտ անհիմն ճանաչելը: Այս դեպքում միայն պատասխանողն իրավունք ունի վնասների հատուցման պահանջով դիմելու դատարան»:

Մեր կարծիքով՝ ակնհայտ անհիմն հայցը դատարանի կողմից մերժվելու դեպքում կողմի կատարած ծախսերը հիմնականում ներառում են դատական ծախսերը (գործի քննության վայր ժամանելու հետ կապված ծախսերը, դատավարության մասնակիցների ներկայացուցիչների վճարները և դատարանի կողմից անհրաժեշտ ճանաչված այլ ծախսերը), որը կողմը ծախսել է հայցից պաշտպանվելու համար:

Մինչդեռ, տվյալ պարագայում օրենսդիրն օգտագործում է «վնաս» բառը, իսկ դատական ծախսերի բռնագանձման հիմքը նույնական չէ վնասի պատճառման հետևանքով առաջացած պարտավորությունների ընդհանուր հիմքերի հետ: Այսինքն՝ պատասխանողի կրած դատական ծախսերը հայցվորի կողմից նրան պատճառված վնաս չեն կարող դիտարկվել¹³:

Միմյանց հետ կապված գործերի ընդդատության՝ քննարկվող կանոնը գործող ՀՀ ՔԴՕ-ը չի նախատեսել: Նախագիծը, ի տարբերություն նախկին կարգավորման, որդեգրել է այն մոտեցումը, որ դատական ծախսերի հետ կապված պա-

13. Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԿԴ2/0189/02/15 քաղաքացիական գործով 02.12.2016թ. կայացրած որոշումը:

հանջները ներկայացվում են բացառապես տվյալ գործի շրջանակներում: Այսինքն՝ դատական ծախսերը այլ դատավարության շրջանակներում չեն կարող ներկայացվել: Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարող ենք նշել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ վկայակոչված դրույթները ևս մեկ անգամ վկայում են միմյանց հետ կապված գործերի ընդդատության՝ որպես տարածքային ընդդատության ինքնուրույն տեսակի գոյության մասին, որի առանձնացման նպատակը նախ և առաջ պայմանավորված է վերջինիս և տարածքային ընդդատության այլ տեսակների փոխհարաբերակցության խնդիրների առկայությամբ: Խոսքը հատկապես այն դեպքերի մասին է, երբ միմյանց հետ կապված գործերի ընդդատության կանոններով հարուցվող հայցն ընդդատյա է նաև բացառիկ ընդդատության կանոններով հարուցվող դատարաններին:

Գործող ՔԴՕ-ը չի պատասխանում այն հարցին, թե որ դատարանին է ընդդատյա այն գործը, որը միաժամանակ ընդդատյա է և՛ բացառիկ, և՛ միմյանց հետ կապված գործերի ընդդատությամբ սահմանվող դատարաններին:

Օրինակ՝ Էստոնիայի քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված է, որ հակընդդեմ հայցը կարող է ներկայացվել այն դատարան, որտեղ ներկայացվել է սկզբնական հայցը, եթե պահպանված են հակընդդեմ հայց ներկայացնելու կանոնները և հակընդդեմ հայցի համար սահմանված չէ բացառիկ ընդդատություն¹⁴:

Նշված կարգավորումից պարզ է դառնում, որ բացառիկ ընդդատության կանոնի առկայության դեպքում հակընդդեմ հայցը հարուցվում է ոչ թե սկզբնական հայցի հարուցման վայրի դատարան, այլ բացառիկ ընդդատության կանոնով սահ-

մանված վայրի դատարան: Այսինքն՝ բացառիկ ընդդատության կանոնը նախապատվություն ունի միմյանց հետ կապված գործերի ընդդատության կանոնի նկատմամբ:

Կարծում ենք, որ բացառիկ ընդդատության և միմյանց հետ կապված գործերի ընդդատության կանոնների միջև մրցակցություն առաջանալու դեպքում նախապատվությունը պետք է տրվի միմյանց հետ կապված գործերի ընդդատությանը:

Ասվածը հիմնավորվում է հետևյալով. բացառիկ ընդդատության սահմանման հիմքում ընկած է, առաջին հերթին, դատարանի շահը, այն է՝ ապահովել դատարանի համար մատչելիության՝ ավելի բարձրաստիճան գործի քննությունը իրականացնելով այն վայրում, որտեղ գտնվում է վեճի առարկան: Բացառիկ ընդդատության կանոններով քննվող գործերի քննությունը, որպես կանոն, կապված է լինում տեղում մանրակրկիտ ստուգողական գործողությունների իրականացման, շինությունների զննման հետ, վեճի առարկայի գտնվելու վայրում են կենտրոնացած լինում ապացույցների մեծամասնությունը, որը դատարանի համար պայմաններ է ստեղծում գործը առավել արագ, ժամանակի և միջոցների խնայումով լուծելու համար:

Մինչդեռ, միմյանց հետ կապված գործերի ընդդատության սահմանման նպատակը քաղաքացիական գործի ճիշտ և արագ քննությունն է, քանի որ միմյանց հետ կապված գործերի բնույթն այնպիսին է, որ դրանց բազմակողմանի և լրիվ քննությունը հնարավոր է ապահովել միայն դրանց համատեղ քննություն իրականացնելով (միևնույն գործի շրջանակներում, միևնույն դատարանի տարածքում):

Այսպես, միմյանց հետ կապված գործերի՝ օրինակ հակընդդեմ հայցի իրական բնույթն այնպիսին է, որ այն ան-

14. Ավելի մանրամասն տե՛ս Гражданский процессуальный кодекс Эстонской Республики: Принят 20.04.2005, RT 2005, 26, 197. Вступление в силу 01.01.2006, статья 98:

հնար է դարձնում սկզբնական հայցի քննությունն առանց հակընդդեմ հայցի, քանի որ հակընդդեմ հայցն ուղղված է սկզբնական հայցի բացառմանը, լրիվ կամ մասնակիորեն բացառում է սկզբնական հայցի բավարարումը, ինչպես նաև ունի սկզբնական հայցի հետ անխզելի կապ: Դրա համար էլ հակընդդեմ հայցը ճիշտ և արագ կարող է քննվել միայն սկզբնական հայցի քննության վայրի դատարանում: Նույնը կարելի է ասել նաև երրորդ անձանց կողմից հարուցվող հայցերի մասին, որոնք կապված են սկզբնական հայցի հետ և դրանց լիարժեք քննությունը և լուծումը հնարավոր է միայն դրանց համատեղ քննության դեպքում:

Ավելին, գործող ՔԴՕ-ով ամրագրվել է նաև այն մոտեցումը, որ բոլոր այն դեպքերում, երբ հակընդդեմ հայցի բավարարումն ամբողջությամբ կամ մասնակիորեն բացառում է սկզբնական հայցի բավարարումը, ապա հակընդդեմ հայց չներկայացնելը պատասխանողին զրկում է հետագայում այնպիսի հայց ներկայացնելու հնարավորությունից՝ բացառությամբ այն դեպքերի, երբ վերջինս հիմնավորում է հակընդդեմ հայց ներկայացնելու անհնարինությունն իրենից անկախ պատճառներով (<< ՔԴՕ 140-րդ հոդված, 4-րդ մաս): Ասվածը ևս մեկ անգամ հիմնավորում է հակընդդեմ հայցի և սկզբնական հայցի համատեղ քննության կարևորությունը:

Մինչդեռ, նույնը չենք կարող ասել հայցի ապահովմամբ, հայցի նախնական ապահովմամբ կամ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշումը չկատարելու հետևանքով պատճառված վնասները հատուցելու պահանջով գործին մասնակցող անձանց կամ այլ անձանց կողմից ներկայացվող հայցերի մասին, քանի որ միմյանց հետ կապված գործերի ընդդատության այս կանոններով ներկայացվող հայցերը հնարավոր է քննել նաև իրարից առանձին:

Այլ կերպ ասած՝ թեև վերը նշված

բոլոր կանոնները իրենց բնույթով դասվում են միմյանց հետ կապված գործերի ընդդատության շարքին, սակայն պետք է ի նկատի ունենալ, որ դրանցից ոչ բոլորը ունեն պարտադիրության նույն աստիճանը: Հետևաբար, կարծում ենք, որ անհրաժեշտ է առանձնացնել միմյանց հետ կապված գործերի ընդդատության երկու տեսակ՝

1. պարտադիր միմյանց հետ կապված գործերի ընդդատություն,

2. ոչ պարտադիր, միմյանց հետ կապված գործերի ընդդատություն:

Միմյանց հետ կապված գործերի ընդդատության այս տեսակների տարանջատման հիմնական նպատակը տարածքային ընդդատության այլ տեսակների հետ փոխհարաբերակցության դեպքերում դրանցից մեկին նախապատվություն տալու տարբերակման մեջ է:

Պարտադիր միմյանց հետ կապված գործերի ընդդատության բնույթն այնպիսին է, որ միմյանց հետ կապված գործերը հնարավոր է լիարժեք քննել և լուծել միայն դրանց համատեղ քննության արդյունքում, որի դեպքում տարածքային ընդդատության մյուս տեսակները կիրառման ենթակա չեն: Ընդդատության այս տեսակի մեջ են մտնում հակընդդեմ հայցերը և վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ ներկայացնող երրորդ անձանց հայցերը:

Ոչ պարտադիր միմյանց հետ կապված գործերի ընդդատության կանոնների դեպքում նոր հարուցվող հայցը ևս կապված է արդեն քննվող կամ քննված գործի հետ, սակայն այս դեպքում ընդդատությունն այս կանոնները պարտադիր չեն, դրանց կիրառման հնարավորությունը թողնված է հայցվորի կամահայտնությանը և դրանց ու ընդդատության այլ տեսակների միջև մրցակցություն առաջանալու դեպքում դրանց նախապատվություն չի տրվում: Ընդդատության այս տեսակի մեջ են մտնում հայցի ապահովմամբ, հայցի նախնական ապահովմամբ կամ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշումը չկատարելու

հետևանքով պատճառված վնասները հատուցելու պահանջով գործին մասնակցող անձանց կամ այլ անձանց կողմից ներկայացվող հայցերը:

Հետևաբար, կարծում ենք, որ անհրաժեշտ է համապատասխան կարգավորում տալ միմյանց հետ կապված գործերի ընդդատության և տարածքային ընդդատության այլ տեսակների փոխհարաբերակցության հարցին՝ **սահմանելով, որ պարտադիր միմյանց հետ կապված գործերի ընդդատության դեպքում փարածքային ընդդատության այլ կանոնները կիրառման ենթակա չեն:**

Ամբողջ վերոշարադրյալի հիման վրա կարծում ենք, որ անհրաժեշտ է ՀՀ ՔԴՕ-ով առանձնացնել միմյանց հետ կապված գործերի ընդդատությունը որպես փարածքային ընդդատության ինքնուրույն տեսակ հետևյալ կարգավորմամբ:

«1. Հակընդդեմ հայցը ներկայացվում է սկզբնական հայցի քննության վայրի առաջին ատյանի դատարան:

2. Վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձանց հայցերը ներկայացվում են սկզբնական հայցի քննության վայրի առաջին ատյանի դատարան:

3. Գործին մասնակցող անձը կամ այլ անձը, որի դեմ կիրառվել է հայցի ապահովման միջոց, իրավունք ունի հայցադիմում ներկայացնելու նույն դատարան՝ ընդդեմ հայցի ապահովման միջոց պահանջած գործին մասնակցող անձի՝ հայցի ապահովմամբ իրեն պատճառված վնասները հատուցելու պահանջով, եթե դատարանի՝

որանի՝ օրինական ուժի մեջ մտած դատարանի սկզբով ներկայացված հայցը մասնակի կամ ամբողջությամբ մերժվել է, թողնվել է առանց քննության կամ գործի վարույթը կարճվել է սույն օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ, 7-րդ կամ 11-րդ կետերով նախատեսված հիմքով:

4. Անձը, որի դեմ կիրառվել է հայցի նախնական ապահովման միջոց, իրավունք ունի հայցադիմում ներկայացնելու նույն դատարան՝ ընդդեմ հայցի նախնական ապահովման միջոց պահանջած անձի՝ նախնական ապահովմամբ իրեն պատճառված վնասները հատուցելու պահանջով, եթե սահմանված ժամկետում չի ներկայացվել հայցադիմում այն պահանջով, որի կապակցությամբ կիրառվել է նախնական ապահովման միջոց կամ ներկայացված հայցը մերժվել է, թողնվել է առանց քննության կամ գործի վարույթը կարճվել է սույն օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ, 7-րդ կամ 11-րդ կետերով նախատեսված հիմքով:

5. Գործին մասնակցող անձը, որի միջնորդությամբ կիրառվել է հայցի ապահովման միջոց, իրավունք ունի հայցադիմում ներկայացնելու նույն դատարան՝ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշումը չկատարելու հետևանքով իրեն պատճառված վնասները հատուցելու պահանջով:

6. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված դեպքերում, անկախ փվյալ գործի ընդդատությունից, հայցը ներկայացվում է սույն հոդվածով սահմանված առաջին ատյանի դատարան»:



ՍՅՈՒՉԱՆՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության
մաքսային կանոնների խախտումների
վերաբերյալ վարույթների իրականացման մաքսային տեսուչ

ՀՀ ՏԱՐԱԾՔ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՔՍԱՅԻՆ ԱՐԺԵՔԻ ՈՐՈՇՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տնտեսական համագործակցության զարգացումը, որը հիմնված է ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի ազատ տեղաշարժման վրա, ցանկացած ինտեգրացիոն միավորման շրջանակներում անհնար է իրականացնել առանց համաձայնեցված և ներդաշնակ մաքսային ու հարկային քաղաքականությունների իրականացման: Ամբողջ աշխարհում միասնացման գործընթացների խորացումը հանգեցնում է առևտրի ծավալների աճին, ինչն էլ, իր հերթին, մեծացնում է մաքսային մարմինների աշխատանքի ծավալները: Դրա հետ մեկտեղ, տնտեսական առումով երկրների անհավասար զարգացումը հանգեցնում է այն բանին, որ դրանց որոշ մասը դառնում է կախյալ առավել առաջատարներից՝ առաջացնելով առևտրային վեճեր և նպաստելով մաքսային ռիսկերի առաջացմանը: Այսօր պետությունների արտաքին տնտեսական համագործակցությունն իրականացվում է Եվրոպական և Եվրասիական տնտեսական միությունների ակտիվ մասնակցությամբ: Վերջիններս տնտեսական և իրավական մեթոդներով ուղղորդում են անդամ պետությունների մաքսային գործունեությունը՝ խստորեն պահպանելով դրանց տնտեսական և պետական ինքնիշխանությունն ու անվտանգությունը միջազգային մաքսային համագործակցության ոլորտում: Պետության արտաքին տնտեսական գոր-

ծունեության արդյունավետ կազմակերպմանը մեծապես աջակցում են մաքսային մարմինները, որոնց գործունեության իրավասության հիմքում ընկած է ներպետական տնտեսական օրենսդրությունը, ինչպես նաև միջազգային առևտրային կապերը կարգավորող պայմանագրերն ու համաձայնագրերը:

Պետությունների միջև առկա ազատ տնտեսական հարաբերությունները, որպես տնտեսական զարգացման արդյունավետ ուղիներ, չեն կարող լինել լիովին անկախ՝ առանց պետական միջամտության: Պետության կողմից տնտեսական հարաբերությունների կարգավորման հիմնական գործիքներից մեկը մաքսային քաղաքականությունն է:

Մաքսային քաղաքականության իրականացման հիմնական միջոցներն են *մաքսային հսկողությունը, մաքսային ձևակերպումը, սակագնային և ոչ սակագնային կարգավորման միջոցները*¹:

Մաքսային հսկողության գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով կիրառվում է ինչպես ընտրողականության սկզբունքը, այնպես էլ ռիսկերի կառավարման համակարգը: Համաձայն ՀՀ մաքսային օրենսգրքի 148 հոդվածի՝ ՀՀ ներմուծվող և ՀՀ-ից արտահանվող ապրանքները տարածաշրջանային մաքսատան և մաքսային կետի կողմից կարող են առանց զննման բաց թողնվել²: Այսինքն՝

1. Տես՝ «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենք՝ ՀՕ-241-Ն՝ ընդունված 17.12.2014 թ., ուժի մեջ է մտել 02.01.2015: ՀՀ ՊՏ 2014.12.30/76(1089).1 Հոդ.1253.30:
2. Տես՝ ՀՀ մաքսային օրենսգրքը ՀՕ-83, ընդունված 06.07.2000, ուժի մեջ է: 01.01.2001, ՀՀ ՊՏ 2000.08.21/19(117):

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 118 2020

ՀՀ ներմուծվող և ՀՀ-ից արտահանվող ապրանքների նկատմամբ կիրառվում է ընտրողականության սկզբունքը: Մաքսային հսկողության ձևերի ընտրությունը կարող է կախված լինել մաքսային տարածք ներմուծվող ապրանքների բնույթից և մաքսային արժեքից, ինչպես նաև մաքսային ռեժիմի տեսակից:

Օրինակ՝ համաձայն դիվանագիտական հարաբերությունների մասին Վիեննայի կոնվենցիայի՝ ՀՀ-ում օտարերկրյա պետությունների դիվանագիտական ներկայացուցիչների ղեկավարները, ինչպես նաև իրենց հավասարեցված անձինք ազատվում են մաքսային զննման բոլոր ձևերից՝ ներառյալ անձնական զննումը, եթե այդ անձինք հատում են սահմանը պաշտոնական գործերով³:

Միության մաքսային տարածք ներմուծման ժամանակ՝ մաքսային սահմանն անցնելու, իսկ արտահանման ժամանակ՝ մաքսային հայտարարագրի գրանցման պահից ապրանքները մաքսային հսկողության ներքո են: ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 311-րդ հոդվածի համաձայն՝ մաքսային հսկողություն իրականացվում է համապատասխան գոտում, ինչպես նաև մաքսային մարմինների կողմից սահմանվող այլ վայրերում, որտեղ գտնվում են ապրանքներ, տրանսպորտային միջոցներ և դրանց վերաբերյալ տվյալներ պարունակող փաստաթղթեր, այդ թվում՝ էլեկտրոնային⁴: Մաքսային հսկողության գոտիներ են մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման վայրերը, ժամանակավոր պահման, ինչպես նաև մաքսային պահեստների, անմաքս առևտրի խանութների տարածքները կամ ԵԱՏՄ անդամ պետությունների

օրենսդրություններով սահմանված այլ վայրեր⁵:

Միաժամանակ, ՀՀ սահմանով մաքսային հսկողության ներքո ապրանքներ և տրանսպորտային միջոցներ տեղափոխող կամ այլ գործունեություն ծավալող անձինք պարտավոր են մաքսային մարմիններ ներկայացնել մաքսային հսկողություն իրականացնելուն անհրաժեշտ փաստաթղթեր և տեղեկություններ, որոնց ցանկը և տրամադրման կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը⁶:

Արտաքին առևտրի մասնակիցների գործողությունների համալիրում չափազանց կարևոր է ապրանքների՝ սահմաններով տեղաշարժվելու գործընթացը: ԱՀԿ-ին⁷ անդամակցությամբ ՀՀ կառավարությունը փորձել է այդ մասնակիցների համար ստեղծել այնպիսի պայմաններ, որ տեղական ապրանքները մյուս երկրների մաքսային սահմանը հատելիս չհանդիպեն հովանավորչական դրսևորումների: Միաժամանակ, ապրանքների՝ սահմանի հատումը հանգեցնում է ներքին տնտեսական հետևանքի՝ հարկային պարտավորությունների առաջացման:

Ուստի, արտաքին առևտրի մասնակցի գործունեությունը, որպես ձեռնարկատիրական գործունեության բաղկացուցիչ, մտնում է հարկման դաշտ, որտեղ ելակետային *հասկացությունն ապրանքների «մաքսային արժեքն»* է: Վերոնշյալ խնդիրների լուծմանն են ուղղված «ապրանքների մաքսային արժեք» հասկացության և վերջինիս բաղադրատարրերի օրենսդրական սահմանումները և պատահական չէ, որ բավականին երկար ժամանակ ապրանքների ընդհանուր արժեքը և մաքսային արժեքը տնտեսա-

3. Տես՝ «Վիեննայի կոնվենցիա» 18.04.1961, <http://www.irtek.am/views/act.aspx?aid=37357>:

4. ԵԱՏՄ մաքսային օրենսգրքը, ընդունված 11.04.2017 , ուժի մեջ է մտել 01.01.2018, ՀՀ ՊՏ 2018.03.12/17(1375).1:

5. Տես Գրիգորյան Ռ. Լ., Մաքսային գործ, ուսումնական ձեռնարկ, Երևան, 2012 թ.:

6. Տես՝ ՀՀ կառավարության 2003 թ. նոյեմբերի 21-ի՝ «Մաքսային հսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ու տեղեկությունների ցանկերը և դրանք մաքսային մարմիններին տրամադրելու կարգը սահմանելու մասին» N 1779-Ն որոշում:

7. Առևտրի համաշխարհային կազմակերպությունը ստեղծվել է Առևտրի համաշխարհային կազմակերպության ստեղծման մարաքեշի 15.04.1994 թ. համաձայնագրի հիման վրա: <http://www.irtek.am/views/act.aspx?aid=53826>.

գետների ուսումնասիրման առարկան են եղել⁸: Հայտնի են մաքսային արժեքի երկու հիմնական տեսություններ՝ արժեքի աշխատանքի տեսություն (օբյեկտիվ արժեքի տեսություն) և մարգինալ օգտակարության տեսություն⁹ (սուբյեկտիվ արժեքի տեսություն):

Ըստ օբյեկտիվ արժեքի տեսության՝ (օբյեկտիվ տեսության արժեքի) ապրանքի արժեքը սահմանվում է որպես դրա արտադրության վրա ծախսված ծախսերի գումար¹⁰: Այս տեսության հեղինակներն են Դ. Ռիկարդոն, Ա. Սմիթը:

Սուբյեկտիվ արժեքի տեսությունը (արժեքի սուբյեկտիվ տեսությունը) ապրանքների արժեքը բացատրում և մեկնաբանում է որպես ապրանքների օգտակարության վերաբերյալ գնորդի (սպառողի) մոտ առկա տնտեսական հոգեբանության տեսանկյունից¹¹: Այս տեսության հիմնադիրներն են Ուիլյամ Ջևոնսը, Կարլ Մենգերը և Լեոն Վալրասը:

Ներկայումս ձևավորվել է կարծիք այն մասին, որ օբյեկտիվ արժեքի և սուբյեկտիվ արժեքի տեսությունները սերտորեն կապված են և փոխադարձաբար լրացնում են միմյանց:

Հարկ է նշել, որ ապրանքների մաքսային արժեքի որոշման կանոնները զգալիորեն տարբերվում են ապրանքների սովորական արժեքը որոշման կանոններից: Մաքսային արժեքը պարտադիր չէ, որ հավասար լինի ապրանքների փաստացի, իրական արժեքին: Կախված արտաքին

առևտրային գործարքի պայմաններից՝ մաքսային արժեքը կարող է լինել ապրանքների իրական արժեքից ավելին կամ պակաս:

Ելնելով վերոնշյալից՝ ապրանքների մաքսային արժեքը մաքսային-իրավական հարաբերությունների առանցքային տարրերից է, որը բխում է ապրանքների մաքսային սահմանը տեղափոխելուց: Այսինքն՝ Միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը որոշվում է, եթե Միության մաքսային տարածք ներմուծվելիս ապրանքները հատել են Միության մաքսային սահմանը և այդ ապրանքները հայտարարագրվել և մաքսայի ձևակերպում են ստացել «մաքսային տարանցում», «մաքսային պահեստ», «ոչնչացում», «հրաժարում՝ հօգուտ պետության» մաքսային ընթացակարգերից տարբերվող մաքսային ընթացակարգով:

Մաքսային արժեքի որոշման կանոններն ու սկզբունքները հաշվի առնելուց առաջ անհրաժեշտ է, նախևառաջ, ուսումնասիրել դրան պատակը և գործառույթները:

Մաքսային արժեքի հիմնական նպատակը մաքսատուրքերի և հարկերի հաշվարկման հիմք հանդիսանալն է: Որոշ աղբյուրներ շեշտում են, որ մաքսային արժեքը հենց հարկային բազան է, բայց որոշ հեղինակներ հերքում են մաքսային արժեքի հարկային բնույթի փաստը¹²:

Բացի այդ, մաքսային արժեքը մեծ դեր է խաղում հարկաբյուջետային գործառույթի ապահովման գործում, քանի որ այն

8. Stu' Жантасова Ю. С., Экономические аспекты определения таможенной стоимости товаров, научные труды Северо-Западного института управления, 2013, т. 4, № 1 (8), с. 125.

9. Օգտակարությունը ապրանքների սեփականությունն է մարդու կարիքները բավարարելու համար: Մարգինալ օգտակարությունը այն օգուտն է կամ բավարարվածությունը, որը սուբյեկտը ստանում է այն բանի դեպքում, երբ նա սպառում է լրացուցիչ բարիք: Այսինքն՝ մարգինալ օգտակարությունը կարելի է բնութագրել որպես ընդհանուր օգտակարությանը ածանցյալ:

10. Stu' «Теория ценообразования А.Смита и Рикардо» реферат 2005:

11. Stu' И. А. Шумпетер. История экономического анализа. Часть IV. С 1870 по 1914 г. (и далее) - Приложение к главе 7. Заметка о теории полезности, пер. с англ. под ред. В.С. Автономова, 2001 г.:

12. Stu' Д. В. Чермянинов ТАМОЖЕННОЕ ПРАВО, Допущено Учебно-методическим советом по образованию в области юриспруденции Уральского федерального округа на базе ФГБОУ ВО «Уральский государственный юридический университет» в качестве учебника для студентов высших учебных заведений, обучающихся по направлению «Юриспруденция» 5-е издание, 2016, 228:

ուղղակիորեն ազդում է բյուջե փոխանցված մաքսատուրքերի և հարկերի քանակի վրա և հիմք է հանդիսանում մաքսային գործարքների համար գանձվող մաքսատուրքերի չափերի որոշման համար: Հարկ է նշել, որ մաքսային արժեքը հիմք է հանդիսանում մաքսային վճարների չափերի հստակեցման, այլ ոչ վերջիններիս հաշվարկման համար:

Որպես կանոն՝ մաքսային արժեքն օգտագործվում է արտաքին առևտրի գործառնությունների վերաբերյալ վիճակագրության կազմման, արժույթային վերահսկողության իրականացման, արժեքային քվոտաների ճիշտ կիրառման մոնիտորինգի համապատասխանության հստակեցման, ինչպես նաև բորսայական գործարքների համարժեքության վերահսկման համար¹³:

Շատ հեղինակներ պնդում են մաքսային արժեքի՝ որպես մաքսային վճարների հաշվարկման հիմք լինելու հանգամանքը՝ դիտարկելով այն որպես առանձնահատկություն՝ Միության մաքսային տարածքով ապրանքների տեղափոխման ժամանակ մաքսային մարմինների կողմից մաքսատուրքերի, ակցիզային հարկերի և ԱԱՀ-ի գանձման համար¹⁴:

Ինչպես տեսնում ենք, մաքսատուրքերը հաշվարկվում են՝ ելնելով ապրանքների մաքսային արժեքից: Ապրանքների մաքսային արժեքն անկախ վաճառողի, գնորդի միջև բաց շուկայում ձևավորված գինն է՝ ըստ որի ապրանքները կարելի է վաճառել նշանակման երկրում՝ մաքսային հայտարարագիր գրանցելու և տնտեսվարող սուբյեկտին այն տալու պահին: Այսինքն՝ մաքսային վճարների հաշվարկման հիմքում մաքսային արժեքն է:

Անդրադառնալով 2003 թվականի մայիսի 28-ի Ռուսաստանի Դաշնության մաք-

սային օրենսգրքի 322-րդ հոդվածի վերլուծությանը¹⁵՝ հարկ ենք համարում նշել, որ համաձայն սույն հոդվածի՝ ապրանքների մաքսային արժեքը հարկային բազան է՝ մաքսատուրքերը և հարկերը հաշվարկելու համար¹⁶: Այսինքն՝ ռուսական օրենդրությունը անդրադարձել է մաքսային արժեքի կարևորությանը և դիտարկել որպես հիմք մաքսային վճարների հաշվարկման համար, միաժամանակ մաքսային արժեքը համարել հարկային բազայի հատուկ տեսակ, որն օգտագործվում է միայն մաքսային կարգավորման մեջ:

Ինչպես տեսնում ենք, այս հարցի շուրջ բավականին հակասական կարծիքներ են առկա և հետևաբար, անհրաժեշտություն է առաջանում պարզաբանել ինչ է մաքսային արժեքը և մաքսային արժեքը հիմք է հանդիսանում մաքսային վճարների չափերի հստակեցման, թե մաքսային վճարների հաշվարկման համար:

Մեր կարծիքով, հիշյալ դրույթի բովանդակությունն առավել ամբողջական ընկալելու համար անհրաժեշտ է հանգամանալից և մանրամասն վերլուծության առարկա դարձնել «մաքսային արժեքի» հասկացության թվանդակությունը կազմող բաղադրիչների վերհանման համատեքստում, որոնք ամրագրված են «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 73-րդ հոդվածով: *Մասնավորապես, նշված հոդվածի համաձայն՝ Մաքսային արժեքը ներառում է՝*

1) *արտահանման երկրում ապրանքներ ձեռք բերելու գինը,*

2) *մինչև Հայաստանի Հանրապետության սահմանը ապրանքների տեղափոխման համար կատարված փոխադրման, բեռնման, բեռնաթափման, փոխաբեռնման, ապահովագրման և համանման այլ ծախսեր,*

13. Տե՛ս Яблочков Т. М., Учебник русского гражданского судопроизводства, Ярославль, 1910, էջ 326:

14. Տե՛ս Панкова О. В., Принципы административного судопроизводства и проблемы их реализации в судах общей юрисдикции/ Международный экспертный семинар «Роль административной юстиции в защите прав человека», Москва, 2010, էջ 77.

15. Տե՛ս Kramer U., Hinrichsen T., German Law of Administrative Court Procedure: an Overview, 2015թ., էջ 2050-2061.

3) մինչև Հայաստանի Հանրապետության սահմանը ապրանքների տեղափոխման համար կատարված կոմիսիոն և միջնորդային (բրոքերային) ծախսերը, բացառությամբ ապրանքներ ձեռք բերելու համար կատարված կոմիսիոն և միջնորդային (բրոքերային) ծախսերի,

4) Հայաստանի Հանրապետության սահմանով արտահանվող ապրանքների արտադրության և մատակարարման նպատակով գնորդի կողմից մատակարարին անհատույց կամ մասնակի հատուցմամբ, ուղղակի կամ անուղղակի տրամադրված՝ արտահանվող ապրանքներով համապատասխանաբար բաշխված՝ ա. ապրանքների մեջ ներառված նյութերի, բաղադրամասերի և համանման այլ առարկաների արժեքը, բ. ապրանքների արտադրության մեջ օգտագործվող գործիքների և համանման այլ առարկաների օգտագործման արժեքը, գ. ապրանքների արտադրության մեջ սպառված նյութերի արժեքը, դ. ապրանքների արտադրության համար անհրաժեշտ և, ներմուծման երկրից բացի, այլ երկրում իրականացված ճարտարագիտական, ձեվավորման, նախագծման և համանման այլ աշխատանքների արժեքը,

5) գնորդի կողմից ապրանքների վաճառքի անհրաժեշտ պայման հանդիսացող ռոյալթիների և թույլտվությունների դիմաց մատակարարին ուղղակի կամ անուղղակի վճարված կամ վճարման ենթակա վճարները,

6) տարայի, փաթեթի և փաթեթավորման աշխատանքների արժեքը,

7) Հայաստանի Հանրապետության սահմանով արտահանվող ապրանքների հետագա վաճառքի, օգտագործման կամ տնօրինման դիմաց գնորդի կողմից մատակարարին վճարման ենթակա գումարները:

Ուսումնասիրելով միջազգային փորձը

և համադրելով ՀՀ-ում գործող օրենսդրության հետ, ինչպես նաև «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի բովանդակային-համադրված վերլուծությունից ուղղակիորեն բխում է, որ Հայաստանի Հանրապետությունում մաքսային գործի իրավական կարգավորումը կազմակերպող իրավական ակտում հստակեցված չէ մաքսային արժեքի հասկացությունը և կոնկրետ հարցի կարգավորում դեռևս ամրագրված չէ. վերջինիս նկատմամբ կիրառելի են անդամ պետության մաքսային օրենսդրության դրույթները:

Ուշագրավ է նաև այն իրողությունը, որ ԵՏՀ կոլեգիայի՝ 2018 թվականի հոկտեմբերի 16-ի «Մաքսային արժեքի հայտարարագրի լրացման դեպքերի մասին և մաքսային արժեքի հայտարարագրի ձևերն ու մաքսային արժեքի հայտարարագրի լրացման կարգը հաստատելու մասին» թիվ 160 որոշման 2-րդ կետի համաձայն՝ մաքսային արժեքի հայտարարագիրը լրացվում է ապրանքների հայտարարագրում հայտագրված՝ ապրանքների մաքսային արժեքի վերաբերյալ տեղեկություններում փոփոխություններ (լրացումներ) կատարելու դեպքում՝ կապված բացառապես տեխնիկական սխալների (վրիպակների, թվաբանական սխալների՝ այդ թվում արժույթի փոխարժեքի սխալ կիրառման պատճառով) հայտնաբերման հետ, եթե ապրանքների մաքսային հայտարարագրման ժամանակ մաքսային արժեքի հայտարարագիրը լրացվել է¹⁶:

Այսինքն՝ Հանձնաժողովի կողմից սահմանված դեպքերում լրացվում է մաքսային արժեքի հայտարարագիր, որտեղ ներկայացվում են տեղեկություններ ապրանքների մաքսային արժեքի, այդ թվում՝ ապրանքների մաքսային արժեքի սահմանման մեթոդի մասին:

16. Տես՝ ԵՏՀ 16.10.2018 թ. «Մաքսային արժեքի հայտարարագրի լրացման դեպքերի մասին և մաքսային արժեքի հայտարարագրի ձևերն ու մաքսային արժեքի հայտարարագրի լրացման կարգը հաստատելու մասին» թիվ 160 որոշումը:

Մինչդեռ, ԵԱՏՄ մաքսային օրենսգրքով սահմանված իրավակարգավորումը հիմնվում է այն սկզբունքի վրա, որ մաքսային արժեքի հայտարարագիրը ապրանքների հայտարարագրի համար պարտադիր է և անբաժանելի:

ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 105-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մաքսային արժեքի հայտարարագիրն ապրանքների հայտարարագրի անբաժանելի մասն է:

Կարծում ենք, որ քննարկվող խնդրի պատշաճ իրավակարգավորումն ունի չափազանց կարևոր նշանակություն Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսդրությամբ գործնականում առաջացող տարաբնույթ խնդիրներին ողջամիտ լուծում տալու անհրաժեշտությամբ պայմանավորված: Ասվածն առավել արդիական է թվում հատկապես այն իրողության հաշվառմամբ, որ մաքսային իրավունքի ոլորտում կոնկրետ խնդրի իրավակարգավորման հնարավորության մասին վերլուծություններում միշտ չէ, որ առաջնային քննարկման առարկա է դառնում այն հարցադրումը, թե՞ իրավական տեսակետից նշված հարցը հնարավոր է արդյո՞ք կարգավորել ներպետական մակարդակում, թե՞ արդեն իսկ այն կարգավորված է Միության իրավասության շրջանակներում:

Ակներև է նաև, որ նշված պարագայում Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսդրությամբ և «Մաքսային կարգավորման մասին» օրենքով կարգավորում չի տրվել և, մեր համոզմամբ, նման պայմաններում օբյեկտիվ անհրաժեշտություն է առաջանում պարզաբանել՝ ի վերջո մաքսային արժեքի հայտարարագիրն ապրանքների հայտարարագրի անբաժանելի մասն է, թե՞ մաքսային արժեքի հայտարարագրում լրացվում է տեղեկության ապրանքների մաքսային արժեքի մասին:

Ապրանքների մաքսային արժեքի վերահսկման ժամանակ առաջացող մյուս կարևորագույն խնդիրը գնի վերաբերյալ տեղեկատվության հիմնավոր աղբյուրի որոնումն է՝ գործարքի գումարը հաստատելու համար¹⁷: Մաքսային մարմիններին հասանելի տեղեկատվության աղբյուրները միշտ չէ, որ հնարավորություն են տալիս միանշանակ որոշել պայմանագրի գնի հուսալիությունը, և, հետևաբար, ապրանքների մաքսային արժեքը¹⁸: Շատ հաճախ հատուկ ապրանքատեսակների գների վերաբերյալ տեղեկատվությունը մատչելի չէ/բավականին դժվար է որոշել (օրինակ՝ մեկ օրինակով տեղափոխված տեխնոլոգիական սարքավորումների հայտարարված արժեքի ճշգրտությունը, կամ ՀՀ ներմուծված որոշ ապրանքատեսակների դեղորայքի մաքսային արժեքը): Այսինքն՝ ներմուծվող ապրանքատեսակների մաքսային արժեքի որոշման և արժեքի հատկացման դեպքում մաքսային մարմինը բազմիցս դժվարություններ է ունենում տեղեկատվության սղության հետևանքով: *Արդյունքում՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների չհայտարարագրման ժամանակ, երբ անհրաժեշտություն է առաջանում որոշել ներմուծված ապրանքի մաքսային արժեքը և գնի վերաբերյալ մաքսային մարմնում տեղեկատվության բացակայության արդյունքում վարչական իրավախախտման վերաբերյալ գործ քննելիս մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է որոշումներ, որոնց օրինականությունը կասկածի տակ են դրվում, ուստի խախտվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված վարչարարության օրինականության սկզբունքը՝ համաձայն որի վարչական մարմինները պար-*

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 118 2020

17. Տե՛ս Гиблов А. А. Порядок расчета таможенной стоимости / А. А. Гиблов // Аудит. ведомости. — 2008. — № 6. — С. 80—82.
 18. Տե՛ս Таможенный тариф Российской Федерации : ставки ввозных и вывозных таможенных пошлин / Рос. таможенная акад. ; [под общ. ред. В. Б. Бобкова]. — СПб. : Тирекс, 2007. — 816 с. — (ТаможняЛогистика-Право).

տավոր են հետևել օրինականության պահպանմանը:

Միաժամանակ մաքսային արժեքի հսկողության արդյունքում ոչ հավաստի հայտարարագրման հատկանիշները, ինչպես նաև այդ հատկանիշների առկայության դեպքում, հայտարարատուից մաքսային արժեքի հսկողության նպատակով պահանջվող լրացուցիչ փաստաթղթերի ցանկը սահմանված է ԵՏՀ 27.03.2018 թ. թիվ 42 որոշմամբ¹⁹:

Այսինքն՝ ապրանքների մաքսային արժեքի հսկողություն իրականացնելիս կիրառվում է մաքսային մարմնի տրամադրության տակ եղած տեղեկատվությունը, որն առավելագույնս համադրելի է ներմուծվող ապրանքների առնչությամբ առկա տեղեկությունների հետ՝ ներառյալ ուսումնասիրվող գործարքի պայմանների եւ հանգամանքների, ներմուծվող ապրանքների ֆիզիկական բնութագրերի, որակի ու համբավի մասին տեղեկությունները, այդ թվում նաև նույնական, համանման ապրանքների, միևնույն դասի կամ տեսակի ապրանքների հետ կատարվող գործարքների մասին տեղեկատվությունը, որն ստացվել է մաքսային մարմինների տեղեկատվական ռեսուրսների օգտագործմամբ, ինչպես նաև բորսայական գնանշումների, բորսայական ինդեքսների մասին տեղեկատվությունը, գնային կատալոգներից ստացված տեղեկությունները: Միևնույն ժամանակ արտաքին տնտեսական գործունեության մասնակիցները նույնպես պետք է շահագրգռված լինեն մաքսային մարմինների տեղեկատվության հուսալի աղբյուրների առկայությամբ, որոնք թույլ են տալիս արագ և արդյունավետ վերահսկել

մաքսային արժեքը:

